



Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

60

ՀԱՐՑ

ԱՐԲԻՏՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Երևան 2024

60 ՀԱՐՑ

ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ

(ՁԵՌՆԱՐԿ)

Սույն ձեռնարկը հրապարակվել է Արբիտրաժի և հաշտարարության
հայաստանյան կենտրոնի կողմից



Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 2 4

ՅՏԴ 347.918(07)
ԳՄԴ 67.410.12g7
Ա 855

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն,
«60 հարց արբիտրաժի մասին», 1-ին խմբագրությամբ - Երևան, 2024 - 135 էջ:

Խմբագիր՝
Աշոտ Մկրյան

Գեղարվեստական ձևավորումը և էջադրումը՝
Նորայր Բաղդասարյանի

«60 հարց արբիտրաժի մասին» ձեռնարկը նպատակ ունի ծառայելու որպես համապարփակ ուղեցույց արբիտրաժի ոլորտին առնչվող ամենից տարածված հարցերի մեկնաբանման համար:

Վերջին տասնամյակներում արբիտրաժը դարձել է դատական նիստե՛ դահլիճից դուրս վեճերի լուծման հանրաճանաչ եղանակ՝ առաջարկելով ճկունություն, գաղտնիություն, արդյունավետություն և մի շարք այլ առավելություններ: Այսուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունում և մի շարք այլ իրավասություններում արբիտրաժի կիրառությունը առաջ է բերել դրա՝ որպես վեճերի լուծման նորարարական և այլընտրանքային եղանակի հանգամանակից ուսումնասիրության անհրաժեշտության, որին էլ ծառայում է սույն ձեռնարկը:

Ներկա հրատարակությունը բազմակողմանիորեն անդրադառնում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են, օրինակ, արբիտրաժի էությունը, առավելությունները, գործընթացի առանձնահատկությունները, ընթացակարգը, արբիտրունակությունը, ոլորտին վերաբերող հիմնական աղբյուրները:

Ձեռնարկը կառուցված է հարց ու պատասխանի ձևաչափով, ինչն առավել հեշտացնում է նյութի ընթերցանությունը և անհրաժեշտ տեղեկության արագ որոնումը: Հարցերից յուրաքանչյուրն անդրադառնում է արբիտրաժի առանձին ասպեկտի՝ հիմունքներից մինչև ոլորտի վերջին զարգացումներ: Նախատեսված է արբիտրաժի ոլորտի մասնագետների, իրավաբանների, փաստաբանների, ուսանողների և վեճերի այլընտրանքային լուծմամբ հետաքրքրված այլ շահագրգիռ կողմերի համար:

ISBN 978-9939-1-1823-9 ISBN 978- 9939-1-1823-9



© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն (AMCA), 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 8**
- ՆԱԽԱԲԱՆ..... 10**
- ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ.....12**
- 1. Ի՞նչ է վեճերի այլընտրանքային լուծումը (ՎԱԼ).....14
- 2. Ի՞նչ է հաշտարարությունը..... 16
- 3. Ի՞նչ է պարտադիր հաշտարարությունը.....17
- 4. Ի՞նչ է արբիտրաժը..... 18
- 5. Ո՞րն է արբիտրաժի կարևորությունը.....20
- 6. Ինչպե՞ս է արբիտրաժը փոխկապակցված երկրի ներդրումային միջավայրի բարելավմանը.....21
- 7. Որո՞նք են արբիտրաժի առավելությունները.....23
- 8. Ինչո՞վ է տարբերվում արբիտրաժային վարույթը դատականից..... 26
- 9. Ի՞նչ է ad hoc արբիտրաժը..... 28
- 10. Ի՞նչ է ինստիտուցիոնալ արբիտրաժը, և որո՞նք են ինստիտուցիոնալ և ad hoc արբիտրաժների տարբերությունները..... 29
- 11. Որո՞նք են ինստիտուցիոնալ արբիտրաժի առավելությունները.....31
- 12. Ինչպիսի՞ն է ինստիտուցիոնալ արբիտրաժի զարգացման համաշխարհային պատմական ուղին, և որո՞նք են ամենահայտնի արբիտրաժային կենտրոնները.....34
- 13. Արբիտրաժային ռ՞ր գործերն են համարվում միջազգային.....37
- 14. Ո՞ր վեճերը կարող են քննվել արբիտրաժի միջոցով..... 39
- 15. Ովքե՞ր կարող են դիմել արբիտրաժային կարգով վեճը լուծելու համար.....41
- 16. Ի՞նչ է արբիտրաժային համաձայնությունը.....42
- 17. Ինչպե՞ս պետք է կնքվի արբիտրաժային համաձայնությունը.....43
- 18. Ինչպիսի՞ն կարող է լինել արբիտրաժային պարզ համաձայնությունը..... 44
- 19. Արբիտրաժային համաձայնության վավերականությունը.....45
- 20. Ինչպե՞ս դիմել AMCA՝ արբիտրաժի միջոցով վեճը լուծելու համար.....47
- 21. Ի՞նչ չափանիշներ պետք է բավարարի Արբիտրաժ իրականացնելու պահանջը AMCA դիմելիս.....48
- 22. Ինչպե՞ս է ձևավորվում արբիտրաժային տրիբունալը AMCA դիմելիս.....49

23. Ո՛վ կարող է լինել արքիտր.....	52
24. Ինչպե՛ս են երաշխավորվում արքիտրի անկախությունը և անկողմնակալությունը .	53
25. Ո՛ր դեպքերում և ինչպե՛ս կարելի է արքիտրին բացարկ ներկայացնել.....	54
26. Ի՞նչ է արքիտրաժային վարույթը, և ի՞նչ ընթացակարգով են քննվում գործերը.....	56
27. Ինչպիսի՞ն է վարույթը ընդհանուր ընթացակարգով քննության դեպքում.....	57
28. Ինչպե՛ս է գործն ընդհանուր ընթացակարգով քննվում AMCA-ում.....	58
29. Ի՞նչ նշանակություն ունի քննության ընթացակարգի արձանագրությունը ընդհանուր ընթացակարգով քննվող արքիտրաժային վարույթում.....	60
30. Ի՞նչ է արագացված ընթացակարգը, ինչպե՛ս և ե՛րբ է այն կիրառվում.....	62
31. Որո՞նք են արագացված և ընդհանուր ընթացակարգերի տարբերությունները.....	63
32. Ինչպե՛ս է ապահովվում գաղտնիությունը արքիտրաժային վարույթում.....	65
33. Արդյո՞ք արքիտրաժային վարույթում կարող են կիրառվել հայցի ապահովման և արտակարգ միջոցներ.....	66
34. Ո՛ր դեպքերում կարող է ավարտվել արքիտրաժային վարույթը.....	68
35. Ի՞նչ են ներառում արքիտրաժային ծախսերը.....	69
36. Ի՞նչպե՛ս են հաշվարկվում արքիտրաժային ծախսերը AMCA Արքիտրաժային կանոններով.....	70
37. Ինչպե՛ս է կազմվում արքիտրաժային վճիռը.....	74
38. Ին՞չ պահանջներ է ներկայացվում արքիտրաժային վճռին.....	75
39. Ինչպե՛ս են կատարվում արքիտրաժային վճիռները.....	77
40. Արքիտրաժային ո՞ր վճիռներով է հնարավոր ուղղակիորեն դիմել ՀԿԱԾ՝ կատարման համար.....	78
41. Ինչպե՛ս են կատարվում 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող տեղական գործերով արքիտրաժային վճիռները.....	79
42. Ինչպե՛ս են կատարվում տեղական այլ գործերով և օտարերկրյա արքիտրաժային վճիռները.....	81
43. Ո՛ր դեպքերում կարող են չեղյալ ճանաչվել արքիտրաժային վճիռները.....	84
44. Ի՞նչ կարգով կարող են չեղյալ ճանաչվել արքիտրաժային վճիռները.....	85
45. Որո՞նք են արքիտրաժային վարույթի դատական աջակցության վարույթները.....	87
46. Ո՛ր հարաբերություններն են կարգավորվում «Առևտրային արքիտրաժի մասին» օրենքով.....	90
47. Արքիտրաժին առնչվող դատական և հարկադիր կատարման վարույթները ո՞ր օրենսդրությամբ են կարգավորվում.....	92
48. Լայն կիրառում ստացած ինչպիսի՞ ներպետական նախադեպային որոշումներ կան արքիտրաժի ոլորտում.....	93

49. Ինչպիսի՞ն է դատական պրակտիկան Հայաստանում արբիտրաժի ոլորտում.....	95
50. Ո՞րն է «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման» մասին Նյու Յորքի կոնվենցիայի դերը.....	97
51. Ի՞նչ է UNCITRAL-ը.....	100
52. Որո՞նք են արբիտրաժի ոլորտում այլ հիմնարար միջազգային փաստաթղթերը, և ի՞նչ կարևորություն ունեն դրանք	101
53. Որքանո՞վ են կիրառելի միջազգային նախադեպերը արբիտրաժում.....	102
54. Արբիտրաժային վճիռների կատարմանը վերաբերող կարևոր նախադեպեր.....	104
55. Արբիտրաժային համաձայնություններին և արբիտրի ընտրությանը վերաբերող կարևոր նախադեպեր	105
56. Արբիտրների նշանակման կարգին վերաբերող կարևոր նախադեպեր.....	106
57. Արբիտրաժային համաձայնությունների վավերականության հարցին վերաբերող կարևոր նախադեպեր	107
58. Արբիտրաժային համաձայնության բաժանելիության սկզբունքին վերաբերող կարևոր նախադեպեր	108
59. Պայմանագրի վավերականությանը վերաբերող կարևոր նախադեպեր.....	108
60. Կիրառելի իրավունքի որոշմանը վերաբերող կարևոր նախադեպեր.....	110
ՎԵՐՋԱԲԱՆ	113
ԱԿՆԱՐԿ.....	115
ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՆՏՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ	
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի հիմնադիրները, կառուցվածքը և արբիտրները	115
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի առաքելությունը, նպատակները, գործունեության ուղղություններն ու բացառիկությունը	120
Հավելված 1.....	126
Արբիտրաժ իրականացնելու պահանջի օրինակելի ձև	126

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը (այսուհետ՝ նաև «Կենտրոն» կամ «AMCA»), նպատակ ունենալով արբիտրաժային առաջատար հաստատություններից մեկը դառնալու ոչ միայն Հայաստանում, այլև տարածաշրջանում, իր հիմնական գործունեությանը զուգահեռ, կարևորում է հանրային իրազեկվածության բարձրացումն արբիտրաժի և հաշտարարության վերաբերյալ՝ ապահովելով որակյալ, ճշգրիտ, հիմնավորված և հանրամատչելի տեղեկության տրամադրում:

Սույն ձեռնարկը նպատակ ունի ոչ մասնագիտական լսարանին ներկայացնելու արբիտրաժը և հաշտարարությունը որպես վեճերի այլընտրանքային լուծման եղանակներ, ընդգծելու դրանց առավելությունները, հանրամատչելի լեզվով ներկայացնելու այն նվազագույն տեղեկությունը, որը տնտեսվարողներին ու ոլորտով հետաքրքրված անձանց հնարավորություն կտա ընդհանուր պատկերացում կազմելու արբիտրաժի, արբիտրաժային համաձայնություններին ներկայացվող պահանջների, արբիտրաժի հիմնական առանձնահատկությունների, սկզբունքների, Կենտրոնում քննվող վեճերի շրջանակի, արբիտրաժային տրիբունալի կայացրած վճիռների կատարման կարգի, արբիտրաժի ընթացքում դատարանների դերի, արբիտրաժային վարույթում գործածվող հիմնական փաստաթղթերի և այլ հարցերի վերաբերյալ: Մինևսույն ժամանակ, սույն ձեռնարկը հակիրճ անդրադարձ է կատարում հաշտարարությանը՝ պատասխանելով այն հիմնական հարցերին, որոնք անհրաժեշտ են վեճերի լուծման այս եղանակի մասին համապարփակ պատկերացում կազմելու համար:

Պատմականորեն ապացուցված է, որ տնտեսական աճն ու ներդրումների ծավալի մեծացումն ուղղակիորեն պայմանավորված են այնպիսի գործոններով, ինչպիսիք են սվյալ երկրում արդարադատության մատչելիությունն ու արագությունը, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների առկայությունը և դրանց արդյունավետությունը, այդ եղանակների ճկունությունը և կայացված վճիռների կատարման հնարավորությունն ու արագությունը: Հարկ է նկատել, որ իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմներ ունեցող իրավական համակարգը օտարերկրյա ներդրողների և ներպետական տնտեսվարողների համար ստեղծում է ապահով ու կանխատեսելի միջավայր՝ նպաստելով գործարարության ակտիվության մակարդակի բարձրացմանը: Հայաստանում տնտեսական կայուն ակտիվությունն ու զարգացումը թելադրում են վեճերի լուծման ճկուն ու արագ մեխանիզմների՝ վեճերի այլընտրանքային լուծման եղանակների կիրառություն և զարգացում:

Մինևսույն ժամանակ, Հայաստանում դատական համակարգի գերծանրաբեռնվածությունը հաճախ ժամանակավրեպ է դարձնում վեճերի լուծումը և արդարադատության իրականացումը: Այս խնդրի լուծման լավագույն ճանապարհներից մեկը ինստիտուցիոնալ արբիտրաժի կայացումն ու զարգացումն է, որը հեռանկարում կդառնա վեճերի լուծ-

ման ցանկալի ու լայնորեն կիրառվող եղանակ արագության, մասնագիտացվածության, պարզեցված ու հարմար ընթացակարգերի, էլեկտրոնային գործիքակազմի լայն կիրառման ու մի շարք այլ առավելությունների շնորհիվ, որոնց ներկայացմանն է ուղղված սույն ձեռնարկը:

ՆԱԽԱԲԱՆ

Վեճերի այլընտրանքային լուծման եղանակների զարգացումն արդարադատության արդյունավետության մակարդակի բարձրացման կարևոր գործիքներից է, ինչը ամրագրված է Նաև ՀՀ դատախիզանական բարեփոխումների ռազմավարություններում¹: Արբիտրաժը որպես վեճերի այլընտրանքային լուծման եղանակներից մեկը, միջազգային կիրառելիությամբ ապացուցել է վեճերի լուծման տեսանկյունից իր արդյունավետությունն ու կարևորությունը:

Արբիտրաժը վեճերի լուծման եղանակ է, որում արբիտրաժային տրիբունալը կոչված է առանց անհարկի ձգձգումների և ծախսերի արդարացիորեն լուծելու վեճերը՝ վեճի կողմերի ընտրած օրենսդրության, կիրառելի կանոնների և ընթացակարգերի համաձայն: Արբիտրաժ կարող են իրականացնել թե՛ մշտապես գործող հաստատությունները (ինստիտուցիոնալ արբիտրաժ), թե՛ միայն կոնկրետ վեճի լուծման համար ստեղծված արբիտրաժային տրիբունալը (ad hoc արբիտրաժ):

Մշտապես գործող արբիտրաժային հաստատությունների թվում է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը: Կենտրոնում կարող են քննվել ամենատարբեր ոլորտների վերաբերող ինչպես տեղական, այնպես էլ միջազգային բնույթի վեճեր: Դրանք կարող են ներառել հետևյալ ոլորտները՝ առևտրային, կորպորատիվ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, հեռահաղորդակցություն, էներգետիկա, կառուցապատում, հանքարդյունաբերություն, ֆինանսաբանկային, սպորտային, աշխատանքային, մտավոր սեփականություն ևն:

Վեճը թե՛ մշտապես գործող հաստատությունների, թե՛ ad hoc արբիտրաժին հանձնելու համար անհրաժեշտ է ունենալ արբիտրաժային համաձայնություն: Այն կարող է կնքվել ինչպես նախապես, օրինակ՝ պայմանագրի կնքման ժամանակ որպես առանձին դրույթ (արբիտրաժային վերապահում), այնպես էլ վեճի առաջացումից հետո (արբիտրաժային համաձայնություն): Օրենքով, արբիտրաժային հաստատությունների կանոններով ու միջազգային իրավական ակտերով՝ նման համաձայնություններին ներկայացվում են որոշակի պահանջներ, ինչին մանրամասն կանոնադաշտնանք սույն ձեռնարկում:

Հայաստանում արբիտրաժին առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով և այլ իրավական ակտերով: «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը մշակվել է Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) մոդելային օրենքի հիման վրա, ինչն ապահովում է օրենսդրության մոտարկումը ՄԱԿ-ի անդամ մյուս երկրների

¹ ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. ծրագիր, Ասիական զարգացման բանկի՝ Երկրի գործընկերության 2024-2028 թթ. ռազմավարության նախագիծ, ԵՄ «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» բյուջետային աջակցության ծրագիր:

ազգային կարգավորումներին, հետևաբար նաև արբիտրաժային հաստատությունների վճիռների ճանաչման ու կատարման ժամանակ նվազեցնում ազգային կարգավորումների տարբերություններով պայմանավորված խոչընդոտների առաջացումը:

Դեռևս 1997 թվականից Հայաստանը միացել է «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիային, որի հիման վրա ՀՀ-ում ճանաչվում են կոնվենցիայի անդամ երկրների արբիտրաժային որոշումները, իսկ ՀՀ արբիտրաժային որոշումները համապատասխանաբար ճանաչվում և կատարվում են մնացյալ 172 անդամ պետությունների տարածքում:

ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ

ԱԱՄԻՆ (անգլ.՝ ICCA), Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ: Միջազգային հասարակական կազմակերպություն է: Հիմնադրվել է 1961 թ.: Խորհրդի գործունեությունն ուղղված է արբիտրաժը և վեճերի այլընտրանքային լուծման այլ եղանակները բարելավելուն:

ԱՐԲԻՏՐԱԺ, դատարանից դուրս վեճերի լուծման եղանակ, որում արբիտրաժային տրիբունալը կոչված է առանց անհարկի ձգձգումների և ծախսերի լուծելու վեճը:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ կամ **ԿԱՆՈՆՆԵՐ**, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Հոգաբարձուների խորհրդի 2023 թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ հաստատված կանոնները:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ, միանձնյա արբիտր կամ կենտ թվով արբիտրների կազմ (եռակազմ, առանձնակի դեպքերում հինգ հոգուց բաղկացած):

ԱՐԲԻՏՐԱԺԻ և ՀԱՆՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (անգլ. հապ.՝ AMCA), Հայաստանի Հանրապետությունում մշտապես գործող արբիտրաժային կենտրոն: Հիմնադրվել է 2023 թ.: Առաջարկում է արբիտրաժի և հաշտարարության ծառայություններ տեղական և միջազգային գործերով:

AD HOC ԱՐԲԻՏՐԱԺ, ոչ մշտական, հատուկ կարգով ու նպատակով իրականացվող արբիտրաժ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, մշտապես գործող արբիտրաժային կենտրոնի ղեկավարը: AMCA-ում այս պաշտոնը ստանձնում է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի տնօրենը, որը նաև համակարգում է քարտուղարության աշխատանքը:

ԴԱՏԱՐԱՆ, պետության դատական համակարգի մաս կազմող մարմին կամ դատարան:

ԼՐԱՅՈՒՑԻՉ ԿՈՂՄ, հայցվորից և պատասխանողից բացի՝ արբիտրաժային գործում ներգրավված այլ անձ (կամ անձինք), որոնց իրավունքներին կամ պարտականություններին առնչվում է արբիտրաժային գործը:

ԿՈՂՄ կամ **ԿՈՂՄԵՐ**, արբիտրաժային գործում ներգրավված հայցվորը, պատասխանողը, լրացուցիչ կողմը:

ՀԱՅՑՎՈՐ, ֆիզիկական կամ իրավաբանական անձ (կամ անձինք), որ պահանջ է ներկայացնում պատասխանողի դեմ՝ նախաձեռնելով արբիտրաժային գործընթաց:

ՀՎԱԾ, ՀՀ արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն:

ՄԱԿ (անգլ.՝ UN), Միավորված ազգերի կազմակերպություն:

ՅՈՒՆՍԻՏՐԱԼ (անգլ.՝ UNCITRAL), ՄԱԿ-ի միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողով:

ՈՐՈՇՈՒՄ, արբիտրաժային տրիբունալի կայացրած որոշումը:

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ, ֆիզիկական կամ իրավաբանական անձ (կամ անձինք), որի դեմ հայցվորը ներկայացնում է Արբիտրաժ իրականացնելու պահանջ:

ՎՃԻՌ, արբիտրաժային տրիբունալի կայացրած միջանկյալ, մասնակի, վերջնական կամ լրացուցիչ վճիռը:

ՔԱՐՏՈՂԱՐՈՒԹՅՈՒՆ, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի աշխատակազմը, որը Գլխավոր քարտուղարի ղեկավարմամբ իրականացնում է արբիտրաժային կամ հաշտարարության գործի վարում:

ՕՐ, ձեռնարկում և Արբիտրաժային կանոններում նշանակում է օրացուցային օր, եթե ուղղակիորեն նշված չէ՝ բանկային օր, աշխատանքային օր կամ այլ եղանակով հաշվարկվող օր:

1. ԻՆչ Ե ՎԵՃԵՐԻ ԱՅՂՆՍՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ (ՎԱԼ)

Վեճերի այլընտրանքային լուծումը ենթադրում է դատարանից դուրս վեճերի լուծում: Վեճերի այլընտրանքային լուծման եղանակները կողմերի ընտրությամբ կիրառվող վեճերի լուծման միջազգայնորեն հայտնի հետևյալ միջոցներն են՝ արբիտրաժ, հաշտարարություն, կոնսիլիացիա (անգլ.՝ conciliation), բանակցություններ, որոնց բնորոշ է կողմերի ազատ կամահայտնությունը, գործընթացի ճկունությունը, վեճը լուծելու համար ներգրավված անձանց պատրաստվածությունը կոնֆլիկտի կառավարման հարցերում, վեճի լուծման եղանակի արագությունը և վեճի առարկայի տեսանկյունից մասնագիտացվածությունը:

Ամբողջ աշխարհում վեճերի այլընտրանքային լուծման եղանակների կիրառությունը տարեցտարի աճում է: Այսպես, դիտարկենք որոշ նշանավոր միջազգային արբիտրաժային կենտրոնների արբիտրաժային գործերի քանակի դինամիկան հասկանալու համար արբիտրաժի դերը՝ որպես ՎԱԼ եղանակ:

Միջազգային առևտրային պալատի (անգլ. հապ.՝ ICC) արբիտրաժային դատարանը 1990-ականներին ունեցել է տարեկան 300-ից ավելի արբիտրաժային գործեր: Այս թիվը հաջորդ տասնամյակում հասել է ավելի քան 600-ի, 2020-ին՝ 946-ի: Կարևոր է ընդգծել, որ նշված արբիտրաժային գործերի մեծ մասը միջազգային վեճեր են, որոնք վերաբերում են խոշոր չափերի հայցագների:

Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնը (անգլ. հապ.՝ SIAC) ստեղծվել է 1991 թ. կառուցապատման, մատակարարման, բանկային և ապահովագրության ոլորտի վեճեր քննելու համար, սակայն, տարիների ընթացքում պահանջարկի աճով պայմանավորված, էականորեն լայնացրել է կենտրոնում քննության ենթակա վեճերի շրջանակը: SIAC-ի՝ որպես արագ զարգացող արբիտրաժային կենտրոնի աճը կարելի է տեսնել հետևյալ պատկերում. 2015 թ. SIAC մուտք է արվել 271, 2016 թ.՝ 343, 2017 թ.՝ 452, 2020 թ.՝ 1080 արբիտրաժային գործ:

Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում (անգլ. հապ.՝ LCIA) 2008-2018 թթ. տարեկան գրանցվել են շուրջ 300, իսկ 2019-2020 թթ.՝ ավելի քան 400 արբիտրաժային գործեր:


Ամերիկյան արբիտրաժային ասոցիացիան (անգլ. հապ.՝ AAA) 1997 թ. գրանցել է 11.130, իսկ 2018 թ.՝ 17.620 արբիտրաժային գործ:

Վերոնշյալ կենտրոններից յուրաքանչյուրն իր մեծ ներդրումն է ունեցել հիմնադրման երկրում ՎԱԼ եղանակների վերաբերյալ հասարակությանն իրազեկելու, որակյալ ծառայություններ մատուցելու և ՎԱԼ եղանակների կիրառելիությունը բարձրացնելու տեսանկյունից:

2023 թ. հիմնադրված Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը նպատակ ունի զարգացնելու վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմների կիրառելիությունը ՀՀ-ում և տարածաշրջանում: Կենտրոնի կանոնադրական նպատակ-

Ներև ուղղված են արբիտրաժի և հաշտարարության իրականացմանը ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային վեճերի լուծման համար:

Այսպիսով, բանակցությունները, կոնսիլիացիան, հաշտարարությունը և արբիտրաժը միջազգայնորեն հայտնի ՎԱԼ եղանակներ են, որոնց կիրառելիության ոլորտն ու ձևը զարգանում և փոփոխվում են՝ տարբեր իրավահարաբերությունների զարգացմամբ պայմանավորված:



2020-2023 թթ. նշանավոր արբիտրաժային կենտրոններում գրանցված նոր արբիտրաժային գործերի թվաքանակը պատկերող դիագրամ

Աղբյուր՝ <https://www.herbertsmithfreehills.com/notes/arbitration/2024-posts/ICC-Arbitration-Statistics-Confirm-Its-Continued-Popularity>

2. ԻՆչ Է հաշտարարությունը

Վերջին տարիներին, արբիտրաժին զուգահեռ, արագորեն զարգանում և լայն տարածում է ստանում նաև հաշտարարությունը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային եղանակ: Հաշտարարությունը գործընթաց է, որն ուղղված է կողմերի համաձայնությամբ իրենց միջև առկա վեճն անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օգնությամբ հաշտությամբ լուծելուն:

Հաշտարարությունն իրավացիորեն կարելի է համարել վեճերի ամենից արագ տեմպերով զարգացող այլընտրանքային լուծման եղանակներից մեկը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին շրջանում հաշտարարության գրանցված տարեկան գործերի թիվը գերազանցում է 170.000-ը²: Այս միտման մասին վկայում են նաև առանձին հաշտարարական ծառայություններ մատուցող հաստատությունների գրանցած ցուցանիշները: Միայն 2022-ին Վեճերի արդյունավետ լուծման կենտրոնում (CEDR, Լոնդոն) գրանցվել է ավելի քան 17.000 հաշտարարության գործ, որը շուրջ 3%-ով ավելին է, քան CEDR-ի նախահամավարական ցուցանիշները: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ կենտրոնում գրանցված հաշտարարության գործերի 64%-ը իրականացվել է առցանց եղանակով³:

Հաշտարարություն կարող է իրականացվել քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ իրավահարաբերություններից բխող վեճերով, օրինակ՝ կորպորատիվ, հասարակական կազմակերպությունների, առողջապահական, էկոլոգիական, սպորտային, առևտրային ոլորտներում: Հարկ է նկատել, որ հաշտարարությունն իրականացվում է կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկախության և անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

Հաշտարարությունը կարող է իրականացվել վեճի լուծմանը հաշտարարի կամ մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու միջոցով: Կողմերի միջև հաշտարարության շուրջ համաձայնության առկայության դեպքում վեճը կարող է հանձնվել դատարանի քննությանը հաշտարարությունն ավարտելուց հետո:

² Tang Houzhi, Worldwide Use of Mediation, link: [https://www.cityu.edu.hk/slw/adr_moot/doc/worldwide_use_of_mediation_\(by_prof_tang_houzhi\).pdf](https://www.cityu.edu.hk/slw/adr_moot/doc/worldwide_use_of_mediation_(by_prof_tang_houzhi).pdf).

³ The Tenth Mediation Audit, CEDR, 1 February 2023, link: <chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.cedr.com/wp-content/uploads/2023/02/Tenth-CEDR-Mediation-Audit-2023.pdf>.

3. ԻՆչ Է պարտադիր հաշտարարությունը

Հաշտարարության ինստիտուտի կայացմանն ու զարգացմանն ուղղված տարաբնույթ ծրագրերի շրջանակում 2022-ից Հայաստանում ներդրվել է պարտադիր հաշտարարության ինստիտուտը: Այն ենթադրում է նախքան վեճի առնչությամբ դատարան դիմելը վեճը հաշտարարության միջոցով լուծելու պարտականություն և միայն այդ եղանակով հակասությունները չկարգավորելու պարագայում դատարան դիմելու հնարավորություն: Այսպիսով, եթե օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, ապա հաշտարարության մասնակիցները պարտավոր են անցնել հաշտարարության եղանակով վեճը լուծելու գործընթաց և փորձել վեճը լուծել հաշտարարությամբ:


Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, և կողմերի միջև առկա չէ փոխադարձ համաձայնություն հաշտարարի թեկնածության շուրջ, ապա հաշտարարին նշանակում է իրավասու մարմինը՝ կողմերից մեկի դիմումի հիման վրա:

Հայաստանում նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացումը պարտադիր է հետևյալ գործերով.

- ամուսնալուծություն,
- երեխայի բնակության վայրի որոշում, ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձում,
- ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանում,
- երեխայի հետ շփմանը, երեխայի դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացում,
- երեխայի տեսակցության կարգի սահմանում,
- ամուսնական պայմանագրի փոփոխում կամ լուծում:

4. ԻՆչ է արբիտրաժը

Արբիտրաժը վեճերի այլընտրաքային լուծման եղանակ է, որում վեճի կողմերը համաձայնում են իրենց միջև առկա վեճը հանձնելու մեկ կամ մի քանի անկախ և անկողմնակալ անձի՝ արբիտր(ներ)ի: Արբիտրաժային տրիբունալի պարտականությունն է առանց անհարկի ձգձգումների լուծել կողմերի միջև առկա վեճը՝ հավասար հնարավորություն տալով վեճի կողմերին և կայացնելով վերջնական և պարտադիր ուժ ունեցող վճիռ:



Ընդունված է արբիտրաժը դասակարգել երկու հիմնական տեսակների՝ **ինստիտուցիոնալ արբիտրաժ** և **ad hoc արբիտրաժ**:

Ad hoc արբիտրաժը ստեղծում են կողմերը որևէ կոնկրետ վեճ քննելու և լուծելու համար: Այս դեպքում վեճի կողմերը կարող են որոշել վեճի քննությանը չներգրավել արբիտրաժային կենտրոնի՝ սահմանելով վեճի քննության համար սեփական ընթացակարգային կանոններ կամ միջազգայնորեն ընդունելի արբիտրաժային կանոններ (օրինակ՝ UNCITRAL-ի կանոնները): Այսօր ad hoc արբիտրաժն ամբողջ աշխարհում մեծապես իրականացվում է UNCITRAL-ի կանոնների համաձայն: Ինստիտուցիոնալ արբիտրաժի դեպքում արբիտրաժային գործը վարում է արբիտրաժային կենտրոնը՝ իր կանոնների համաձայն, եթե կողմերը չեն ընտրել այլ կանոններ:

Արբիտրաժը՝ որպես վեճերի լուծման եղանակ, ունի երկար պատմություն: Ձևավորման առաջին փուլում այն ոչ ֆորմալ գործընթաց է եղել, որում ներգրավված չեն եղել իրավաբաններ: Մարդիկ իրենց միջև առկա հակասություններն ու վեճերը լուծելու համար դիմում էին երկու կողմերի վստահությունը վայելող անաչառ անձի: Օրինակ՝ վաճառականներն ապրանքի գնի կամ որակի շուրջ վեճը հանձնում էին երրորդ վաճառականի, որի անկախությանը, անկողմնակալությանը և արդարությանը վստահում էին և հետևում նրա կայացրած որոշմանը: Այդ է պատճառը, որ ընդունված է ասել, թե արբիտ-

րաժը վաճառականների ստեղծած արդարադատության համակարգ է, որը միավորում է օրենքը և հարգանքը առևտրի նկատմամբ:

Ժամանակակից իմաստով արբիտրաժն առավելապես կիրառելի է առևտրային վեճերի լուծման համար, թեև, կախված տվյալ երկրի օրենսդրական կարգավորումներից, արբիտրաժային կարգով քննության ենթակա են նաև այն վեճերը, որոնք բխում են ոչ առևտրային իրավահարաբերություններից:

Արբիտրաժն այսօր դիտարկվում է որպես դատավարության հիմնական այլընտրանք, քանի որ առանձնանում է վեճերի լուծման ոլորտում գրանցած արդյունավետությամբ, ճկունությամբ, մասնագիտացվածությամբ և գաղտնիությամբ: Գլոբալիզացիայի պայմաններում արբիտրաժն ունի կարևոր նշանակություն, այն է՝ հանդիսանալ վեճերի լուծման եղանակ միջսահմանային գործարքների և միջազգային առևտրային հարաբերություններից ծագող վեճերի լուծման համար:

5. ՈՐՆ Է ԱՐՔԻՏՐԱԺԻ ԿԱՐԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արքիտրաժը՝ որպես վեճերի այլընտրանքային լուծման եղանակ, հնարավորություն է տալիս երաշխավորելու վեճերի արագ, մասնագիտացված և արդյունավետ լուծումը:

Տարբեր երկրներում արքիտրաժին վերաբերող օրենսդրական կարգավորումները տարբեր են: Կախված տվյալ երկրի օրենսդրությունից՝ երկրները կարող են ընկալվել որպես **արքիտրաժամետ** կամ **ոչ արքիտրաժամետ**: Այստեղ կարևոր է ընդգծել, որ գործուն արքիտրաժի առկայությունը դրական ազդեցություն է ունենում տնտեսության վրա:

Բիզնես ոլորտի զարգացման, միջազգային տնտեսական ակտիվ հարաբերությունների առկայության պայմաններում անխուսափելի են տարաբնույթ իրավական վեճերը: Այդ վեճերի լուծման համար երկրում արքիտրաժամետ իրավական դաշտի առկայությունը տնտեսվարողներին հնարավորություն է տալիս խուսափելու գերծանրաբեռնված դատական համակարգից, նախապատվություն տալու արագ, մասնագիտացված, անկախ արքիտրաժին:

Բացի այդ՝ միջազգային պրակտիկայում ընդունված է այն պնդումը, որ արքիտրաժային ոլորտի արդյունավետ իրավական կարգավորումը և արքիտրաժի պատշաճ իրականացումը ուղղակիորեն նպաստում են տվյալ երկրում միջազգային ներդրումների ավելացմանը: Այսօր օտարերկրյա ներդրողներն ավելի հակված են արքիտրաժամետ օրենսդրությամբ երկրներում ներդրումներ կատարելու: Սա, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված է նրանով, որ վեճի կողմերը, տվյալ դեպքում օտարերկրյա ներդրողը, վստահում է արքիտրաժին: Թափանցիկ և արդյունավետ արքիտրաժային գործընթացը ներդրողներին վստահություն է ներշնչում առ այն, որ ներդրում ընդունող երկրում առանց խոչընդոտների կաշտպանվեն իրենց պայմանագրային իրավունքներն ու կապիտալը, իսկ վեճերի առաջացման դեպքում դրանք կստանան արագ, հուսալի և արդյունավետ լուծում անկախ ու անկողմնակալ արքիտրոից:

Արքիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման այլ եղանակների կիրառելիությունը նպաստում է դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը՝ ապահովելով առավել արագ և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացում այն անձանց համար, որոնք գերադասում են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության դատական եղանակը:

Գլոբալիզացված աշխարհում արքիտրաժը կարևոր գործիք է, որը հեշտացնում է միջազգային առևտրային գործարքների կնքումը՝ ապահովելով գործուն մեխանիզմ միջառնամասային վեճերը լուծելու համար: Այն կարևոր նախապայման է օտարերկրյա տնտեսվարողների համար իրենց բիզնես գործունեությունը պլանավորելու առումով: Այսպիսով, արքիտրաժի գործուն կարգավորումների առկայությունը նպաստում է նաև առևտրաշրջանառության ծավալների ավելացմանն ու տնտեսական համագործակցությանը:

6. Ինչպե՞ս է արբիտրաժը փոխկապակցված երկրի ներդրումային միջավայրի բարելավմանը

Օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմում են համաշխարհային տնտեսության մեծ չափաբաժինը: 2019 թ. անդրսահմանային ներդրումների շրջանառությունը գերազանցել է տարեկան 1,54 տրիլիոն ԱՄՆ դոլարը: Անկախ ձևից՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները ենթադրում են որոշակի ռիսկեր ներդրումը կատարողի համար: Այդ ռիսկերը պայմանավորված են ընդունող պետության քաղաքական անկանոն դաշտով, տվյալ պետության իրավական և տնտեսական համակարգերով:

Ներդրումների խթանման միջավայրի կարևորագույն բաղադրիչներից մեկը վեճերի լուծման արդյունավետ և մատչելի (ոչ միայն ֆինանսական տեսանկյունից) մեխանիզմների առկայությունն է: Սա, որպես կանոն, մտնում է գնահատման ենթակա հավասական ռիսկերի մեջ, և ներդրողները պարտադիր հաշվի են առնում, թե ինչ պետք է անեն, եթե տվյալ երկրի գործընկերները չկատարեն իրենց պարտավորությունները: Սովորաբար տեղական դատարանները դիտարկվում են որպես ոչ գրավիչ և վեճը լուծելու համար բավականին ժամանակատար տարբերակ: Բացի այդ՝ առկա է նաև տեղեկության հրապարակման ռիսկ: Այդ իսկ պատճառով օտարերկրյա ներդրողները հաճախ դիտարկում են վեճերի լուծման վստահելի և այլընտրանքային տարբերակները, որոնցից առավել կիրառելին միջազգային արբիտրաժն է⁴:

Օտարերկրյա ուղղակի ներդրողների տեսանկյունից կարևոր է ունենալ վեճերի լուծման անաչառ, իրապես անկախ հարթակ ներդրումն ընդունող պետության և ներդրողի միջև վեճերը լուծելու համար: Արբիտրաժը որպես այդպիսի եղանակ, ենթադրում է նաև անհրաժեշտ գործիքակազմ: Օրինակ՝ վեճի կողմերին հնարավորություն է տալիս ընտրելու արբիտրաժի լեզուն, կիրառելի օրենսդրությունը, վեճը քննող արբիտրներին, բացի այդ՝ ապահովում է վարույթի գաղտնիությունը: Երկրում արբիտրաժ կիրառելու հնարավորություն նախատեսելը էական առավելություն է օտարերկրյա ներդրողների ներգրավելու և դրանով տնտեսությունը զարգացնելու համար, քանի որ ներդրողները կունենան գործող մեխանիզմ իրենց իրավունքների պաշտպանության համար, ինչն էականորեն կնվազեցնի իրենց ռիսկերը:

Ինչպես ցույց են տալիս բազմաթիվ ուսումնասիրություններ, արբիտրաժային հաստատությունների զարգացմանը զուգընթաց՝ դրանց գտնվելու երկրներում գրանցվում է ներդրումների (նաև՝ օտարերկրյա) կայուն աճ, բարձրանում է ՀՆԱ-ի մակարդակը, աշխուժանում է առևտրաշրջանառությունը: Հատկանշական է, որ Համաշխարհային բանկի 2012-ին հրապարակված 100 երկրների տնտեսությունների վերաբերյալ ուսումնասիրությունը պարզել է, որ վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմների զարգա-

⁴ Walter Mattli, 2001. “Private Justice in a Global Economy: from Litigation to Arbitration.” Cambridge University Press.


ցած չլինելը օտարերկրյա ուղղակի ներդրումների համար լուրջ խոչընդոտ է լինում: Օտարերկրյա ներդրողները արբիտրաժը դիտարկում են որպես ռիսկերը մեղմելու միջոց, ինչն իրենց համար կարող է ապահովել իրավական որոշակիություն⁵: Նմանատիպ հետազոտությունները բազմաթիվ են. դրանք վկայում են, որ արբիտրաժի կայացմանն ու զարգացմանն ուղղված քայլերը առանցքային կարևորություն ունեն երկրների տնտեսական աճի համար: Այստեղ կարևոր է նաև ինստիտուցիոնալ արբիտրաժների դերը, որոնք նպաստում են հասարակության, տնտեսվարողների՝ ՎԱԼ ոլորտի վերաբերյալ գիտելիքի մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև ոլորտի զարգացմանը: Զարգացող առևտրային հարաբերություններ ունեցող երկրներում գործում են բազմաթիվ ինստիտուցիոնալ արբիտրաժային հաստատություններ, որոնք իրավասու են քննելու ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային վեճեր: Միայն Չինաստանում դրանց թիվն անցնում է 250-ը:

⁵ Pouget, Sophie. “Arbitrating and mediating disputes: Benchmarking arbitration and mediation regimes for commercial disputes related to foreign direct investment.” World Bank Policy Research Working Paper 6632, 2013: <https://documents1.worldbank.org/curated/en/554271468340163221/pdf/WPS6632.pdf>.

7. Որո՞նք են արբիտրաժի առավելությունները

Արբիտրաժը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային եղանակ, ունի մի շարք հատկանիշներ, որոնք ձևավորում են նրան ներհատուկ առավելությունները:

ՅԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Արբիտրաժին ներհատուկ որոշ առավելություններ արտացոլող գծապատկեր

Արբիտրաժին բնորոշ կարևորագույն հատկանիշներից մեկը կողմերի ինքնավարության բարձր մակարդակն է: Այն ենթադրում է, որ կողմերն են որոշում իրենց միջև առկա կամ հնարավոր վեճի լուծման եղանակը և կարգը: Նրանք ներգրավված են վեճի լուծման գործընթացի գրեթե բոլոր փուլերում, մասնավորապես՝ ընտրում են վեճի լուծման ընթացակարգային կանոնները, լեզուն, կիրառելի իրավունքը, վեճը քննող արբիտրներին, իրավասու են վեճը քննող արբիտրներին պահանջներ առաջադրելու և: Մինևույն ժամանակ, արբիտրաժը քաղաքացիական շրջանառության մասնակիցներին առաջարկում է վեճերի լուծման առավել ճկուն գործիքներ՝ ի տարբերություն դատական վարույթի, որը ենթադրում է առավել խիստ, անփոփոխելի և ֆորմալ կարգավորումներ:

Անդրադառնալով արբիտրաժի առավելություններին՝ հարկ է նկատել, որ արբիտրաժային վարույթի շրջանակում կայացվող վճիռը վերջնական է և կողմերի համար պարտադիր: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են սպառիչ դեպքեր, որոնց դեպքում միայն կարող է արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչվել: Արբիտրաժային վճիռը վերջնականությունը կողմերի համար ապահովում է որոշակիություն և կանխատեսելիություն:

Մեկ այլ առավելություն է արբիտրաժային վճիռների միջազգային կատարման արդյունավետ կառուցակարգերի առկայությունը: Դրա ձևավորմանը մեծապես նպաստել է

«Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թ. կոնվենցիան, որը շուրջ 170 պետություն վավերացրել է. դրանց թվում նաև Հայաստանն է: ՀՀ ներպետական օրենսդրությունը, Նյու Յորքի կոնվենցիայի վավերացումից զատ, այս հարցը կարգավորել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով:

Ինչ վերաբերում է ներպետական արբիտրաժային վճիռներին, ապա դրանց կատարման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են դյուրին ընթացակարգեր: Օրինակ, «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, մշտապես գործող արբիտրաժային հաստատությունը էլեկտրոնային հաղորդագրության միջոցով արբիտրաժային տրիբունալի վճիռը հարկադիր կատարման համար կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը, եթե արբիտրաժի վճռով բռնագանձման ենթակա գումարի չափը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը:

Արբիտրաժի կարևորագույն առավելությունների թվում է վարույթի գաղտնիությունը: Արբիտրաժն ունի մասնավոր բնույթ, և միջազգայնորեն ընդունելի է այն դիրքորոշումը, որ եթե պայմանագրի կողմերը ցանկանում են գաղտնի պահել պայմանագիրը և պայմանագրից բխող իրավահարաբերությունները, ապա դրանցից ծագող վեճը նույնպես պետք է ունենա գաղտնիության պահպանման միևնույն հնարավորությունը: Վեճերի լուծման գաղտնիությունը առանձնահատուկ կարևորություն ունի մի շարք հարաբերություններում: Հատկապես երբ անհրաժեշտ է չբացահայտել վեճի առկայության հանգամանքը, վեճի առարկան ինքնին հրապարակման ենթակա չէ (օրինակ՝ «know-how»-ն մտավոր սեփականության հարաբերություններում), և անհրաժեշտ է վեճը լուծելուց հետո պահպանել գործարար կամ այլ հարաբերություններ:

Ի տարբերություն դատական վարույթի՝ արբիտրաժը զգալիորեն արագ է և հաճախ առավել մատչելի: Դրա ապացույցն է այն, որ հաճախ դատական կարգով վեճերի լուծումը կարող է տևել տարիներ՝ կողմերի համար ստեղծելով մի շարք լրացուցիչ ծախսեր:



Այժմ ամփոփ թվենք արբիտրաժի առավելությունները.

- արբիտրների ընտրելու իրավունքը,
- վեճերի լուծման արագությունն ու ժամկետների կանխատեսելիությունը,
- ձևական ընթացակարգերի սահմանափակ լինելը,
- կիրառելի իրավունքի ընտրության ազատությունը,
- վարույթի լեզուն ընտրելու իրավունքը,
- վարույթի գաղտնիությունը,
- արբիտրաժային վճիռների վերջնական լինելը,
- արբիտրաժային վճիռների միջազգային ճանաչման ու կատարման արդյունավետ մեխանիզմների առկայությունը,

- ծախսվող ռեսուրսների կանխատեսելիությունն ու որոշակիությունը,
- վեճերի լուծման գործընթացում ոլորտային մասնագետների ներգրավման հնարավորությունը:

Ինստիտուցիոնալ արբիտրաժի դեպքում դրանց ավելանում են մի շարք նորերը: Օրինակ՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնն արբիտրաժային գործեր վարելիս հետևյալ առավելություններն է տալիս.

- անվճար խորհրդատվություն,
- արբիտրաժին առնչվող փաստաթղթերի ձևերի տրամադրում,
- Էլեկտրոնային հաղորդակցության, ծանուցումների հնարավորություն,
- արբիտրաժի աշխատանքներին աջակցող բարձրակարգ ու մրցունակ թիմ,
- արբիտրաժային առցանց նիստերի վարման հնարավորություն,
- գործերի էլեկտրոնային կառավարման համակարգ,
- 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջով արբիտրաժային տրիբունալի վճիռը հարկադիր կատարման համար Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը ներկայացում,
- աջակցություն արբիտրաժային վարույթի բոլոր փուլերում:

8. Ինչո՞վ է տարբերվում արբիտրաժային վարույթը դատականից



Համեմատական օրինակ. «Արբիտրաժային լուծմեր և դատավարություն»

Դատական համակարգի միջոցով վեճերի լուծման հասնելը շատ հաճախ կարող է խրթին դառնալ, քանի որ նրան հատուկ են մի շարք բնութագրիչներ.

- գործերի երկարատև քննություն ու դրանց տևողության կանխատեսելիության անհնարինություն,
- գործերի շրջապտույտ դատական եռաստիճան համակարգով, որի պայմաններում վերադաս ատյանները մի քանի տարի տևած գործը կարող են վերադարձնել առաջին ատյան՝ նոր քննության,
- նեղ մասնագիտացած դատավորների բացակայություն,
- դատավարության թղթային ընթացակարգեր ու դրանց ներկայացվող ձևական խիստ պահանջներ,
- անհատական մոտեցման բացառում,
- դատավարության հայերեն վարման, ինչպես նաև դատարան ներկայացվող բոլոր փաստաթղթերի հայերեն պատշաճ թարգմանության պարտադիրություն,
- վարույթների հրապարակայնություն (եթե չկան օրենքով սահմանված դռնփակ դատական նիստ անցկացնելու հիմքեր), որն առևտրային վեճերով բարձր ռիսկայնություն ունի,
- դատական ծախսերի անկանխատեսելիություն ևն:

Այսպիսով, արբիտրաժի և ազգային դատարանի՝ որպես վեճերի լուծման եղանակների ուսումնասիրությամբ կարող ենք առանձնացնել մի շարք տարբերություններ: Արբիտրաժային վարույթի հիմնական տարբերությունը դատականից առաջինի ճկունությունն է: Այսինքն՝ եթե դատավարությունը կանոնակարգող օրենսդրությունն ունի հստակ կարգավորումներ (օրինակ՝ դատավարության լեզու, կիրառելի իրավունք, ժամկետներ), որոնք ենթակա չեն փոփոխման, ապա արբիտրաժային կարգով վեճը լուծելիս կողմերը կարող են որոշել ու սահմանել գործի քննության ամբողջ ընթացակարգը: Այս

Էական տարբերությունն ակնհայտորեն երևում է ad hoc արբիտրաժում, որտեղ վեճի կողմերը կարող են ամենայն մանրամասնությամբ կարգավորել իրենց միջև վեճի լուծման ընթացակարգը:

Եթե դատական կարգով վեճերի քննության դեպքում ընդհանուր կանոնը դռնբացությունն է, ապա արբիտրաժի պարագայում գաղտնիությունն է, որը կարող է փոփոխվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Վարույթների տարբերությունների մասին խոսելիս կարևոր է ընդգծել, որ արբիտրաժում կողմերն իրավունք ունեն մասնակցելու վեճը քննող անձանց՝ արբիտրների ընտրության փուլին, ինչը ենթադրում է վեճի քննությանը ոլորտային, նեղ մասնագիտացում ունեցող անձանց ներգրավում, որոնք վայելում են կողմերի վստահությունը: Ի տարբերություն արբիտրաժի՝ ազգային դատարաններում (ինչպես՝ ՀՀ) ինքնաշխատ համակարգը կարող է ընտրել դատավորին՝ պատահականության սկզբունքով. այդպես ապահովվում է անկողմնակալությունը, սակայն ոչ միշտ նեղ մասնագիտական գիտելիքների տիրապետելը: Արբիտրաժի դեպքում կողմերը կարող են ընտրել նեղ մասնագիտացմամբ, փորձառու արբիտրների, որոնք ունեն բավարար հմտություն վեճը քննելու:

Վերջին տարբերությունը վերաբերում է վճիռների բողոքարկմանը: Երբ արբիտրաժային վճիռները ենթակա են բողոքարկման միայն օրենսդրությամբ նախատեսված սահմանափակ դեպքերում, դատական կարգով վճիռների (մեծ մասամբ) եռաստիճան բողոքարկման իրավունքի իրացումը կանոն է :

9. ԻՆչ է ad hoc արբիտրաժը

Ինչպես արդեն նշվել է, արբիտրաժն ունի երկու հիմնական տեսակներ՝ ad hoc և ինստիտուցիոնալ: **Ad hoc արբիտրաժի** մեխանիզմը ստեղծված է հատուկ կարգով վեճի լուծման համար: Այն դեպքում, երբ կողմերը չեն ընտրել ինստիտուցիոնալ արբիտրաժ, արբիտրաժը ad hoc է: Ad hoc արբիտրաժ նախատեսելիս կողմերը համաձայնեցնում են արբիտրաժի գործընթացը սկսելու, արբիտրներ նշանակելու և ընթացակարգային այլ հարցեր: Այն դեպքում, երբ կողմերը ընտրել են ad hoc արբիտրաժ և չեն կարգավորել ընթացակարգային հարցերը, սովորաբար դրանք կարգավորվում են արբիտրաժի գտնվելու վայրի օրենսդրությամբ:

Ad hoc արբիտրաժը նախաձեռնվում է, երբ կողմերի միջև ծագում է վեճ, և գործում է մինչև ստեղծման նպատակի իրագործումը՝ տվյալ վեճի լուծումը: Ad hoc արբիտրաժի դեպքում վեճի կողմերն են ընտրում ինչպես արբիտր(ներ)ին, այնպես էլ այն կանոնները, որի համաձայն՝ վեճը ենթակա է լուծման: Միևնույն ժամանակ, ad hoc արբիտրաժները, որպես կանոն, չունեն վարույթի իրականացման հստակ վայր, քարտուղարություն և օժանդակող թիմ: Չկա հստակ վիճակագրություն, թե տարեկան քանի ad hoc արբիտրաժային գործ է քննվում, սակայն, Առևտրային արբիտրաժային կենտրոնների միջազգային ֆեդերացիայի (անգլ. հաս.՝ IFCAI) հրապարակած տվյալների համաձայն, տարեկան քննվում են 2.000-ից ավելի արբիտրաժային գործեր:

Եթե ընդհանրացնենք, ապա ad hoc արբիտրաժի դեպքում վեճի կողմերը դառնում են նախ այդ արբիտրաժի ստեղծողներն ու կանոնակարգողները, ապա պարտավորվում կատարել արբիտրաժի կայացրած որոշումները: Օրինակ՝ եթե բեռնափոխադրման պայմանագրով առաջացած վեճով կողմերը որոշել են դիմել ad hoc արբիտրաժ, ապա ստիպված կլինեն քննարկել ու պատասխանել մի շարք հարցերի. ո՞վ կամ ովքե՞ր են լինելու արբիտր(ներ)ը, ի՞նչ ընթացակարգով և կանոններով է քննվելու վեճը, ո՞ր օրենսդրությունն է կիրառվելու վեճի նկատմամբ, որտե՞ղ ու ի՞նչ եղանակով են տեղի ունենալու լսումները ևն:

10. ԻՆչ է ինստիտուցիոնալ արբիտրաժը, և որո՞նք են ինստիտուցիոնալ և ad hoc արբիտրաժների տարբերությունները

Արբիտրաժի երկու հիմնական տեսակներից հաջորդը **ինստիտուցիոնալ արբիտրաժն** է, որն ունի առավել մեծ տարածում: Այն ենթադրում է մշտապես գործող հաստատությունների միջոցով արբիտրաժի իրականացում: Ինստիտուցիոնալ արբիտրաժն ունի գործունեության մշտական վայր, կարող է ունենալ բաց կամ փակ արբիտրների ցանկ, հրապարակված արբիտրաժային կանոններ և կանոնակարգեր, քարտուղարություն, աջակցող աշխատակազմ և գործի վարման համար անհրաժեշտ այլ գործիքակազմեր: Կառուցվածքային տեսանկյունից ինստիտուցիոնալ արբիտրաժը նման է դատարանին:

Կողմերը պայմանագրում կամ վեճը ծագելուց հետո արբիտրաժային համաձայնության մեջ արբիտրաժային կենտրոն ընտրելիս պետք է ուսումնասիրեն կենտրոնի արբիտրաժային կանոնները, տեխնիկական հագեցվածությունը, առաջարկվող աջակցությունը և այլ հարցեր:

Չարկ է նշել, որ կան արբիտրաժային կենտրոններ, որոնք քննում են կոնկրետ ոլորտի վեճեր, օրինակ՝ Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնը (անգլ. հապ.՝ ICSID)՝ Ներդրումային, Սպորտային արբիտրաժային դատարանը (անգլ. հապ.՝ CAS)՝ սպորտային վեճերի ուղղվածությամբ:



Ձախ կողմի պատկերում ներկայացված է Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնի գլխադասային գրասենյակը Վաշինգտոնում: Աջ կողմի պատկերում Սպորտային արբիտրաժային դատարանն է, որը գտնվում է Շվեյցարիայի Լոզան քաղաքում:

Ինստիտուցիոնալ արբիտրաժային կենտրոնների թիվը աննախադեպ արագությամբ մեծանում է ամբողջ աշխարհում: Գոյություն ունեցող հին կենտրոնների կողքին

ստեղծվում են նորերը (օրինակ՝ 2023 թ. ստեղծված Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը), որոնք առաջարկում են ՎԱԼ ծառայություններ:

ԻՆՏԵՏՆՈՒՑԻՈՆԱԼ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՆ.



Միջազգային առևտրային պալատի արբիտրաժային դատարանը (անգլ. հապ.՝ ICC), որը ստեղծվել է 1923 թ. և ունի ավելի քան 10.000 արբիտրաժային գործ: Այսօր ICC-ն ամենահայտնի արբիտրաժային կենտրոններից է:



Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանը (անգլ. հապ.՝ LCIA) գրանցված ամենահին արբիտրաժային կենտրոնն է. հիմնադրվել է 1893 թ.:



Ամերիկայի արբիտրաժային ասոցիացիան (անգլ. հապ.՝ AAA), որը վստահաբար ունի արբիտրաժային գործերի ամենամեծ քանակը՝ տարեկան շուրջ 200.000 արբիտրաժային գործ, որոնցից 640-ը՝ միջազգային տարրով:



Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնը (անգլ. հապ.՝ SIAC), որն ամենաարագ զարգացող արբիտրաժային կենտրոններից մեկն է աշխարհում:

11. Որո՞նք են ինստիտուցիոնալ արբիտրաժի առավելությունները

Ինստիտուցիոնալ արբիտրաժային հաստատությունների վարած գործերով արբիտրաժը ունի մի շարք էական առավելություններ: Նախ և առաջ՝ գտնվելու վայրի առկայությունը, որը կողմերի համար հեշտացնում է լուսմներին մասնակցությունը, ապահովում տեխնիկական ու նախապատրաստական աշխատանքների կատարումը, գրագրությունը: AMCA-ն, ստեղծված լինելով որպես ինստիտուցիոնալ արբիտրաժ, ունի վեճի լուծման համար անհրաժեշտ տեխնիկական և օժանդակ այլ տեսակի հագեցվածությամբ դահլիճ, գաղտնի հանդիպումների կազմակերպման համար ծայրամասերում աշխատասենյակ, մշտապես գործող աշխատակազմ, որի գործառույթներից է արբիտրների ու վեճի կողմերի աշխատանքի կազմակերպման համար տեղում անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Հաջորդ առավելությունն արբիտրների ընտրության կարգն է, վեճի լուծման համար անհրաժեշտ կանոնների ու ընթացակարգերի առկայությունը, որը կողմերին նախ ազատում է վեճի դեպքում դրանք համաձայնեցնելու պարտականությունից, երկրորդ՝ երաշխավորում, որ կողմերը, օրինակ, չընտրելով արբիտր կամ ձգձգելով ընթացակարգերի համաձայնեցումը, չխանգարեն վարույթին: Քիչ են լինում դեպքեր, երբ կողմերը նախապես կարգավորում են ad hoc արբիտրաժին առնչվող բոլոր հարցերը՝ արբիտրների ընտրության մանրամասն կարգը, ընթացակարգային կանոնները, վեճերի կամ անհամաձայնությունների հաղթահարման մեխանիզմները ևն: Նման հարցերի կարգավորման կամ խնդիրների առկայության դեպքում ad hoc արբիտրաժի մասնակիցները ստիպված են լինում, օրինակ, դիմել դատարաններ: Դրան հակառակ՝ ինստիտուցիոնալ արբիտրաժային հաստատությունները, ունենալով կառուցվածքային ինստիտուտներ ու կանոնակարգեր, կարողանում են սեփական միջոցներով ու ընթացակարգերով հաղթահարել վերը նշված խոչընդոտները ու նվազագույնի հասցնել կամ իսպառ բացառել աջակցման վարույթի շրջանակում դատարան դիմելու դեպքերը:

Դրա ամենավառ օրինակներից է արբիտրների ընտրության հարցում կողմերի անհամաձայնությունը: Օրինակ՝ Արբիտրաժային կանոններով հստակ սահմանված է կողմերի՝ արբիտր(ներ)ի ընտրելու հնարավորությունը, և եթե նրանք ինքնուրույն չեն կարողանում ընտրել արբիտր(ներ)ին, կանոններով սահմանված կարգով ու ժամկետներում արբիտրին կամ արբիտրների կազմին նշանակում է Արբիտրաժային խորհուրդը, որ բաղկացած է ոլորտում մեծ հեղինակություն վայելող օտարերկրացի և տեղացի մասնագետներից: Ad hoc արբիտրաժի դեպքում, եթե արբիտր(ներ)ի նշանակման հարցում վեճ առաջանա, կողմերը ստիպված կլինեն արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու դիմում ներկայացնել դատարան, եթե արբիտրաժային համաձայնությամբ չեն նախատեսել արբիտր(ներ) նշանակելու վերաբերյալ մանրամասն ընթացակարգ: Հաշվի առնելով նման դիմումներին ու դրանց կից՝ դատարանին ներկայացնելու ենթակա փաս-

տաթղթերի շրջանակին վերաբերող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջները՝ կողմերի համար նման դիմումի ներկայացումը կարող է ենթադրել նաև մասնագիտացված իրավաբանական ծառայություններից օգտվելու անհրաժեշտություն: Ուրեմն, կասկածի տեղիք է տալիս այն հարցը, թե արդյոք այս դեպքում նպատակը արդարացնում է միջոցները, որ ներդրվում են դրան հասնելու համար:

Հատկանշական է, որ ինստիտուցիոնալ արբիտրաժի դեպքում կողմերը ոչ թե ստիպված են լինում դիմել դատական աջակցության համար, այլ դա կարող է իրացվել որպես իրավունք կամ դիմել դատական աջակցության, երբ համաձայնությամբ մանրամասնորեն չեն կարգավորել ընթացակարգին վերաբերող բոլոր հարցերը:

Հաջորդ կարևոր առավելությունը արբիտրաժային հաստատության կատարած հաղորդակցության, ներառյալ ծանուցումների, որոշումների ուղարկման, դրանց՝ ուժի մեջ մտնելու կանոնակարգերի հստակությունն է: Նման հարցերին օրենքով տրված են ընդհանրական ձևակերպումներ, ինչը չի կարգավորում բոլոր հնարավոր դեպքերը:

Ինստիտուցիոնալ արբիտրաժի հաջորդ կարևոր առավելությունը ծախսերի կանխատեսելիությունն է՝ արբիտրաժային կայուն վճարներն ու դրանց հանրագումարի հաշվարկման հնարավորությունը: Այսպես, օրինակ, Արբիտրաժային կանոնների հավելված 7-ով հստակ սահմանված են այն բոլոր ծախսերն ու վճարները, որոնք կողմերը պետք է կատարեն՝ գործավարության ծախսեր, կանխավճար, արբիտրի վճարներ ևն, որոնք հնարավորություն են տալիս ամբողջությամբ հաշվարկելու ու կանխատեսելու վեճը Կենտրոնին հանձնելու համար անհրաժեշտ բյուջեն: Ad hoc արբիտրաժի դեպքում նման ծախսերի կանխատեսելիություն կողմերը չեն կարող ունենալ: Որպես ակնառու օրինակ բավարար է վկայակոչել լսումների համար անհրաժեշտ տարածքի վարձակալությունը, որը, գործարքի կնքմանը զուգահեռ, արբիտրաժային համաձայնության կնքման ժամանակ կանխատեսել գրեթե հնարավոր չէ: Բացի այդ, ի տարբերություն ad hoc արբիտրաժների, Կենտրոնը՝ որպես ինստիտուցիոնալ արբիտրաժ, ունենալով բանկային հաշիվներ ու վճարների կատարման ընթացակարգեր, կողմերին ազատում է արբիտրաժային ծախսերի կատարման համար հատուկ բանկային հաշիվներ բացելու կամ վճարներ կատարելու այլ մեխանիզմներ մտածելուց:

Ինստիտուցիոնալ արբիտրաժի առավելություններից հաջորդը լսումների գաղտնիությունն է: Թեև ինստիտուցիոնալ արբիտրաժների մոտեցումներն այս հարցում միասնական չեն, սակայն դրանց մեծ մասը գաղտնիության պահպանման նվազագույն երաշխիքներ է տալիս: Օրինակ՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային կանոնների 41-րդ հոդվածը նախատեսում է, որ արբիտրաժային վարույթին և վճարի առնչվող բոլոր հարցերն ու փաստաթղթերը գաղտնի պետք է պահվեն: Ad hoc արբիտրաժների դեպքում կողմերը երաշխիքների համար ստիպված են լինում նախապես կանոնակարգել այդ ամենը, անձամբ հետևել, որ արբիտրները պահպանեն գաղտնիությունը, իսկ հրապարակման դեպքում հասցեագրել խնդիրը:


Ինստիտուցիոնալ արբիտրաժի առավելություններից մեկը նաև այն է, որ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու դիմումներով գործերի վարույթներով արբիտրաժային գործին վերաբերող փաստաթղթերի (արբիտրաժի որոշում, արբիտրաժային համաձայնություն ևն) պատճենները դատարան ներկայացվելիս դրանք արբիտրաժային հաստատությունը պետք է վավերացնի, ինչը ինստիտուցիոնալ արբիտրաժի դեպքում կարելի է կազմակերպել արագ ու ոչ ֆորմալ ընթացակարգերով: Ի տարբերության ինստիտուցիոնալ արբիտրաժի՝ ad hoc արբիտրաժի դեպքում պահանջվում է փաստաթղթերի պատճենների նոտարական կարգով վավերացում, որը գործնականում ոչ միշտ է հնարավոր ստանալ առանց լրացուցիչ խոչընդոտների: Օրինակ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, ֆիզիկական անձի տված փաստաթղթի պատճենի իսկությունը նոտարը վավերացնում է, եթե փաստաթղթի վրա եղած ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը վավերացրել է նոտարը: Ուրեմն մեկ արբիտրի կազմով ստեղծված ad hoc արբիտրաժի՝ որպես ֆիզիկական անձի ստորագրած արբիտրաժային որոշման կամ վեճի կողմ ֆիզիկական անձանց արբիտրաժային համաձայնության պատճենի նոտարական կարգով վավերացումը, հետևաբար նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջի կատարումը դառնում են տեխնիկապես անհնարին:

Եզրափակելով ընդգծենք, որ ինստիտուցիոնալ արբիտրաժն առավել համակարգված է, քանի որ արբիտրաժային կենտրոններն ունեն մասնագիտացած աշխատակազմ, հաստատված արբիտրաժային կանոններ, արբիտրաժային վարույթին առնչվող ուղեցույցներ, կարգեր, ինչպես նաև տեխնիկական գործիքներ, որոնց շնորհիվ արբիտրաժային գործերի վարումը դառնում է թափանցիկ, կանխատեսելի և արդյունավետ:

12. Ինչպիսի՞ն է ինստիտուցիոնալ արբիտրաժի զարգացման համաշխարհային պատմական ուղին, և որո՞նք են ամենահայտնի արբիտրաժային կենտրոնները

Արբիտրաժը որպես վեճերի լուծման եղանակ, զգալիորեն փոփոխվել է պատմության ընթացքում: Ինստիտուցիոնալ արբիտրաժի հիմքերը դրվել են դեռևս հին ժամանակներում, երբ առևտրականները վեճերի արդարացի լուծումը հանձնում էին վստահելի և հեղինակավոր անհատներին: Այնուամենայնիվ, միայն ժամանակակից առևտրի հայտ գալուն պես արբիտրաժը սկսեց կառուցվածքային և ինստիտուցիոնալացված ձև ստանալ:

Ինստիտուցիոնալ արբիտրաժի ամենավաղ ձևերը զարգացած (միջին) միջնադարում են եղել, երբ Վենետիկի և Բրյուզելի նման առևտրաշատ կենտրոններում առևտրային դատարաններ են հիմնադրվել: Այս դատարանները, որոնք առևտրական գիլդիաները կամ քաղաքային խորհուրդներն էին ղեկավարում, հարթակ էին առևտրականների միջև վեճերը լուծելու՝ համաձայն սահմանված առևտրային սովորույթների և կանոնների:



Լոնդոնի կենտրոնական գիլդիան՝ արհեստավորների և վաճառականների միությունը, 1750-ականներին դարձել է առևտրական վեճերի լուծման կենտրոն:

18-րդ և 19-րդ դարերի արդյունաբերական հեղափոխությունները խթանում են ինստիտուցիոնալ արբիտրաժի զարգացումը, քանի որ առևտրի ընդլայնումը պահանջում էր վեճերի լուծման ավելի արդյունավետ և հուսալի մեխանիզմների ստեղծում: Արբիտրաժային ծառայությունների աճող պահանջարկը բավարարելով՝ մի շարք առևտրային ասոցիացիաներ և առևտրային պալատներ մշտապես գործող արբիտրաժային հաստատությունների ստեղծման գործընթաց են նախաձեռնում, որոնց մեջ, ի թիվս այլ կենտրոնների, առանձնանում են Լոնդոնի արբիտրաժային դատարանը (այժմ հայտնի է որպես Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարան) և Միջազգային առևտրային պալատի արբիտրաժային դատարանը (անգլ.՝ ICC Arbitration Court)⁶:

⁶ [History](https://www.lcia.org/LCIA/history.aspx). London Court of International Arbitration. Accessed 29.04.2024, link: <https://www.lcia.org/LCIA/history.aspx>.

2011 թ. կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ աշխարհում այդ պահին գործող ինստիտուցիոնալ արբիտրաժային հաստատությունների 20%-ը կազմավորվել է վերջին տասը, 50%-ը՝ վերջին քսան, 70%-ը՝ վերջին երեսուն տարիների ընթացքում: Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-1945) մեկնարկը ձևավորված արբիտրաժային հաստատությունների 10%-ը գոյություն ունի առ այսօր⁷:


Այսպիսով, այսօր աշխարհի տարբեր երկրներում կան երկար տարիներ գործող, հեղինակություն և ճանաչում ձեռք բերած բազմաթիվ ինստիտուցիոնալ արբիտրաժային կենտրոններ, որոնց թվում են 1923-ին ստեղծված Միջազգային առևտրային պալատի (անգլ. հապ.՝ ICC) Միջազգային արբիտրաժային դատարանը (Փարիզ), 1892-ին ստեղծված Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանը (անգլ. հապ.՝ LCIA), 1917-ին ստեղծված Ստոկհոլմի առևտրային պալատի (անգլ. հապ.՝ SCC) արբիտրաժային ինստիտուտը, 1985-ին ստեղծված Յոնկոնգի միջազգային արբիտրաժային կենտրոնը (անգլ. հապ.՝ HKIAC), 1991-ին ստեղծված Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնը (անգլ. հապ.՝ SIAC):

Կարևորելով ինստիտուցիոնալ արբիտրաժային հաստատությունների դերը՝ վերջին շրջանում պետությունները սկսել են պետական մասնակցությամբ կամ աջակցությամբ ստեղծել և զարգացնել խոշոր արբիտրաժային կենտրոններ: Նման զարգացումը բնորոշ է հատկապես հետխորհրդային երկրներին (Ռուսաստանի արբիտրաժային կենտրոնը, Ղազախստանի միջազգային արբիտրաժային կենտրոնը, Վրաստանի միջազգային արբիտրաժային կենտրոնը, Վիլնյուսի առևտրային արբիտրաժային դատարանը, Լատվիայի առևտրի և արդյունաբերության պալատի արբիտրաժային դատարանը, Տաշքենդի միջազգային արբիտրաժային կենտրոնը ևն) և տնտեսական արագ աճ գրանցող պետություններին ու տարածաշրջաններին (Դուբայի միջազգային արբիտրաժային կենտրոնը, Շվեյցարիայի արբիտրաժային կենտրոնը, Վիեննայի միջազգային արբիտրաժային կենտրոնը, Չինաստանի միջազգային տնտեսական և առևտրային արբիտրաժային հանձնաժողովը ևն):


⁷ Guy Pendell, 2011, “The Rise and Rise of the Arbitration Institution.”

ՆՇԱՆԱՎՈՐ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳԼԽԱՄԱՍԵՐԸ




Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարան
 ԼՈՆԴՈՆ, ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ




Յոնկոնգի միջազգային արբիտրաժային կենտրոն
 ՀՈՆԿՈՆԳ




Դուբայի միջազգային արբիտրաժային կենտրոն
 ԴՈՒԲԱՅ, ԱՐԱԲԱՎԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոն
 ՍԻՆԳԱՊՈՒՐ



Ամերիկյան արբիտրաժային սոնգիացիա
 ՆՅՈՒ ՅՈՐԹ, ԱՄՆ

13. Արբիտրաժային ո՞ր գործերն են համարվում միջազգային

Ինչպես արդեն նշվել է, արբիտրաժի միջոցով կարող են քննվել ինչպես տեղական, այնպես էլ միջազգային արբիտրաժային գործեր: Տնտեսության գլոբալիզացիայի, ինչպես նաև դրան բնորոշ ապրանքների, ծառայությունների, տեխնոլոգիաների և կապիտալի տեղաշարժի արագության ու ծավալների աճով պայմանավորված վերջին տարիներին միջազգային արբիտրաժային գործերը սկսել են նշանակալի տեսակարար կշիռ ունենալ ինստիտուցիոնալ արբիտրաժային հաստատությունների գործերի շարքում:

Ընդունված է միջազգային համարել արբիտրաժային այն գործը.

- 1) որի կողմը ՀՀ քաղաքացի կամ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ չէ, կամ
- 2) որի կողմերի միջև առևտրային հարաբերությունները նախատեսում են պարտավորության հիմնական մասի կատարում կողմերի գործունեության վայրի պետությունից դուրս, կամ
- 3) որը, ըստ արբիտրաժային համաձայնության, անցկացվելու է կողմերի գործունեության վայրից դուրս պետությունում⁸:

Կարևոր է ընդգծել, որ արբիտրաժային գործերի դասակարգումը՝ որպես տեղական և միջազգային, կարևոր նշանակություն ունի, քանի որ դրանով են պայմանավորված վարույթի և վեճի նկատմամբ կիրառելի իրավունքի, արբիտրի, արբիտրաժի լեզվի ընտրության, արբիտրաժային վճիռը կատարման ներկայացնելու, ինչպես նաև արբիտրաժային գործի բարդության և մի շարք այլ հարցեր: Հատկապես այն դեպքերում, երբ կողմերը չեն կարգավորել արբիտրաժային վարույթի, վեճի նկատմամբ կիրառելի իրավունքի, արբիտրաժի լեզվի ընտրության հարցերը, կարևոր է հասկանալ՝ արբիտրաժը միջազգային է, թե տեղական, քանի որ, դրանով պայմանավորված, տարբերվում է այս հարցերի լուծման կարգը:

Մասնավորապես ներպետական արբիտրաժի դեպքում արբիտրաժային վարույթն ամբողջությամբ կարգավորվում է մեկ երկրի օրենսդրությամբ, ներառյալ կիրառելի նյութական և ընթացակարգային իրավունքը: Որպես կանոն, կողմերն ունեն նույն երկրի քաղաքացիություն կամ մշտական բնակության վայր, վեճի փաստական հանգամանքների և պայմանագրի կատարման վայրը ևս նույն երկիրն է: Մինչդեռ միջազգային արբիտրաժը մեկից ավելի երկրների օրենսդրություններին է վերաբերում: Ավելին՝ կողմերի միջև կիրառելի իրավունքի շուրջ համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալը կիրառում է այն իրավունքը, որը որոշված է իր համար կիրառելի համարվող կոլիզիոն սորմերով: Սակայն, ներպետական արբիտրաժի պարագայում, որպես

⁸ Հմմտ՝ UNCITRAL Model law on International Commercial Arbitration, Article 1(3):

կանոն, կիրառելի իրավունքն այլ կերպ է որոշվում: Օրինակ՝ եթե արբիտրաժի վայրը ՀՀ-ն է, և արբիտրաժի կողմերը ՀՀ քաղաքացիներ են կամ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք, ապա արբիտրաժային տրիբունալը վեճը լուծելիս կիրառում է ՀՀ իրավունքի նորմերը:

Այսօր մի շարք երկրներ վստահելի պայմաններ և միջավայր են ապահովում միջազգային արբիտրաժային գործերի քննության համար: Հայաստանը ևս կարելի է դասել այն պետությունների թվին, որ հուսալի հանգրվան են համարվում միջազգային տարրով ծանրաբեռնված վեճերի լուծման համար:

14. Ո՞ր վեճերը կարող են քննվել արբիտրաժի միջոցով

Արբիտրաժային կարգով քննվող վեճերի բնույթը կախված է կոնկրետ երկրի օրենսդրությունից: Որոշ երկրներ արբիտրաժային կարգով քննում են բազմաբնույթ վեճեր, իսկ որոշ երկրներ էլ սահմանափակել են այդ վեճերի շրջանակը: Կոնկրետ վեճը արբիտրաժի միջոցով լուծելու հնարավորությունը ընդունված է անվանել **արբիտրունակություն** (անգլ.՝ arbitrability), իսկ այն վեճերը, որ օրենսդրորեն թույլատրված են լուծել արբիտրաժային կարգով՝ արբիտրունակ վեճեր:

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը սահմանում է Հայաստանում արբիտրունակ համարվող վեճերի շրջանակը՝ առանձնացնելով առևտրային հարաբերություններից բխող վեճերը, ինչպես նաև այնպիսիք, որոնց արբիտրաժային կարգով լուծման հնարավորությունն ուղղակիորեն սահմանված է օրենսդրությամբ: Եթե տառացիորեն մեջբերենք օրենսդրական ձևակերպումը, ապա առևտրային են համարվում քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի բոլոր վեճերը, ներառյալ այդ իրավահարաբերությունների առնչությամբ գործարքների կնքված լինելուն կամ դրանց անվավերությանը վերաբերող հարցերը: Օրենքի համաձայն՝ առևտրային բնույթը, առանց սահմանափակման, մասնավորապես ներառում է.

- բանկերի կամ ֆինանսական այլ կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված գործարքներից բխող կամ դրանց առնչվող վեճերը,
- ապրանքների մատակարարման և փոխանակման,
- ծառայությունների մատուցման,
- առևտրային ներկայացուցչության կամ գործակալության,
- ֆակտորինգի,
- վարձակալության,
- լիզինգի,
- աշխատանքների կատարման,
- խորհրդատվության,
- նախագծման,
- լիցենզային,
- ներդրման, ֆինանսավորման,
- ապահովագրության,
- շահագործման կամ կոնցեսիայի,
- համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի,
- ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների հետ կապված իրավահարաբերությունները:

Վերը նշված վեճերի առավել առարկայական ու տարածված օրինակներ են շինարարական կապալի պայմանագրերից բխող վեճերը, ապրանքների մատակարարման

ու բեռնափոխադրումներին առնչվող վեճերը, ներառյալ միջազգային մատակարարումներն ու բեռնափոխադրումները, առևտրային ներդրումները, առցանց ծառայությունները, ինչպիսիք են առցանց հարթակների միջոցով ապրանքների վաճառքն ու ծառայությունների մատուցումը ևն:

Ինչպես նկատեցինք, «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը թույլատրում է նաև առևտրային բնույթ չունեցող վեճերի՝ արբիտրաժային կարգով քննությունը՝ պայմանով, որ այդ հնարավորությունն ուղղակիորեն սահմանված լինի օրենքով: Կենտրոնը ստեղծման պահից հնարավոր բոլոր քայլերը ձեռնարկում է քննվող գործերի շրջանակը հնարավորինս ընդլայնելու ուղղությամբ: Դրանով պայմանավորված՝ Կենտրոնի կանոններով, կանոնադրությամբ կամ այլ ակտերով չեն դրվել սահմանափակումներ, որոնք քաղաքացիական շրջանառության մասնակիցներին կարող են զրկել Կենտրոն դիմելու հնարավորությունից՝ անկախ վեճի բնույթից: Ուստի Կենտրոնի քննությանը ենթակա է ցանկացած տեղական կամ միջազգային վեճ, եթե կողմերը ներկայացնեն պատշաճ արբիտրաժային համաձայնություն, և նման վեճի քննությունը Կենտրոնի համար հակասող չլինի կիրառելի իրավունքի պահանջներին:



Գծապատկերը ցույց է տալիս, թե որ բնագավառների վեճերը կարող են լուծվել արբիտրաժի միջոցով:

15. Ովքե՞ր կարող են դիմել արբիտրաժային կարգով վեճը լուծելու համար

Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք ունեն գործարք (պայմանագիր) կնքելու իրավունք, ունեն սան արբիտրաժային համաձայնության կողմ լինելու իրավունք: Արբիտրաժում վեճի կողմեր կարող են լինել ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը, կազմակերպությունները, պետություններն ու պետական մարմինները, որոնք ունեն առևտրային (օրենքով սախատեսված դեպքերում՝ սան ոչ առևտրային) բնույթի հարաբերություններից բխող վեճ՝ ինչպես պայմանագրային, այնպես էլ արտապայմանագրային:

Ֆիզիկական անձինք, Նյու Յորքի կոնվենցիայի համաձայն, կարող են լինել արբիտրաժային համաձայնության կողմ, եթե գործունակ են: Իրավաբանական անձինք կարող են լինել պայմանագրի կողմ, եթե այդպիսի հնարավորություն սախատեսված է ընկերության կանոնադրությամբ և/կամ ընկերության գրանցման վայրի՝ պետության օրենսդրությամբ: Այդպիսիք կարող են լինել, օրինակ, բանկերի կամ ֆինանսական այլ կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված, ապրանքների ու ծառայությունների մատակարարման կամ փոխանակման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալական, ֆակտորինգի, վարձակալության, աշխատանքների կատարման, խորհրդատվության, սախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների գործարքներից բխող վեճերը:

16. ԻՆՋ Է արբիտրաժային համաձայնությունը

Արբիտրաժային համաձայնությունն արբիտրաժի հիմնաքարն է: Ընդունված է ասել, որ *արբիտրաժը համաձայնության ծնունդ է*: Արբիտրաժային համաձայնությամբ հաստատվում է կողմերի՝ իրենց միջև վեճի դեպքում արբիտրաժի դիմելու կամքը: Սա նախապայման է վեճերի այլընտրանքային լուծման եղանակներին դիմելիս: Ըստ այդմ արբիտրաժի դիմելու համար անհրաժեշտ է արբիտրաժային համաձայնության առկայություն:



Արբիտրաժային համաձայնության էությունը

Այսպիսով, արբիտրաժային համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու շուրջ: Արբիտրաժային համաձայնությունը կարող է կնքվել ինչպես պայմանագրում արբիտրաժային վերապահման, այնպես էլ առանձին պայմանագրի (արբիտրաժային համաձայնագրի) ձևով: Համաձայնությունը կարող է վերաբերել կողմերի միջև առկա պայմանագրային կամ արտապայմանագրային հարաբերություններին կամ կնքվել առհասարակ, այլ կերպ ասած՝ կողմերի միջև ցանկացած հարցով վեճի առաջացման դեպքում արբիտրաժի դիմելու մասին համաձայնություն լինել:

Արբիտրաժին ընդհանրապես և արբիտրաժային համաձայնությանը մասնավորապես ներհատուկ է արբիտրաժային վերապահման բաժանելիության սկզբունքը: Այս սկզբունքի համաձայն՝ արբիտրաժային վերապահումը դիտարկվում է որպես առանձին պայմանագիր, որն անկախ է այն հիմնական պայմանագրից, որի մաս է կազմում: Այսինքն՝ հիմնական պայմանագրի վավերականությունը չի կարող կախված լինել արբիտրաժային համաձայնության վավերականությունից, և հակառակը: Բաժանելիության դոկտրինի նպատակն է ապահովել կողմերի կամքը իրենց միջև առկա հնարավոր վեճերը արբիտրաժային կարգով քննության և լուծման հանձնելու շուրջ:

17. Ինչպե՞ս պետք է կնքվի արբիտրաժային համաձայնությունը

Արբիտրաժին վերաբերող միջազգային բոլոր ակտերը պահանջում են, որ արբիտրաժային համաձայնությունը կնքվի գրավոր: Նյու Յորքի կոնվենցիայի 2(2) հոդվածը նախատեսում է, որ **գրավոր համաձայնագիր** եզրույթը ներառում է կողմերի միջև ստորագրված, կամ փոխանակված նամակներում կամ հեռագրերում պարունակվող արբիտրաժային վերապահումը կամ արբիտրաժային համաձայնությունը:

Այսօր միջազգային կարգավորումները և ներպետական օրենսդրությունը թեթևացնում են համաձայնությանը վերաբերող նախապայմանները: Ճատ երկրներում արբիտրաժային համաձայնությունն առկա է համարվում, երբ հաստատվում է, որ կողմերի միջև կա համաձայնություն: Օրինակ՝ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված, եթե դա եղել է կողմերի ստորագրությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելով, կամ կնքվել է նամակներով, հեռատիպով, հեռագրով, էլեկտրոնային կամ այդպիսի համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի մասին հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ: Պայմանագրում կատարված հղումը այնպիսի փաստաթղթի, որ պարունակում է արբիտրաժային վերապահում, համարվում է արբիտրաժային համաձայնություն այն դեպքում, երբ պայմանագիրը կնքված է գրավոր ձևով, և տվյալ հղումը այնպիսին է, որ նշված վերապահումը դարձնում է պայմանագրի մաս: Արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված նաև այն դեպքում, երբ արբիտրաժային համաձայնության մասին մի կողմի գրավոր առաջարկ սույն մասով սահմանված որևէ ձևով ընդունել է մյուս կողմը:

Հարկ է ընդգծել, որ կողմերն արբիտրաժային համաձայնությամբ կարող են նախապես՝ մինչև համաձայնությունը փոխադարձաբար ստորագրելը, համաձայնեցնել մի շարք հարցեր՝ ընտրել արբիտրաժային հաստատությունը, որին պետք է դիմեն, սահմանել արբիտրների քանակը, ընտրել կոնկրետ արբիտրի կամ արբիտրների, արբիտրաժի լեզուն, կիրառելի իրավունքը, արբիտրաժի վայրը, կանոնները, ընթացակարգը ևն:

Այսպիսով, արբիտրաժային համաձայնությունները կարող են լինել.

- կողմերի միջև կնքված գործարքի (պայմանագրի) մաս, օրինակ՝ պայմանագրի «Վեճերի լուծման կարգը» բաժնում ներառելով արբիտրաժային վերապահում, օրինակ՝ պայմանագրին կից կամ ամբողջովին առանձին համաձայնություն կամ գրավոր այլ փաստաթուղթ, որով կողմերը ամրագրում են արբիտրաժային կարգով իրենց միջև ծագող կամ ծագած վեճերը լուծելու մտադրությունը ու դրա շուրջ իրենց ձեռք բերած պայմանավորվածությունները,

➤ գրավոր նամակագրություն, օրինակ՝ վեճն արբիտրաժին հանձնելու առաջարկ և նման առաջարկին համաձայնություն հայտնող պատասխան,

➤ գոյություն ունեցող արբիտրաժային համաձայնությանը միանալուն ուղղված ցանկացած գրավոր փաստաթուղթ, ինչպես, օրինակ, որևէ միության անդամակցության միջոցով այդ միության անդամների համար նախատեսված արբիտրաժային համաձայնությանը միանալու մասին գրավոր դիմում, համաձայնություն կամ արբիտրաժային համաձայնությանը միանալու՝ անձի կամքը հավաստող գրավոր եղանակով կազմված ցանկացած այլ փաստաթուղթ:

Կարևոր է ընդգծել նաև, որ արբիտրաժային համաձայնություն տված կողմի մահը կամ իրավաբանական անձի լուծարումը չի դադարեցնում նման համաձայնությունը, եթե վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է իրավահաջորդություն: Նման դեպքում իրավահաջորդը կրում է արբիտրաժային համաձայնությամբ ստանձնած պարտավորությունը:

18. Ինչպիսի՞ն կարող է լինել արբիտրաժային պարզ համաձայնությունը

Արբիտրաժային համաձայնությունը պետք է կնքվի գրավոր ձևով, և պետք է հստակ երևա կողմերի կամքը՝ իրենց միջև ծագած կամ ծագող բոլոր վեճերն արբիտրաժային կարգով լուծելու: Ցանկալի է, որ կողմերը, գրավոր ձևը պահպանելուց զատ, համաձայնություն ձեռք բերեն մի շարք կարևոր հարցերի շուրջ (օրինակ՝ արբիտրաժի տեսակը՝ ad hoc, թե ինստիտուցիոնալ արբիտրաժ, արբիտրաժային համաձայնությունը կարգավորող օրենսդրությունը կամ արբիտրաժի վայրը, վեճի նկատմամբ կիրառելի իրավունքը):

Միևնույն ժամանակ, կողմերը կարող են ձեռք բերել համաձայնություն այլ հարցերի շուրջ (օրինակ՝ արբիտրաժի լեզուն, վայրը, արբիտրների քանակը): Պարտադիր որոշման ենթակա հարցերի վերաբերյալ կողմերի դիրքորոշման բացակայությունը կարող է հանդիսանալ արբիտրաժային համաձայնության վիճարկման հիմք: Այդ պատճառով միջազգային արբիտրաժային կենտրոնները կազմել են արբիտրաժային համաձայնության և արբիտրաժային վերապահման օրինակելի ձևեր իրենց դիմելու համար: Օրինակ՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը առաջարկում է արբիտրաժային վերապահման հետևյալ տիպային օրինակը.

«Սույն պայմանագրից բխող և դրա կապակցությամբ կողմերի միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են ԱՐՔԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ Արբիտրաժային կանոնների հիման վրա: Վեճը լուծվելու է [կողմերը կարող են ընտրել մեկ կամ երեք արբիտրի] կողմից: Արբիտրաժի վայրը Երևանն (Հայաստան) է [կողմերը կարող են ընտրել այլ վայր], իսկ արբիտրաժի լեզուն հայերենն է [կողմերը կարող են

ընտրել այլ [եզու]: Վեճի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը [կողմերը կարող են ընտրել այլ իրավունք]»:

Այս և նմանատիպ վերապահումները պարունակում են անհրաժեշտ բոլոր հարցերը, որոնք կողմերը պետք է քննարկեն և դրանց շուրջ գան համաձայնության: Սա բացառում է արբիտրաժային համաձայնության վավերականությունը ապագայում վիճարկելու հնարավորությունը:

19. Արբիտրաժային համաձայնության վավերականությունը

Արբիտրաժային համաձայնության կարևորությունը հասկանալու համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ համաձայնության գրավոր ձևը և այլ պահանջներ չպահպանելու հետևանքներին:

Արբիտրաժային համաձայնությունն ինքնին բացառում է վեճի՝ դատարաններում քննվելու հնարավորությունը: Եթե նման համաձայնության առկայության դեպքում կողմերից մեկն այնուամենայնիվ դիմում է դատարան, ապա դատարանը, վեճի մյուս կողմի միջնորդության հիման վրա, հայցը կթողնի առանց քննության, եթե կողմերի արբիտրաժային համաձայնության հիման վրա արբիտրաժին դիմելու հնարավորությունը չի վերացել:

Այս կանոնն ունի մեկ բացառություն. օրենքով կարող են սահմանվել դեպքեր, երբ, անկախ արբիտրաժային համաձայնության առկայությունից, կողմը միշտ իրավունք ունի հայց ներկայացնելու դատարան: Նման բացառիկ դեպքերից է սպառող ֆիզիկական անձանց հետ կնքված այն արբիտրաժային համաձայնությունը, որը ծագել է մինչև վեճի առաջացումը⁹: Դա սպառողին չի զրկում պայմանագրից բխող կամ դրան առնչվող վեճը դատարանին հանձնելու իրավունքից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնելու արբիտրաժային տրիբունալի լուծմանը:

Մինևույն ժամանակ, վեճի կողմերը արբիտրաժային համաձայնության վավերության հարցը կարող են բարձրաձայնել արբիտրաժային գործի շրջանակում: «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալն իրավասու է, իսկ արբիտրաժային համաձայնությունը վիճարկելու դեպքում պարտավոր է առաջնահերթ կարգով քննել և որոշում կայացնել իր իրավասության, ներառյալ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության վերաբերյալ: Այսպես, եթե կողմի դեմ ներկայացվել է Արբիտրաժ իրականացնելու պահանջ, սակայն նա կարծում է, որ իրենց միջև չկա արբիտրաժային համաձայնություն, կամ այն

⁹ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մաս:

անվավեր է, կամ այդպիսի համաձայնությունը չի տարածվում հայցով ներկայացված վեճի վրա, ապա կողմը արբիտրաժային տրիբունալին նման առարկություն ներկայացնելու իրավունք ունի: Այսպիսով, եթե վեճի կողմերից մեկը արբիտրաժային համաձայնության վավերության մասին հարց է բարձրաձայնում, արբիտրաժային տրիբունալը պարտավորվում է առաջնահերթ կարգով քննել և որոշում կայացնել այդ հարցի վերաբերյալ:

Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ նման առարկությունը մինչև պահանջի դեմ պատասխան ներկայացնելու պահը չներկայացնելը կգնահատվի որպես արբիտրաժային համաձայնության առկայությանը կամ վավերությանը համաձայնություն, և հետագայում տվյալ կողմն արբիտրաժային համաձայնության բացակայության կամ անվավերության հարցը չի կարող շահարկել կամ դնել արբիտրաժային տրիբունալի որոշումների վիճարկման հիմքում: Արբիտրաժային տրիբունալը, այնուամենայնիվ, կարող է բացառիկ դեպքերում ընդունել ուշացված հայտարարությունը, եթե ուշացումը համարի հարգելի:

Վեճի կողմը արբիտրաժային տրիբունալի՝ սեփական իրավասության որոշումը կարող է այնուհետև վիճարկել նաև ազգային դատարանում: «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե արբիտրաժային տրիբունալն իր իրավասության՝ որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ կայացնում է որոշում, ապա կողմերից յուրաքանչյուրն այդ որոշման մասին տեղեկացվելուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել դատարան տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու հայցով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Տրիբունալի իր իրավասության վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը տեսության մեջ հայտնի է որպես «Kompetenz-Kompetenz» դոկտրին: Այստեղ կարևոր է ընդգծել նաև, որ նման բողոքարկումը չի կասեցնում արբիտրաժային վարույթը, և արբիտրաժային տրիբունալն իրավունք ունի շարունակելու վարույթն ու կայացնելու վճիռ, եթե համարել է, որ առկա է վավեր արբիտրաժային համաձայնություն:

Այն դեպքում, երբ վեճի կողմերը վեճի քննությունը հանձնել են որևէ արբիտրաժային կենտրոնի, ապա արբիտրաժային համաձայնության գործողության հարցը լուծվում է ազգային օրենսդրության և արբիտրաժային կենտրոնի կանոնների համաձայն: Այսպես, եթե կողմերը վեճի քննությունը հանձնել են AMCA-ին, ապա արբիտրաժային համաձայնության վավերության հարցը լուծվում է հետևյալ կերպ. արբիտրաժային վարույթի մասնակցի՝ արբիտրաժային համաձայնության բացակայության, անվավերության մասին կամ առկա համաձայնությունը տվյալ վեճի նկատմամբ կիրառելի չլինելու մասին հայտարարություն ներկայացվելու դեպքում խնդրի լուծումը որոշում է արբիտրաժային տրիբունալը, կամ Գլխավոր քարտուղարը հարցի լուծումը հանձնում է Արբիտրաժային խորհրդին, եթե ձևավորված չէ արբիտրաժային տրիբունալը: Արբիտրաժային խորհուրդը կարող է որոշում կայացնել գործն արբիտրաժային վարույթի կարգով ամբողջությամբ կամ մասնակիորեն քննելու կամ որոշել, որ կողմերի միջև բացակայում է արբիտրաժային համաձայնությունը:

20. Ինչպե՞ս դիմել AMCA՝ արբիտրաժի միջոցով վեճը լուծելու համար

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային կանոններով սահմանված է Կենտրոնին դիմելու կարգը:

Այսպես, կողմը, որը ցանկանում է դիմել Կենտրոնին վեճը արբիտրաժային կարգով լուծելու համար, իր գրավոր դիմումը՝ Արբիտրաժ իրականացնելու պահանջը, պետք է ներկայացնի Կենտրոնի քարտուղարությանը: Այն Կենտրոնին կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով, օրինակ՝ կայքի միջոցով, իսկ անհնարինության դեպքում թղթային տարբերակով: Պահանջը ոչ էլեկտրոնային եղանակով (առձեռն, փոստային առաքում կամ պատվիրված առաքանի) Քարտուղարությանը հանձնելու դեպքում հայցվորը պարտավոր է ներկայացնել նաև Քարտուղարությանը հանձնվող բոլոր փաստաթղթերի պատճենները այնպիսի քանակով, որ մեկական օրինակ հնարավոր լինի հանձնել արբիտրաժային վարույթի մյուս կողմին կամ կողմերին, բոլոր արբիտրներին և Քարտուղարությանը:

Ըստ Արբիտրաժային կանոնների՝ Արբիտրաժ իրականացնելու պահանջին ներկայացվում է որոշ պարտադիր պահանջներ: Եթե դրանք պահպանված չեն, Քարտուղարությունը հայցվորի համար սահմանում է ժամկետ, որի ընթացքում հայցվորը կարող է շտկել թերությունները: Եթե Քարտուղարության նշած թերությունները տվյալ ժամկետում չեն շտկվում, վարույթը համարում են դադարած առանց սահմանափակելու հայցվորի իրավունքը կրկին դիմելու Կենտրոն:

Քարտուղարությունը, ստանալով Արբիտրաժ իրականացնելու պահանջը՝ Կանոնների պահանջները բավարարող, անմիջապես տեղեկացնում է հայցվորին ու նրա նշած պատասխանողին նման պահանջ ստանալու փաստի ու դրա ստացման ամսաթվի մասին: Պատասխան ներկայացնելու համար Արբիտրաժ իրականացնելու պահանջը և դրան կից փաստաթղթերի պատճենները Քարտուղարությունը պատասխանողին ներկայացնում է հայցվորի տրամադրած փաստաթղթերի պատճենները (եթե հայտը էլեկտրոնային եղանակով չի ներկայացվել), երբ գործավարության վճարը կատարելը հավաստող փաստաթուղթը ստանալուց հետո:

Այսպիսով, Կենտրոնում արբիտրաժային վարույթ նախաձեռնելու համար անհրաժեշտ է պարզապես արբիտրաժային համաձայնության հիմքով ներկայացնել Արբիտրաժ իրականացնելու պահանջ՝ շարադրելով վեճի լուծման համար նշանակություն ունեցող փաստական և իրավական հանգամանքները:

21. Ի՞նչ չափանիշներ պետք է բավարարի Արքիտրաժ Իրականացնելու պահանջը AMCA դիմելիս

Կենտրոնի կանոնների համաձայն՝ Արքիտրաժ Իրականացնելու պահանջը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները.

1) հայցվորի անունը (անվանումը), անձը հաստատող տվյալները, եթե ֆիզիկական անձ է, պետական գրանցման տվյալները, եթե իրավաբանական անձ է, հայցվորի կոնտակտային տվյալները՝ հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն և ծանուցման նախընտրելի միջոցը,

2) հայցվորի ներկայացուցչի անունը, հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն և կոնտակտային այլ տվյալներ,

3) պատասխանողի անունը (անվանումը), ֆիզիկական հասցեն և կոնտակտային այլ տվյալներ, ներառյալ էլեկտրոնային փոստի հասցեն, եթե դրանք հասանելի են հայցվորին,

4) պահանջի հիմքում ընկած փաստերի և վեճի բնույթի նկարագրությունը, ինչպես նաև այն հիմքը, ըստ որի՝ ներկայացվում են պահանջները,

5) ներկայացվող պահանջը, միաժամանակ դրամական պահանջի դեպքում՝ պահանջվող գումարի չափը, և հնարավորության դեպքում՝ այլ պահանջների դրամական արժեքի գնահատումը,

6) արքիտրաժային և այլ համապատասխան համաձայնություն(ներ),

7) նկատառումներ կամ առաջարկներ արքիտրների թվի և ընտրության մասին՝ Կանոնների 13-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան, և ըստ այդմ՝ պահանջվող արքիտրի առաջադրում,

8) նկատառումներ կամ առաջարկներ արքիտրաժի վայրի, կիրառելի իրավունքի և արքիտրաժի լեզվի մասին:

Արքիտրաժ Իրականացնելու պահանջը Քարտուղարությանը ներկայացնելիս պետք է կատարվի նաև Կանոններով նախատեսված գործավարության վճարը և կից տրվի այդ վճարումը հավաստող փաստաթուղթը:

Գործավարության վճարների չափը սահմանվում է Արքիտրաժային կանոնների հավելված 1-ով:

Վերը նշված պարտադիր ներկայացման ենթակա տեղեկություններից բացի՝ հայցվորն իրավունք ունի իր հայեցողությամբ ներկայացնելու նաև այլ տեղեկություններ կամ վերաբերելի այլ փաստաթղթեր:

Հարկ է նշել, որ արքիտրաժային վարույթի սկիզբը համարվում է Արքիտրաժ Իրականացնելու պահանջը Քարտուղարությանը ներկայացնելու ամսաթիվը:

22. Ինչպե՞ս է ձևավորվում արբիտրաժային տրիբունալը AMCA դիմելիս

Կողմերի ինքնավարության սկզբունքի համաձայն՝ արբիտրաժային վարույթում կողմերը ազատ են՝ որոշելու արբիտրների թիվը, արբիտրին առաջադրելու ցանկացած պահանջ և նախատեսելու արբիտրաժային տրիբունալի ձևավորման կարգը: Այս հարցերի պատասխանները մեծապես պայմանավորված են կողմերի ընտրած արբիտրաժի տեսակից: Ինստիտուցիոնալ արբիտրաժի դեպքում արբիտրաժային հաստատությունը մեծ դեր ունի արբիտրաժային տրիբունալի ձևավորման հարցում, հատկապես երբ կողմերը համաձայնության չեն գալիս արբիտրների թվի և այլ պայմանների կապակցությամբ:

Արբիտրաժային կանոնների համաձայն՝ վեճերը քննում է մեկ կամ երեք արբիտրից բաղկացած արբիտրաժային տրիբունալը: Արբիտրների թիվը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Ընդ որում՝ այն կարող է ի սկզբանե սահմանվել արբիտրաժային համաձայնությամբ կամ Արբիտրաժ իրականացնելու պահանջը արբիտրաժային հաստատությանը ներկայացնելուց հետո: Արագացված ընթացակարգով գործերի քննության դեպքում նշանակվում է մեկ արբիտր: Մեկ արբիտրի կազմով տրիբունալը գործերը կարող է քննվել նաև այն դեպքերում, երբ բացակայում է կողմերի համաձայնությունը, և Արբիտրաժային խորհուրդը, հաշվի առնելով գործի բարդությունը, որոշում չի կայացրել, ըստ որի՝ գործը պետք է քննի երեք արբիտրի կազմով տրիբունալը:

Արբիտրների ընտրության հարցում առաջնային նշանակություն ունեն կողմերի կամքն ու ձեռք բերված համաձայնությունը: Նման համաձայնությունների բացակայության դեպքում գործում է Կենտրոնի Արբիտրաժային կանոններով սահմանված ընտրության ու նշանակման կարգը: Կարևոր է ընդգծել, որ կողմերը սահմանափակված չեն Կենտրոնի հրապարակած արբիտրների ցանկով, ազատ են՝ որոշելու իրենց վեճը քննող արբիտրին ներկայացվող պահանջների շրջանակը և առաջարկել այլ անձանց՝ որպես արբիտրների, որոնք տվյալ ոլորտում ունեն փորձ ու գիտելիք:

Մեկ արբիտրի կազմով՝ գործի քննության հիմքերի կամ կողմերի համաձայնության դեպքում պատասխանողի՝ Արբիտրաժ իրականացնելու պահանջը ստանալու պահից 30-օրյա ժամկետում¹⁰ կողմերը փոխադարձ համաձայնությամբ առաջադրում են արբիտր, եթե արբիտրաժային համաձայնությամբ ի սկզբանե արբիտր առաջադրված չի լինում: Նշված ժամկետում կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում արբիտրին նշանակում է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային խորհուրդը:

¹⁰ Արագացված վարույթի դեպքում ընթացակարգն ու ժամկետները տարբերվում են, ինչին անդրադարձ կատարվել է ձեռնարկի այլ բաժնում:

Եթե գործը պետք է քննի **Երեք արբիտրի կազմով** արբիտրաժային տրիբունալը կողմերի միջև այլ համաձայնության բացակայության պայմաններում, ապա կողմերից յուրաքանչյուրը ընտրում է մեկ արբիտրի: Այս դեպքում հայցվորն արբիտրին նշանակում է արբիտրաժային հաստատությանը Արբիտրաժ իրականացնելու պահանջը ներկայացնելուն, իսկ պատասխանողը՝ այդ պահանջի կապակցությամբ պատասխանը ներկայացնելուն զուգահեռ, իսկ պատասխան չներկայացնելու դեպքում պատասխանի ներկայացման համար սահմանված 30-օրյա ժամկետում: Նշված կարգով ու ժամկետում կամ կողմերի դիմումի հիման վրա՝ Քարտուղարության տրամադրած լրացուցիչ ժամկետի ընթացքում արբիտր չառաջադրելու դեպքում կողմ(եր)ի փոխարեն արբիտր(ներ)ին նշանակում է Արբիտրաժային խորհուրդը:

Արբիտրաժային տրիբունալի երրորդ արբիտրին, որը դառնում է արբիտրաժային տրիբունալի նախագահողը, 10-օրյա ժամկետում ընտրում են արդեն իսկ ընտրված մյուս երկու արբիտրները, եթե կողմերն այլ համաձայնություն չունեն: Նշված դեպքում ընտրված երրորդ արբիտրի թեկնածությունը հաստատում է Արբիտրաժային խորհուրդը: Այս կարգով արբիտր չընտրվելու դեպքում երրորդ արբիտրին նշանակում է Արբիտրաժային խորհուրդը: Արբիտրաժային տրիբունալի նախագահողի նշանակման պահից համարվում է, որ տրիբունալը ձևավորված է:

Անկախ վերը նշված հանգամանքներից ու արբիտրների ընտրության հարցում կողմերի ձեռք բերած համաձայնություններից՝ Արբիտրաժային խորհուրդը բացառիկ դեպքերում իրավասու է նշանակելու արբիտրին և (կամ) տրիբունալի բոլոր անդամներին խուսափելու համար անհավասար վերաբերմունքի և անարդարության վտանգից, ինչը կարող է հանգեցնել արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման:

Մի քանի հայցվորի և (կամ) մի քանի պատասխանողի առկայության դեպքում արբիտրին (եթե տրիբունալը բաղկացած է մեկ արբիտրից) կամ արբիտրաժային տրիբունալի երկու արբիտրներին (եթե տրիբունալը բաղկացած է երեք արբիտրից) վերը նշված ժամկետում ընտրում են կողմերը փոխադարձ համաձայնությամբ, իսկ երրորդ արբիտրին (որ նշանակվում է նաև որպես տրիբունալի նախագահող) նշանակում են արբիտրները, և հաստատում է Արբիտրաժային խորհուրդը: Եթե 10-օրյա ժամկետում արբիտրները երրորդ արբիտրի (նախագահողի) թեկնածությունը չեն առաջադրում, երրորդ արբիտրին (նախագահողին) նշանակում է Արբիտրաժային խորհուրդը: Այս դեպքում ևս Արբիտրաժային խորհուրդը պահպանում է բոլոր արբիտրներին կամ մի մասին իր նախաձեռնությամբ նշանակելու բացառիկ իրավունքը:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ ընդհանուր ընթացակարգով գործի քննության դեպքում, Կենտրոնի կանոնների համաձայն, կողմերի առաջադրած արբիտրի թեկնածուներին պետք է հաստատի Արբիտրաժային խորհուրդը, որպեսզի արբիտրաժային տրիբունալը համարվի ձևավորված, իսկ չառաջադրելու դեպքում Արբիտրաժային խորհուրդն է նշանակում արբիտր(ներ)ին Քարտուղարության ներկայացրած կամ խորհրդի անդամների առաջարկած թեկնածուների կազմից:

Մինևույն ժամանակ հարկ է նկատել, որ ինչպես տրիբունալի ձևավորման կարգը, այնպես էլ վարութային մի շարք այլ կարգավորումներ մեծապես պայմանավորված են կիրառելի ընթացակարգային կանոններով և մշտապես գործող մյուս արբիտրաժային հաստատությունների արբիտրաժային կանոններում կարող են այլ լինել:

Արբիտրների թեկնածությունների առաջադրման, նրանց ընտրության ու ընտրությունից հետո արբիտրի գործունեության ողջ ընթացքում գործում է արբիտրների անաչառության և անկողմնակալության սկզբունքը, իսկ անհրաժեշտության դեպքում բացարկ հայտնելու ընթացակարգը:

23. Ո՛վ կարող է լինել արբիտր

Արբիտրին ներկայացվող պահանջները և արբիտրաժային տրիբունալի ձևավորումը էականորեն տարբերվում են դատավորներին ներկայացվող պահանջներից ու նրանց ընտրության կարգից:

Դատավորները նշանակվում են որոշակի ընթացակարգով, գործում են մի իրավական դաշտում, որտեղ նրանց ներկայացվող պահանջները, նրանց իրավունքներն ու պարտականությունները հստակ սահմանված են: Ի տարբերություն դատավորների՝ արբիտրներին ներկայացվող պահանջները, նրանց իրավունքներն ու պարտականությունները կանխորոշվում են կողմերի կամքով, արբիտրաժային համաձայնությունը կարգավորող օրենսդրությամբ և այլ երկրի օրենսդրությամբ, որտեղ վճիռը ենթակա է լինելու կատարման: Ընդ որում արբիտրի ընտրության հարցում մեծ են վեճի կողմերի դերն ու ցանկությունը, ինչը նշանակում է, որ արբիտրը վեճի կողմերի համար պետք լինի վստահելի, ընդունելի՝ թե մասնագիտական, թե մարդկային որակների տեսանկյունից:

Արբիտրներին ԳԳ օրենսդրությամբ ներկայացվում են հետևյալ պահանջները: Արբիտր կարող է նշանակվել 25 տարին լրացած, բարձրագույն կրթություն ունեցող յուրաքանչյուր գործունակ ֆիզիկական անձ: Արբիտր չի կարող լինել դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված, հանցագործություն կատարելու համար դատապարտված անձը, ինչպես նաև այն անձը, որը քրեական հետապնդման մեջ է: Կողմերն ազատ են՝ արբիտրաժային համաձայնությամբ սահմանելու արբիտրին ներկայացվող լրացուցիչ պահանջներ, որոնք կարող են վերաբերել արբիտրի որակավորմանը, աշխատանքային փորձին, ազգությանը, լեզուների իմացությանը և մի շարք այլ հանգամանքների: Ընդ որում նման պահանջները կարող են սահմանվել նաև բացառման կարգով: Օրինակ՝ կողմերը կարող են համաձայնել, որ իրենց վեճը քննող արբիտրը չպետք է երբևէ աշխատած լինի իրենց փոխկապակցված կամ իրենց հետ համագործակցած որևէ ընկերությունում: Արբիտրաժային համաձայնությամբ սահմանված արբիտրին ներկայացվող պահանջները պարտադիր հաշվի են առնվում ինստիտուցիոնալ արբիտրաժում արբիտրին նշանակելիս, իսկ օրենքով սահմանված դեպքերում արբիտր նշանակելու հարցով դատարան դիմելու պարագայում նաև դատարանում: Ընդ որում՝ օրենքը սահմանում է, որ ոչ ոք չի կարող իր քաղաքացիության պատճառով զրկվել արբիտր նշանակվելու իրավունքից:

Կարող է հարց ծագել, թե գործի քննության համար որտեղ են փնտրում արբիտրների: Արբիտրաժային կենտրոններից շատերը ունեն արբիտրների բաց ցանկ: Օրինակ՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի պաշտոնական կայքէջում տեղադրված է Կենտրոնի արբիտրների ցանկը՝ նրանց կոնտակտային տվյալների, մասնագիտական փորձի, աշխատանքային լեզուների և այլ հմտությունների մասին նշումներով: Կողմերն արբիտրաժային կենտրոն ընտրելիս կարող են նախապես ուսումնասիրել այդ ցանկերը:

24. Ինչպե՞ս են երաշխավորվում արբիտրի անկախությունը և անկողմնակալությունը

Արբիտրի անկախությունը և անկողմնակալությունը արբիտրաժային վարույթի անկյունաքարերից են, քանի որ ապահովում են արբիտրաժի՝ որպես վեճերի այլընտրանքային լուծման եղանակի նկատմամբ վստահելիությունն ու երաշխավորում արբիտրաժային վճիռների անբողոքարկելիությունը:

Ըստ այդմ արբիտրի թեկնածուն և արբիտրը պարտավոր են հայտնել յուրաքանչյուր այնպիսի հանգամանքի մասին, որ կարող է հիմնավոր կասկած առաջացնել անկողմնակալության կամ անկախության մասին, օրինակ, եթե նրան փոխկապակցված անձը հանդիսացել է կամ հանդիսանում է արբիտրաժի կողմ կամ մասնակից, կամ եթե նա կանխակալ վերաբերմունք ունի կողմի նկատմամբ:

Նշված սկզբունքը երաշխավորելու համար, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային կանոնների համաձայն, ապագա արբիտրը նախքան իր նշանակումը կամ հաստատումը պետք է ստորագրի ընդունման, հասանելիության, անկողմնակալության և անկախության մասին հայտարարություն: Դրանով պետք է հայտնի այն բոլոր փաստերը, որոնք կողմերի տեսանկյունից կարող են հիմք լինել կասկածի տակ դնելու իր անկախությունը, ինչպես նաև յուրաքանչյուր հանգամանք, որ ողջամիտ կասկած կարող է առաջացնել իր անկողմնակալության մասին:

Եթե վերոնշյալ հանգամանքներն ի հայտ գան արբիտր նշանակվելուց կամ հաստատվելուց հետո, նա կկրի դրանք բացահայտելու պարտականություն: Հնարավոր են դեպքեր, երբ արբիտր նշանակվելու փուլում, չտիրապետելով կողմերի ու վեճի բնույթի մասին ամբողջական տեղեկությանը, արբիտրը չի հայտնաբերել, կամ նրա համար հասանելի չեն եղել այնպիսի տեղեկություններ, որոնք որևէ ձևով կարող են խոչընդոտել իր պարտավորությունների պատշաճ կատարմանը ու ազդեցություն ունենալ անկողմնակալ, անաչառ «դատավոր» լինելու իր առաքելության վրա:

Արբիտրի անկախության կամ անկողմնակալության մասին կասկածներ ունենալու դեպքում արբիտրաժային վարույթի կողմերը կարող են բարձրաձայնել արբիտրին բացարկ հայտնելով:

25. Ո՞ր դեպքերում և ինչպե՞ս կարելի է արբիտրին բացարկ ներկայացնել

Ինչպես արդեն նշվեց, արբիտրի անկախությունն ու անկողմնակալությունը նրա վարույթին մասնակցելու կարևորագույն նախապայմաններից է, ուստի եթե արբիտրաժային վարույթի կողմերը կամ կողմերից մեկը կարծում է, որ առկա են արբիտրի անկողմնակալությունը կամ անկախությունը կասկածի տակ դնող հանգամանքներ, կամ արբիտրը չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում, ապա կարող է բացարկ հայտնել:

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը որպես արբիտրին բացարկ հայտնելու հիմքեր նշել է հետևյալները՝ չսահմանափակելով դրանցով.

1) արբիտրը կանխակալ վերաբերմունք ունի արբիտրաժի կողմի կամ մասնակցի (կողմի ներկայացուցչի, արբիտրաժային վարույթում որպես վկա, փորձագետ, մասնագետ ներգրավված անձանց) նկատմամբ.

2) արբիտրը նախկինում մասնակցել է արբիտրաժի կողմերի մասնակցությամբ նույն առարկայի մասին, սակայն տարբեր փաստական հիմքերով գործով վեճի քննությանը.

3) արբիտրին փոխկապակցված անձը հանդիսացել է կամ հանդիսանում է արբիտրաժի կողմ կամ մասնակցից.

4) արբիտրը գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ ինքն անձամբ կամ իրեն փոխկապակցված անձը տնտեսական շահ ունի՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ:

Արբիտրին փոխկապակցված է հանդիսանում այն ֆիզիկական անձը, որ արբիտրի ընտանիքի անդամ է (ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը կամ քույրը, պապը, տատը, թոռը, ամուսնու ծնողը կամ զավակի ամուսինը, ինչպես նաև համատեղ ապրող անձինք), կամ որի հետ արբիտրը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն: Իրավաբանական անձը արբիտրին փոխկապակցված է համարվում այն դեպքում, երբ տվյալ իրավաբանական անձին արբիտրը կամ վերջինիս փոխկապակցված անձը արբիտրաժային վարույթի առնչությամբ գործել է համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե.

1. նշված իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում արբիտրը կամ վերջինիս փոխկապակցված անձն ունի մասնակցություն,

2. նշված իրավաբանական անձի որոշումները արբիտրը կամ վերջինիս փոխկապակցված անձը օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու, կամ որին կարող են տալ կատարման համար պարտադիր ցուցումներ,

3. արբիտրը կամ վերջինիս փոխկապակցված անձն այդ իրավաբանական անձի կառավարման մարմնի անդամ է:

Բացի արբիտրին բացարկ հայտնելու վերը նշված հիմքերից՝ արբիտրաժային հաստատություններն ազատ են՝ իրենց կանոններով, այդ թվում՝ արբիտրների վարքագծի կանոնագրքով, սահմանելու այլ դեպքեր ևս:

AMCA-ի Արբիտրաժային կանոնները չեն սահմանափակում կողմերին ու արբիտրներին բացարկի հիմքերի թվարկմամբ՝ յուրաքանչյուր անգամ արբիտրի անկողմակալության, անաչառության ու անկախության հարցի քննարկման ժամանակ որոշում կայացնող մարմինն տալով հայեցողական իրավունք, որ կոչված է ապահովելու բացարկի հիմքերի ոչ թե ձևական կիրառումը, այլ հարցի բովանդակային ու խորքային ուսումնասիրությունն ու լուծումը:

Ընդ որում պրակտիկայում ընդունված է, որ արբիտրի անաչառությունը կասկածի տակ դնելու համար բավարար չէ այդ մասին կատարել հայտարարություն, այլ անհրաժեշտ է ներկայացնել հստակ փաստեր, ապացույցներ և/կամ հիմնավորումներ: Օրինակ՝ սոցիալական կայքերում արբիտրի և արբիտրաժային վարույթի մասնակցի ունեցած կապը (մեկ խմբում ներգրավված լինելը, միմյանց ընկերների ցանկում լինելը ևն) միայն բավարար չէ պնդելու համար, որ արբիտրը չի կարող լինել անաչառ ու անկողմակալ: Փաստը վկայակոչող կողմը պետք է նաև հիմնավորի, որ նման շփումներն ուղղակիորեն ազդել են արբիտրի անաչառության ու անկողմակալության վրա, կամ առկա է էական ազդեցություն ունենալու մեծ վտանգ:

Կարևոր է ընդգծել, որ կողմը կարող է բացարկ հայտնել իր նշանակած կամ իր մասնակցությամբ նշանակված արբիտրին բացարկի համար հիմք հանդիսացող հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ որոշակի ժամկետում:

Վենտրոնի կանոնների համաձայն՝ բացարկի դիմումը կարող է ներկայացվել արբիտրի հաստատման կամ նշանակման մասին ծանուցվելու պահից 15 օրվա ընթացքում, իսկ բացարկի հիմքերի մասին ավելի ուշ իմանալու դեպքում՝ այդ մասին իմանալու պահից 15-օրյա ժամկետում: Բացարկի դիմումները քննում է Արբիտրաժային խորհուրդը: Ընդ որում Արբիտրաժային խորհուրդը բացարկի որոշում է կայացնում Քարտուղարության՝ արբիտրին, վարույթի կողմերին և (կամ) արբիտրաժային տրիբունալի մյուս անդամներին կարծիք հայտնելու հնարավորություն ընձեռելուց հետո:

Բացարկը ընդունելի լինելու դեպքում կատարվում է արբիտրի փոխարինում, որից հետո արբիտրաժային գործով կարող են կիրառվել տվյալ գործով սկզբնական արբիտրաժային տրիբունալի ձևավորման բոլոր կանոնները:

Եթե կողմի ներկայացրած բացարկը մերժվում է, կամ կողմը բացարկի հետ կապված հարցով համաձայն չէ կայացված որոշմանը, ապա կարող է դիմել դատարան՝ բացարկի մասին որոշում ընդունելու խնդրանքով:

26. Ի՞նչ է արբիտրաժային վարույթը, և ի՞նչ ընթացակարգով են քննվում գործերը

Արբիտրաժային վարույթը արբիտրաժային համաձայնության հիման վրա նախաձեռնված ընթացակարգ է, որով արբիտրաժային տրիբունալի իրավասության սահմաններում, կիրառելի իրավունքի և ընթացակարգային կանոնների հիման վրա, ընթանում է գործի ըստ էության քննությունն ու լուծումը:

Այն, որպես կանոն, սկսվում է Արբիտրաժ իրականացնելու պահանջի ներկայացմամբ, ապա ուղեկցվում վեճը քննող արբիտր(ներ)ի նշանակմամբ և մի շարք այլ ընթացակարգային գործողություններով: Վարույթն ավանդաբար իրականացվում է ֆորմալ լսումների միջոցով, ինչի ակնկալվող վերջնարդյունքը փաստաթղթավորված արբիտրաժային վճիռն է: Այսպիսով, արբիտրաժային վարույթը հանդես է գալիս որպես դատական վարույթի արդյունավետ այլընտրանք՝ ապահովելով ներգրավված կողմերի լիարժեք գաղտնիությունը և արբիտրաժին բնորոշ ճկունությանն անմիջականորեն խարսխված մի շարք այլ առավելություններ:

Արբիտրաժային վարույթում չկան ընթացակարգային պարտադիր կանոններ: Արբիտրաժային վարույթը կարգավորող կանոններն են.

- արբիտրաժի վայրի օրենքի (lex loci arbitri) պարտադիր դրույթները,
- արբիտրաժային կանոնները, որոնք կարող են ընտրել կողմերը (օրինակ՝ UNCITRAL-ի կանոնները, AMCA-ի կանոնները, ICC-ի կանոնները):

Ցանկացած կիրառելի կանոնների շրջանակում արբիտրաժային վարույթի կողմերն իրավասու են մշակելու կամ ընտրելու ընթացակարգ, որը հարմարեցված է իրենց վեճի բնույթին: Ընդ որում այս հանգամանքը արբիտրաժային վարույթի հատկանշական կողմերից մեկն է:

Ինստիտուցիոնալ արբիտրաժի դեպքում արբիտրաժային վարույթը, որպես կանոն, բաղկացած է իրար հաջորդող հետևյալ հիմնական փուլերից.


1. Արբիտրաժ իրականացնելու պահանջի ներկայացում,
2. պահանջի պատասխանի և/կամ հակընդդեմ հայցի ներկայացում,
3. արբիտրաժային տրիբունալի ձևավորում,
4. գործի քննություն,
5. վճռի կայացում:

Այս փուլերը կարող են տարբերվել՝ կախված նրանից, թե ինչ ընթացակարգով է անցկացվում գործի քննությունը: Այսպես, օրինակ, AMCA-ի Արբիտրաժային կանոնների համաձայն՝ գործերը կարող են քննվել ինչպես Կանոններով սահմանված ընդհանուր կարգով, այնպես էլ արագացված ընթացակարգով: Ընթացակարգերի տարբերությունը վերաբերում է պատասխանի, ինչպես նաև այլ միջնորդությունների կամ փաստաթղթերի ներկայացման ժամկետներին, արբիտր(ներ)ի նշանակման կարգին, վարույթի եղանակին ու գործերի քննության ժամկետներին:

27. Ինչպիսի՞ն է վարույթը ընդհանուր ընթացակարգով քննության դեպքում

Ընդհանուր ընթացակարգով արբիտրաժային վարույթը, որպես կանոն, ներառում է արբիտրաժային վարույթին բնորոշ ընթացակարգային բոլոր փուլերը: Ընդհանուր ընթացակարգի քննության առանձնահատկությունները մեծապես կախված են արբիտրաժային վարույթի նկատմամբ կիրառելի կանոններից:

Թեև արբիտրաժային ոլորտը կարգավորող օրենսդրությունն առավելապես թույլ է տալիս կողմերին որոշել արբիտրաժային վարույթի ընթացակարգը, սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վեճի կողմերը մեծ մասամբ նախապատվություն են տալիս արբիտրաժային կենտրոնների արբիտրաժային կանոններին, որոնք ունեն վեճերի լուծման հստակ ձևակերպված ընթացակարգեր: Այսպես, օրինակ, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնն առաջարկում է վեճերի լուծման երկու ընթացակարգ՝ ընդհանուր և արագացված: Գործի նկատմամբ Արբիտրաժային կանոնները կիրառելու դեպքում ընդհանուր ընթացակարգով քննվող արբիտրաժային վարույթն ունի հետևյալ պատկերը.



Արբիտրաժային վարույթի փուլերը՝ AMCA-ի կանոնների համաձայն

28. Ինչպե՛ս է գործն ընդհանուր ընթացակարգով քննվում AMCA-ում

Ընդհանուր ընթացակարգով գործի քննությունները կարող են տարբերվել ըստ կիրառելի իրավունքի և Արբիտրաժային կանոնների: Այդուհանդերձ, ընթացակարգի անցկացման առանձնահատկություններից անկախ, ընդունված է, որ արբիտրաժային տրիբունալը պարտավոր է գործի քննությունն անցկացնել առանց անհարկի ձգձումների ու ծախսերի:

Արբիտրաժային վարույթի՝ ընդհանուր ընթացակարգով քննությունն ավելի լավ պատկերացնելու համար քննարկենք Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի կանոններով նախատեսված կարգը, որը հիմնված է ICC-ի արբիտրաժային կանոնների վրա:

Այսպես, Կենտրոնում քննվող վեճերով արբիտրաժի վայրը ճանաչվում է Երևանը, եթե կողմերը այլ համաձայնություն չունեն, կամ արբիտրաժային տրիբունալն այլ բան չի որոշել: Արբիտրաժային տրիբունալը, խորհրդակցելով կողմերի հետ, իրավասու է լուծմները, նիստերը, խորհրդակցություններն անցկացնելու ցանկացած վայրում, որը կհամարի նպատակահարմար: Սակայն, լուծմների անցկացման վայրի նշված հանգամանքից անկախ, տրիբունալի՝ որոշման կայացման վայրը կհամարվի արբիտրաժի գտնվելու վայրը:

Արբիտրաժային գործ նախաձեռնելու համար վեճի կողմը, որը ցանկանում է արբիտրաժային վարույթ սկսել, պետք է Արբիտրաժ իրականացնելու պահանջ ներկայացնի Կենտրոնի քարտուղարությանը: Քարտուղարությունը պահանջը ստանալուն պես այն ուղարկում է պատասխանողին և վերջինիս՝ պահանջը ստանալը դիտարկվում է որպես արբիտրաժային վարույթի սկիզբ:

Այնուհետև, Արբիտրաժային կանոնների համաձայն, նշանակվում է միանձնյա արբիտր կամ եռակազմ արբիտրաժային տրիբունալ, ինչից հետո Քարտուղարությունը գործը փոխանցում է արբիտրաժային տրիբունալին:

Արբիտրաժային գործի կողմերը վարույթին կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցիչների միջոցով: Քարտուղարությունն ու արբիտրաժային տրիբունալը ցանկացած ժամանակ վարույթի կողմից կարող է պահանջել ներկայացուցչի լիազորությունները հավաստող լրացուցիչ ապացույցներ: Վարույթի կողմը սահմանափակված չէ ներկայացուցիչների թվով, ինչպես նաև կարող է փոխարինել իր ներկայացուցչին: Այնուամենայնիվ, ներկայացուցչի փոփոխության դեպքում վարույթի կողմը պարտավոր է այդ մասին անմիջապես գրավոր եղանակով հայտնել Քարտուղարությանը, արբիտրաժային տրիբունալին և վարույթի մյուս կողմերին: Եթե արբիտրաժային տրիբունալի համար նման փոփոխությունը համարվի անընդունելի ու առաջացնի շահերի բախման հնարավոր վտանգ, արբիտրաժային

տրիբունալն իրավասու է ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ, ներառյալ նոր ներկայացուցչի՝ վարույթից մասնակի կամ ամբողջական հեռացում:

Կենտրոնում վեճերի քննությունն անցկացվում է Արբիտրաժային կանոնների համաձայն, իսկ այն հարցերը, որոնք կարգավորված չեն Կանոններով, ըստ կողմերի համաձայնեցրած կանոնների: Նման համաձայնության բացակայության դեպքում հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: Արբիտրաժի լեզվի ընտրության ժամանակ ևս գործում է նույն սկզբունքը. կողմերի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալն իրավասու է ընտրելու վարույթի լեզուն՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, կողմերին, պայմանագրի լեզուն և այլ հանգամանքներ:

Գործի քննության և վեճի լուծման համար կարևոր նշանակություն ունի վեճի նկատմամբ կիրառելի իրավունքը, որի ընտրության հարցում կողմերն առաջնորդվում են պայմանագրի ազատության սկզբունքով: Կողմերի համաձայնության բացակայության դեպքում կիրառելի իրավունքը ընտրում է արբիտրաժային տրիբունալը: Կանոնների համաձայն՝ տեղական վեճերի նկատմամբ կիրառելի է ՀՀ օրենսդրությունը: Կողմերը ՀՀ օրենսդրությամբ թույլատրված դեպքերում և կարգով կարող են ընտրել այլ կիրառելի իրավունք:

Վեճի քննության ընթացակարգային կանոնները սահմանվում են կողմերի համաձայնությամբ, նման համաձայնության բացակայության դեպքում ըստ Արբիտրաժային կանոնների: Վարույթի ամբողջ ընթացքում արբիտրաժային տրիբունալը կողմի դիմումով իրավասու է ձեռնարկելու լրացուցիչ միջոցներ ու տալու կողմերի համար պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ՝ ուղղված վարույթի գաղտնիության, կողմերի առևտրային գաղտնիքի կամ այլ տեսակի գաղտնիքի պահպանմանը:

Գործի քննության ողջ ընթացքում արբիտրաժային տրիբունալը կոչված է արդար և անաչառ գործելու՝ ապահովելով բոլոր կողմերի ողջամիտ հնարավորությունը ցանկացած հարցի շուրջ դիրքորոշում հայտնելու: Արբիտրաժային գործի քննության շրջանակում արբիտրաժային տրիբունալը հնարավորինս սեղմ ժամկետում պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները գործի փաստերը հաստատելու համար, ինչով պայմանավորված այն կարող է որոշում կայացնել լսելու վկաներին, կողմերի կամ այլ անձի նշանակած փորձագետներին, վարույթի ընթացքում ցանկացած պահի կողմերից պահանջել լրացուցիչ ապացույցներ:

Արբիտրաժային վարույթի լուսմների անցկացումից հետո արբիտրաժային տրիբունալը գործի քննությունը հայտարարում է ավարտված և անցնում վճռի կայացման փուլին: Ընդհանուր ընթացակարգի դեպքում արբիտրաժային տրիբունալը ընթացակարգի արձանագրության ստորագրման օրվանից վեց ամսվա ընթացքում պետք է կայացնի վերջնական վճիռ, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Եթե արբիտրաժային տրիբունալը կազմված է մեկից ավելի արբիտրներից, ապա վճիռը կայացվում է ձայների մեծամասնությամբ: Եթե առկա չէ ձայների մեծամասնություն, ապա վճիռը կայացնում է արբիտրաժային տրիբունալի նախագահողը:

29. Ի՞նչ նշանակություն ունի քննության ընթացակարգի արձանագրությունը ընդհանուր ընթացակարգով քննվող արբիտրաժային վարույթում

Քննության ընթացակարգի արձանագրությունը ընթացակարգային փաստաթուղթ է, որը կազմվում է արբիտրաժային տրիբունալի ձևավորումից հետո գործի տվյալները, կողմերի դիրքորոշումները, գործով պարզման ենթակա հարցերի շրջանակը սահմանելու և այլ հարցեր շարադրելու համար:

Մշտապես գործող բազմաթիվ արբիտրաժային կենտրոնների, ինչպես, օրինակ, ICC-ի արբիտրաժային կանոններում առանցքային դեր է զբաղեցնում նշված արձանագրության կազմումը, որպես արբիտրաժային վարույթի սկիզբ:

AMCA-ի Արբիտրաժային կանոնների համաձայն՝ արբիտրաժային տրիբունալը գործը ստանալուն պես, եթե բացակայում է իրավասության հետ կապված առարկություն, կազմում է գործի քննության ընթացակարգի արձանագրություն (այսուհետ՝ քննության ընթացակարգի արձանագրություն) (կիրառելի չէ արագացված ընթացակարգի դեպքում), որը պարտադիր ներառում է ներքոնշյալ տեղեկությունը.

- կողմերի ամբողջական անունները (անվանումները), նրանց, ներառյալ ներկայացուցիչների կոնտակտային տվյալները,
- արբիտր(ներ)ի անուն(ներ)ն ու այն կոնտակտային տվյալները, որն անհրաժեշտ է վարույթի իրականացման համար,
- կողմերի պահանջների հակիրճ նկարագրությունն ու դրանց դրամային արժեքը, եթե հնարավոր է գնահատել,
- այն հարցերը, որ վարույթի ընթացքում ենթակա են պարզման,
- արբիտրաժի վայրը,
- վարույթի նկատմամբ կիրառելի կանոնների առանձնահատկությունները,
- ցանկացած այլ ընթացակարգային հարց, որը տրիբունալը անհրաժեշտ կհամարի նշել:

Քննության ընթացակարգի արձանագրությունը վարույթի բոլոր մասնակիցներն ու տրիբունալի արբիտրները պետք է ստորագրեն գործը արբիտրաժային տրիբունալին հանձնելու պահից 30-օրյա ժամկետում: Կողմերից մեկի չստորագրման դեպքում արձանագրությունն ուժի մեջ կմտնի մյուս բոլոր մասնակիցների ու արբիտրների ստորագրելուց հետո և սահմանված ժամկետի ավարտի պահից սկսած:

Քննության ընթացակարգի արձանագրությունը կարևոր նշանակություն ունի գործի քննությունը հաջորդ ենթափուլ տեղափոխելու համար, քանի որ, այդ պահից սկսած, կողմերը զրկվում են նոր պահանջներ ներկայացնելու հնարավորությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման ուշացումը արբիտրաժային տրիբունալը թույլատրելի է համարում:

Կողմերի հետ նշված հարցերը քննության ընթացակարգի արձանագրությամբ քննարկելուց և դրանց լուծումներ տալուց հետո կամ նման քննարկումներին զուգահեռ՝ արբիտրաժային տրիբունալը սահմանում է ընթացակարգային գործողությունների ժամանակացույց, որը, սակայն, վերջնական չէ, և արբիտրաժային տրիբունալը հետագայում կարող է փոփոխել կամ լրացնել՝ հաշվի առնելով անհրաժեշտությունն ու կողմերի կարծիքները:

Վերը նշված և այլ հարցերի քննարկման համար կազմակերպվող խորհրդակցություններն ու լսումները կարող են անցկացվել ինչպես անձամբ կողմերի մասնակցությամբ, այնպես էլ տեսաձայնային, հեռախոսային կամ համանման այլ կապի միջոցներով: Անհրաժեշտության դեպքում արբիտրաժային տրիբունալն իրավունք ունի պահանջելու կողմերի ներկայությունը՝ անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով:


30. ԻՆչ Է արագացված ընթացակարգը, ինչպե՞ս և ե՞րբ է այն կիրառվում

Արագացված ընթացակարգը արբիտրաժային վարույթի պարզեցված տեսակ է, որը հիմնականում իրականացվում է գրավոր եղանակով: Վեճն այս ընթացակարգով կարող է լուծվել բացառապես կողմերի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա՝ առանց վկաների կամ փորձագետների հարցաքննության և լսումների, և ավարտվել վերջնական արբիտրաժային վճռի կայացմամբ: Արագացված ընթացակարգերը դարձել են ինստիտուցիոնալ արբիտրաժներին բնորոշ հատկանիշ: Արագացված ընթացակարգի կիրառման հիմքերը սահմանվում են արբիտրաժային կանոններով և կոչված են երաշխավորելու սեղմ ժամկետներում գործի քննությունն ու վճռի կայացումը:

Օրինակ, համաձայն Կենտրոնի արբիտրաժային կանոնների, եթե գործի՝ ընդհանուր կարգով քննության և վճռի կայացման առավելագույն ժամկետը վեց ամիսն է՝ քննության ընթացակարգի արձանագրության ստորագրման պահից սկսած, ապա արագացված ընթացակարգի դեպքում մինչև 3 ամիսն է՝ արբիտրաժային տրիբունալի ձևավորման պահից սկսած:

ԱՐԱԳԱՅՎԱԾ ՎԱՐՈՒՅԹ

Նախապայման՝
Տեղական գործով հայցագինը չի գերազանցում 10,000,000 ՀՀ դրամը:
Այլ գործերով, եթե առկա է կողմերի գրավոր համաձայնությունը:



Արագացված ընթացակարգի նկարագիրը՝ ըստ AMCA-ի արբիտրաժային կանոնների

Արագացված վարույթը կիրառվում է երկու առանձին դեպքերում.

1. Որպեսզի գործը կենտրոնում քննվի արագացված վարույթի կարգով, անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն.

⇒ վեճը պետք է լինի տեղական,

⇒ հայցվորի պահանջը պետք է լինի գույքային բնույթի և չգերազանցի 10 միլիոն ՀՀ դրամը:

2. Երբ առկա չեն վերը նշված պայմանները, սակայն առկա է կողմերի գրավոր համաձայնությունը՝ կիրառելու արագացված ընթացակարգ:

Անկախ վերը նշված հիմքերից, ըստ Արբիտրաժային կանոնների, արբիտրաժային վարույթը չի իրականացվում արագացված կարգով, եթե.

➢ կողմերը համաձայնել են հրաժարվելու արագացված վարույթից, կամ

➢ Արբիտրաժային խորհուրդն իր նախաձեռնությամբ կամ կողմերի պահանջով որոշել է, որ տվյալ վեճի քննությունը նպատակահարմար չէ անցկացնել արագացված վարույթի կարգով:

31. Որո՞նք են արագացված և ընդհանուր ընթացակարգերի տարբերությունները

AMCA-ի Արբիտրաժային կանոններում ընդհանուր և արագացված ընթացակարգերի միջև մի շարք ուշագրավ տարբերություններ կան:

ԱՅՄՊԵՍ

- Արբիտրաժային կանոնների համաձայն՝ արագացված ընթացակարգի կանոնները կիրառվում են միայն այն տեղական վեճերի նկատմամբ, որոնցով հայցագիրը չի գերազանցում 10 միլիոն ՀՀ դրամը:
- Ի տարբերություն ընդհանուր ընթացակարգի, որտեղ կողմերը կարող են պայմանավորվել մեկ կամ երեք արբիտրից բաղկացած տրիբունալի շուրջ, արագացված ընթացակարգի կիրառման դեպքում արբիտրաժային տրիբունալը պետք է կազմված լինի միանձնյա արբիտրից, անգամ եթե կողմերն այլ բան են նախատեսել արբիտրաժային համաձայնության մեջ:
- Ի տարբերություն ընդհանուր ընթացակարգի, Արբիտրաժային կանոնների հավելված 2-ի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, արագացված ընթացակարգի կիրառման դեպքում նույն կանոնների 26-րդ հոդվածով նախատեսված քննության ընթացակարգի արձանագրություն չի կազմվում:

- Արագացված ընթացակարգով վարույթի դեպքում Արբիտրաժ իրականացնելու պահանջի պատասխան ներկայացնելու ժամկետը 10 օր է, մինչդեռ ընդհանուր ընթացակարգով վարույթի դեպքում 30 օր:
- Արագացված վարույթի դեպքում արբիտրի հաստատումը կամ նշանակումը տեղի է ունենում Արբիտրաժ իրականացնելու պահանջի պատասխանը ստանալուց հետո կամ դրա համար նախատեսված ժամկետի ավարտից 15 օրվա ընթացքում: Ընդհանուր ընթացակարգի դեպքում գործում է 30-օրյա ժամկետ:
- Արագացված վարույթի դեպքում տրիբունալի ձևավորման պահից երեք ամսվա ընթացքում տրիբունալը պետք է վերջնական վճիռ կայացնի: Ընդհանուր վարույթի դեպքում այս ժամկետը վեց ամիս է:
- Տարբերվում են նաև արբիտրաժային վճարները, որոնք ներկայացված են 33-րդ կետում:

Բացի այդ՝ արբիտրի նշանակումից հետո, ի տարբերություն ընդհանուր կարգով քննության, արագացված կարգի դեպքում արբիտրաժային տրիբունալը քննության ընթացակարգի արձանագրություն չի կազմում: Ավելին՝ արբիտրաժային տրիբունալի ձևավորման պահից կողմերը զրկվում են նոր պահանջներ ներկայացնելու հնարավորությունից, եթե տրիբունալը սովյալ գործով կողմի համար բացառություն չի սահմանում, ինչի համար արբիտրաժային տրիբունալը հաշվի է առնում պահանջի բնույթը, վարույթի փուլը, հնարավոր ֆինանսական հետևանքներն ու էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Ըստ Արբիտրաժային կանոնների՝ Արբիտրաժային խորհուրդն ունի բացառիկ իրավունք դադարեցնելու արագացված վարույթն ու գործի հետագա քննության համար սահմանելու ընդհանուր կարգ: Արբիտրաժային խորհուրդն իր այս լիազորությունը կարող է իրացնել ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ կողմերից մեկի պահանջի հիման վրա՝ խորհրդակցելով արբիտրաժային տրիբունալի և կողմերի հետ: Ընդ որում՝ նման որոշման կայացման դեպքում Արբիտրաժային խորհուրդը իրավասու է պահպանելու նշանակված արբիտրին կամ ձևավորելու նոր տրիբունալ՝ մեկ կամ երեք արբիտրի կազմով:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարող ենք ընդգծել, որ Կենտրոնում ստեղծված են բոլոր նախադրյալները՝ մինչև 10 միլիոն ՀՀ դրամ հայցապահանջով տեղական գործերին, իսկ կողմերի համաձայնության դեպքում նաև այլ բնույթի վեճերի տալու արագ ու միևնույն ժամանակ արդարացի և արհեստավարժ լուծում: ՀՀ-ում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, թեև պարզեցված և արագացված վարույթների համար ունեն գործի քննության համանման ժամկետ, սակայն, որպես կանոն, գործնականում զրկված են վեճը սովյալ ժամկետում լուծելու հնարավորությունից՝ գերծանրաբեռնվածության պատճառով: Եթե դրան գումարենք վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում գործերի քննության ժամկետները, ապա գործի քննությունը կարող է տարիներ տևել:

32. Ինչպե՞ս է ապահովվում գաղտնիությունը արբիտրաժային վարույթում

Արբիտրաժի կարևորագույն առավելություններից մեկը **գաղտնիությունն** է: Ըստ այդմ՝ տարբեր արբիտրաժային հաստատությունների կանոններում հստակ ամրագրված է այս սկզբունքը և, դրան համապատասխան, կողմերի, արբիտրների և այլ անձանց պարտականությունները: Ավելին՝ որոշ հաստատություններ ծանուցումների ներկայացման կամ գաղտնիության համաձայնագրերի կնքման միջոցով ապահովում են գաղտնիության պայմանի իրացումը:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Կանոնների համաձայն՝ արբիտրաժային ամբողջ վարույթը, ներառյալ բոլոր տեղեկությունները, կողմերի անձնական տվյալները, որոշումները (արբիտրների, Արբիտրաժային խորհրդի կամ Քարտուղարության ընդունած), լսումները գաղտնի են, ենթակա չեն որևէ եղանակով հրապարակման, բացահայտման կամ տրամադրման երրորդ անձանց, եթե առանձին դեպքերի համար Կանոններով բացառություն սահմանված չէ:

Ընդ որում գաղտնիության պահանջը հավասարապես վերաբերում է ոչ միայն արբիտրներին ու Քարտուղարությանը, այլև կողմերին, նրանց ներկայացուցիչներին, վկաներին, փորձագետներին և բոլոր նրանց, ովքեր իրենց գործունեության բերումով տիրապետում են նշված տվյալներին: Կանոններով սպառիչ թվարկված են այն դեպքերը, երբ խորհրդապահական (կոնֆիդենցիալ) տեղեկությունը կարող է հրապարակվել:

33. Արդյո՞ք արբիտրաժային վարույթում կարող են կիրառվել հայցի ապահովման և արտակարգ միջոցներ

Հայցի ապահովման և արտակարգ միջոցները հանդես են գալիս որպես օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքներ, որոնցով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ կերպով, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել կայացված ակտի կատարումը:

Այս ինստիտուտը կոչված է արբիտրաժային տրիբունալի նախապես ձեռնարկած որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանելու հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Դրանով իսկ այն ուղղված է անձանց խախտված իրավունքներն իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն:

Արբիտրաժային վարույթի ընթացքում հայցի ապահովման միջոցներ կիրառելու հնարավորությունը երաշխավորված է ՀՀ օրենսդրությամբ: Հատկանշական է, որ հայցի ապահովման միջոցների կիրառման համար կողմերը կարող են դիմել նաև արբիտրաժի գտնվելու վայրի դատարան՝ խնդրելով դատական աջակցություն: Ընդ որում՝ նման դիմում հնարավոր է ներկայացնել ինչպես մինչև վեճը արբիտրաժին հանձնելը, այնպես էլ արբիտրաժային վարույթի ընթացքում: Նշված դիմումների ներկայացմանն ու քննության առանձնահատկություններին մանրամասնորեն կանդրադառնանք հաջորդ ենթաբաժնում: Կարևոր է ընդգծել, որ դատարանին նման դիմում ներկայացնելը չի կարող մեկնաբանվել որպես կողմի հրաժարում արբիտրաժային համաձայնությունից կամ արբիտրաժային վարույթից:

AMCA-ի՝ որպես ինստիտուցիոնալ կենտրոնի Կանոններով ևս երաշխավորված է ոչ միայն հայցի ապահովման, այլև արտակարգ միջոցների կիրառման հնարավորությունը:

Այսպես, օրինակ, Արբիտրաժային կանոնների համաձայն՝ արբիտրաժային վարույթի ցանկացած փուլում կողմի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ (proprio motu) արբիտրաժային տրիբունալն իրավասու է կիրառելու հայցի ապահովման միջոցներ, որոնք պարտադիր կատարման ենթակա են վարույթի մասնակիցների համար: Նման միջոցների հատուկ ցանկ չի սահմանվում, ինչն արբիտրաժային տրիբունալին տալիս է վեճի արդարացի լուծման համար հնարավոր խոչընդոտ հանդիսացող յուրաքանչյուր երևույթի, գործողության, անգործության դեմ որոշակի միջոցներ ձեռնարկելու

հնարավորություն: Նման միջոցներից կարող են լինել, օրինակ, կողմին պարտավորեցնել ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց (չօգտագործել կամ չօտարել որոշակի գույք, չգրադվել գործունեության առանձին տեսակներով, չկնքել քաղաքացիա-իրավական գործարքներ կամ նման գործարքներ կնքելու համար չբանակցել տրիբունալի սահմանած շրջանակի կամ նշած կոնկրետ անձանց հետ նև), կամ հակառակը՝ կատարել որոշակի գործողություններ (գույքն ի պահ հանձնել տրիբունալի նշած անձին, ձեռնարկել լրացուցիչ միջոցներ որոշակի գույքի պահպանությունն ապահովելու համար, փոխել վեճի առարկա գույքի պահման պայմանները՝ կանխելով դրա փչացումը կամ ոչնչացումը, դադարեցնել որոշակի տեղեկության հասանելիության ապահովումը երրորդ անձանց համար նև):

Չեն բացառվում դեպքեր, երբ վերը նշված հայցի ապահովման միջոցների կիրառման անհրաժեշտությունն առաջանա մինչև վեճն արբիտրաժային հաստատությանը հանձնելու պահը: Այս դեպքում ևս արբիտրաժային համաձայնության կողմերն իրավունք ունեն արտակարգ միջոց կիրառելու դիմում ներկայացնելու Կենտրոնին: Դրա ընթացքն ապահովելու համար Արբիտրաժային խորհրդի նախագահը հնարավորինս սեղմ ժամկետում (ուղենշային է երկու օրը, եթե չկան խանգարող հանգամանքներ) նշանակում է արբիտր: Արբիտրի կիրառած ցանկացած արտակարգ միջոց կողմերի համար պարտադիր կատարման ենթակա է: Արտակարգ միջոցներ կիրառելու դիմումը կմերժվի, եթե կողմերը նախապես (արբիտրաժային համաձայնությամբ կամ այլ եղանակով) հրաժարվել են Կենտրոնին նման դիմում ներկայացնելու հնարավորությունից: Արբիտրաժային կանոնների 3-րդ հավելվածով մանրամասնորեն կանոնակարգվում են վարույթի՝ արտակարգ միջոցներ կիրառելու ընթացակարգային հարցերը:

34. Ո՞ր դեպքերում կարող է ավարտվել արբիտրաժային վարույթը

Արբիտրաժային վարույթը, որպես կանոն, ավարտվում է արբիտրաժային վճռի կայացմամբ: Այդուհանդերձ, լինում են դեպքեր, երբ արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում արբիտրաժային վարույթը մինչև վճռի կայացումն ավարտելու:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել արբիտրաժային վարույթի ավարտման հետևյալ հիմքերը.

1. հայցվորի հրաժարումը հայցից,
2. արբիտրաժային վճարները չկատարելը,
3. արբիտրաժային վարույթի անհնարին կամ աննպատակահարմար ճանաչվելը,
4. արբիտրաժային վարույթի ընթացքում վեճի կողմերի՝ հաշտության համաձայնության կնքումը կամ հաշտարարության գործընթացում ներգրավվելը,
5. կողմերի՝ վարույթն ավարտելու փոխադարձ համաձայնությունը:

Ժամանակակից արբիտրաժային կենտրոններն իրենց կանոններում նախատեսում են վարույթի ավարտման և կասեցման հիմքեր: Այսպես, AMCA-ն, առաջնորդվելով միջազգային լավագույն փորձով, իր կանոններում նախատեսել է ինչպես արբիտրաժային վարույթի ավարտման, այնպես էլ կասեցման հիմքեր: Մասնավորապես՝ Արբիտրաժային կանոնների 38-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է արբիտրաժային վարույթի կասեցման մեկ հիմք, ըստ որի՝ վարույթը կարող է կասեցվել, եթե կողմերը համաձայնում են հաշտարարության իրականացմանը: Նույն հոդվածի 4-րդ մասը նախատեսում է տրիբունալի արբիտրաժային վարույթն ավարտելու հիմքերը: Այսպես, արբիտրաժային տրիբունալը, հաշվի առնելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում արբիտրաժային վարույթն ավարտելու, եթե.

(1) հայցվորը հրաժարվում է հայցից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանողն առարկում է գործի վարույթի ավարտման դեմ, և արբիտրաժային տրիբունալը ճանաչում է նրա օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում.

(2) կողմերը պայմանավորվում են վարույթի դադարեցման մասին.

(3) արբիտրաժային տրիբունալը համարում է, որ վարույթի շարունակությունն անհրաժեշտ չէ, կամ այն դարձել է անհնարին, կամ.


(4) Զարտուղարությունը համապատասխան հայցը, հակընդդեմ հայցը կամ հակընդդեմ պահանջը համարել է հետ վերցված՝ ծախսերի համար կանխավճար չվճարելու հիմքով:

35. ԻՆչ են ներառում արբիտրաժային ծախսերը

Վեճերի լուծման արբիտրաժային եղանակի ընտրությունը ենթադրում է որոշակի ծախսեր: Դրանք, որպես կանոն, ներառում են.

- Արբիտրաժային տրիբունալի ծախսերը. ներառում են արբիտրների վարձատրությունն ու նրանց այլ ծախսերի հատուցումը:
- Կողմերի կրած ծախսերը. ներառում են այն ողջամիտ ծախսերը, որ կողմերը կատարում են արբիտրաժային վարույթին մասնակցելու համար կամ դրա կապակցությամբ, ներառյալ ներկայացուցչի վարձատրության գումարը:
- Արբիտրաժային գործավարության վճարները, այն է՝ արբիտրաժային հաստատության ծախսերը, ներառյալ գործավարության վճարները: Ad hoc արբիտրաժային վարույթի դեպքում նշված ծախսերը առկա չեն:
- Այլ ծախսեր. կարող են ներառել վարույթին մասնակցած փորձագետների, մասնագետների վարձատրության գումարներն ու անհրաժեշտ այլ ծախսեր:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԸ



Արբիտրաժային ծախսերի վերջնական չափը և հատուցման կարգը արբիտրաժային վարույթի վերջում որոշում է արբիտրաժային տրիբունալը՝ սահմանելով, թե որ կողմը կամ կողմերից յուրաքանչյուրն ինչ համամասնությամբ է կրում դրանք վճարելու, իսկ վճարված լինելու դեպքում վճարած կողմին փոխհատուցելու պարտավորությունը: Նման որոշման կայացման ժամանակ արբիտրաժային տրիբունալը հաշվի է առնում բազմաթիվ հանգամանքներ, ներառյալ գործի ելքը, վարույթի մասնակիցների բարեխղճությունը, նրանց ներգրավվածության աստիճանն ու ընդհանուր վարույթում կատարված գործողությունների ծավալը:

Ինստիտուցիոնալ արբիտրաժի դեպքում այս ծախսերին է գումարվում կենտրոնի սահմանած ծախսերը, օրինակ՝ արբիտրաժային գործի գրանցման և/կամ գործավարության վճարները: Օրինակ՝ AMCA-ի դեպքում նախատեսված է միայն գործավարության վճարը:

36. Ի՞նչպես են հաշվարկվում արբիտրաժային ծախսերը AMCA Արբիտրաժային կանոններով

AMCA-ի կանոններով նախատեսված սանդղակներով հստակ սահմանված են արբիտրաժային վճարները: Քանի որ սանդղակային հաշվարկի հիմքում դրված է հայցապահանջի գումարի չափը, բոլոր այն դեպքերում, երբ հայցապահանջի գումար սահմանված չէ, կամ պահանջը ոչ գումարային բնույթ ունի, արբիտրների վարձատրության և գործավարության վճարների չափերը որոշում է Քարտուղարությունը: Արբիտրների վարձատրության չափի որոշման ժամանակ Քարտուղարությունը մի շարք հանգամանքների հետ հաշվի է առնում նաև վեճի բարդությունը, արբիտրների փորձառությունը ևն: Քարտուղարությունը, առանձին դեպքերում բացառիկ հանգամանքներ հաշվի առնելով, կարող է շեղվել սանդղակով սահմանված գործավարության վճարների չափերից՝ պայմանով, որ իր որոշած գումարը չի գերազանցի սանդղակով սահմանված առավելագույն չափը: Բացառիկ հանգամանքների առկայության պարագայում Արբիտրաժային խորհուրդն իրավասու է առանձին դեպքերում փոփոխելու արբիտրների վճարների չափը:

Այսպես, Արբիտրաժային կանոնների համաձայն, տեղական արբիտրաժային վեճերով գործավարության վճարների ու արբիտրների վարձատրության չափերը որոշվում են հետևյալ սանդղակով:

ՀԱՅՅԱՊԱՀԱՆՋԻ ԱՐԺԵՔԸ (ՀՀ ԴՐԱՄ)	ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ (ՀՀ ԴՐԱՄ)	ՄԵԿ ԱՐԲԻՏՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ ԴՐԱՄ) ¹¹
Մինչև 5.000.000	150.000	170.000
5.000.001 – 10.000.000	150.000 + 5.000.000-ը գերազանցող մասի 2,5%-ը	170.000 + 5.000.000-ը գերազանցող մասի 5%-ը
10.000.001 – 20.000.000	250.000 + 10.000.000-ը գերազանցող մասի 2%-ը	370.000 + 10.000.000-ը գերազանցող մասի 3%-ը
20.000.001 – 40.000.000	490.000 + 20.000.000-ը գերազանցող մասի 1,5%-ը	710.000 + 20.000.000-ը գերազանցող մասի 2,5%-ը
40.000.001 – 80.000.000	790.000 + 40.000.000-ը գերազանցող մասի 1%-ը	1.210.000 + 40.000.000-ը գերազանցող մասի 2%-ը

¹¹ Արբիտրների վարձատրության սահմանված չափերը չեն ներառում հաշվեգրման ու վճարման ենթակա հարկերն ու պարտադիր այլ վճարներ:

80.000.001 – 200.000.000	1.190.000 + 80.000.000-ը գերազանցող մասի 0,5%-ը	2.010.000 + 80.000.000-ը գերազանցող մասի 1,5%-ը
200.000.001 – 400.000.000	1.790.000 + 200.000.000-ը գերազանցող մասի 0,4%-ը	3.810.000 + 200.000.000-ը գերազանցող մասի 1,2%-ը
400.000.001 – 1.000.000.000	2.590.000 + 400.000.000-ը գերազանցող մասի 0,3%-ը	6.210.000 + 400.000.000-ը գերազանցող մասի 0,7%-ը
1.000.000.001 – 4.000.000.000	4.390.000 + 1.000.000.000-ը գերազանցող մասի 0,1%-ը	10.410.000 + 1.000.000.000-ը գերազանցող մասի 0,2%-ը
4.000.000.001 և ավելի	7.390.000 + 4.000.000.000-ը գերազանցող մասի 0,05%-ը	16.410.000 + 4.000.000.000-ը գերազանցող մասի 0,1%-ը

Արագացված ընթացակարգի արբիտրաժային ծախսերը որոշվում են հետևյալ սանդղակով:

Հայցագինը (ՀՀ դրամ)	Գործավարության վճարները արագացված ընթացակարգի համար (ՀՀ դրամ)	Արբիտրների վարձատրությունը արագացված ընթացակարգի համար (ՀՀ դրամ)
Մինչև 5.000.000	100.000	120.000
5.000.001 – 10.000.000	100.000 + 5.000.000-ը գերազանցող գումարի 2%- ը	120.000 + 5.000.000-ը գերազանցող գումարի 2%-ը
10.000.001 – 20.000.000	200.000 + 10.000.000-ը գերազանցող գումարի 1,5%-ը	220.000 + 10.000.000-ը գերազանցող գումարի 1,5%-ը
20.000.001 – 40.000.000	390.000 + 20.000.000-ը գերազանցող գումարի 1%- ը	4.100.000 + 20.000.000-ը գերազանցող գումարի 1%-ը
40.000.001 – 80.000.000	590.000 + 40.000.000-ը գերազանցող գումարի 0,5%-ը	610.000 + 40.000.000-ը գերազանցող գումարի 0,5%-ը

80.000.001 – 200.000.000	790.000 + 80.000.000-ը գերազանցող գումարի 0,4%-ը	810.000 + 80.000.000-ը գերազանցող գումարի 0,4%-ը
200.000.001 – 400.000.000	1.190.000 + 200.000.000-ը գերազանցող գումարի 0,3%-ը	1.300.000 + 200.000.000-ը գերազանցող գումարի 0,3%-ը
400.000.001 – 1.000.000.000	1.590.000 + 400.000.000-ը գերազանցող գումարի 0,2%-ը	1.700.000 + 400.000.000-ը գերազանցող գումարի 0,2%-ը
1.000.000.001 – 4.000.000.000	2.190.000 + 1.000.000.000-ը գերազանցող գումարի 0,1%-ը	2.300.000 + 1.000.000.000-ը գերազանցող գումարի 0,1%-ը
Ավելի քան 4.000.000.001	3.390.000 + 4.000.000.000-ը գերազանցող գումարի 0,05%-ը	3.500.000 + 4.000.000.000-ը գերազանցող գումարի 0,05%- ը

Միջազգային արբիտրաժային վեճերով՝ սանդղակում նշված գործավարության վճարներն ու արբիտրների վարձատրությունը Քարտուղարությունը կարող է ավելացնել մինչև 300%-ի չափով հաշվի առնելով գործի բարդությունը, ժամանակը, որը ծախսվելու է վեճը լուծելու համար, կողմերի ու ներգրավված անձանց քանակը, կազմակերպչական գործառույթների ծավալը և այլ հանգամանքներ:

Արբիտրի վարձատրության չափը սանդղակով սահմանվում է մեկ արբիտրի համար: Ուստի երեք արբիտրի կազմով տրիբունալի ձևավորման դեպքում արբիտրների վարձատրության՝ սանդղակով սահմանված չափը եռապատկվում է:

Կենտրոնի կանոնները հայցից հրաժարման կամ վարույթն այլ կերպ ավարտվելու դեպքերի համար նախատեսում են ծախսերի փոխհատուցում:

Քանի որ Կենտրոնին դիմելիս վեճի կողմը պարտավոր է ներկայացնել նաև գործավարության վճարը կատարած լինելը հավաստող անդորրագիր, գործավարության վճարի սկզբնական չափի հաշվարկը կողմը կարող է կատարել ինքնուրույն՝ հիմնվելով Կանոններով սահմանված սանդղակի վրա, կամ դիմել Կենտրոնի քարտուղարությանը՝ այդ հարցում աջակցություն ցուցաբերելու խնդրանքով:

Գործավարության վճարներից բացի արբիտրաժային մյուս ծախսերի հատուցման նպատակով արբիտրաժային տրիբունալի ձևավորման պահից 15-օրյա ժամկետում արբիտրաժի կողմերը պարտավոր են վճարել արբիտրաժային ծախսերի կանխավճար, որի

չափը, Կանոնների համաձայն, սահմանում է Քարտուղարությունը, և որը հայցվորն ու պատասխանողը պետք է հավասարապես վճարեն: Հակընդդեմ հայցի ներկայացման դեպքում Քարտուղարությունը արբիտրաժային ծախսերը հաշվարկում և կողմերին ներկայացնում է ըստ վերջիններիս հայցապահանջների. այդ դեպքում յուրաքանչյուր կողմ վճարում է իր ներկայացրած պահանջին համապատասխան հաշվարկված ծախսի կանխավճարը: Եթե կողմերից մեկը չի վճարում հաշվարկված ծախսի գումարի իր չափը, Քարտուղարությունն առաջարկում է մյուս կողմին կատարել նշված վճարումը: Նման ծանուցումից հետո եթե վճարումը կրկին չի կատարվում, Քարտուղարությունը, խորհրդակցելով արբիտրաժային տրիբունալի հետ, իրավունք ունի կասեցնելու արբիտրաժային վարույթը՝ կողմերի համար սահմանելով արբիտրաժային ծախսերի կանխավճարը կատարելու նոր ժամկետ: Եթե այս ժամկետում ևս վճարումները չեն կատարվում, արբիտրաժային վարույթն ավարտվում է: Սա չի զրկում հայցվորին հետագայում նույն պահանջներով նոր վարույթ նախաձեռնելուց, եթե վերջինս բաց չի թողել պահանջի ներկայացման ժամկետները, կամ իր այդ իրավունքն այլ եղանակով չի սպառվել: Կարևոր է ընդգծել, որ Քարտուղարությունն իրավունք ունի արբիտրաժային ծախսերի համար վճարվող կանխավճարի փոխարեն կողմից ընդունելու բանկային երաշխիք կամ ապահովման այլ միջոց:

Վերը նշված վճարումները, կողմի դիմումով, արբիտրաժային տրիբունալը հաշվի է առնում վերջնական որոշման ժամանակ՝ դրանք մտցնելով պարտված կողմից բռնագանձման ենթակա ծախսերի մեջ:

Արբիտրաժային վարույթի ընթացքում արբիտրաժային բոլոր տեսակի վճարները կատարվում են անկանխիկ եղանակով՝ Քարտուղարության տրամադրած Կենտրոնի բանկային հաշվեհամարին փոխանցման միջոցով:

37. Ինչպե՞ս է կազմվում արբիտրաժային վճիռը

Արբիտրաժային գործընթացի տրամաբանական հանգրվանը արբիտրաժային վճիռն է: Միանձնյա արբիտրը կամ արբիտրաժային տրիբունալը գործի քննությունն ավարտում է վճռի կայացմամբ: Վճիռը գրավոր փաստաթուղթ է, որը կազմում և ստորագրում է տրիբունալը, և որով որոշվում է գործի ելքը: Արբիտրաժային տրիբունալը կարող է կայացնել նաև միջանկյալ, մասնակի և լրացուցիչ վճիռներ:

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը պարունակում է կարգավորումներ արբիտրաժային վճռի կայացման, վճռի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների մասին: Օրենքը, սակայն, չի պարունակում վճռի կայացման ժամկետ, ինչը կարող է նախատեսվել արբիտրաժային հաստատությունների ընդունած արբիտրաժային կանոններով:

AMCA-ի կանոնների համաձայն՝ ընդհանուր ընթացակարգով՝ գործի քննության դեպքում արբիտրաժային տրիբունալը վճիռը կայացնում է քննության ընթացակարգի արձանագրությունը կազմելու պահից վեց ամսվա ընթացքում, եթե կողմերն այլ համաձայնություն չունեն: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել Արբիտրաժային խորհրդի որոշմամբ՝ նրա նախաձեռնությամբ կամ արբիտրաժային տրիբունալի պատճառաբանված դիմումի հիման վրա:

Երեք արբիտրից կազմված արբիտրաժային տրիբունալի դեպքում վճիռը կայացվում է ձայների մեծամասնությամբ, այսինքն՝ պահանջվում է առնվազն երկու արբիտրի «կողմ» ձայնը: Արբիտրաժային տրիբունալի վճռում պետք է նշվեն դրա հիմքում ընկած հանգամանքները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը համաձայնել են, որ այդպիսիք չպետք է նշվեն վճռում: Վճռի կայացման վայրը արբիտրաժի գտնվելու վայրն է, օրը՝ վճռում նշված ամսաթիվը: Վճիռը, որպես կանոն, ստորագրում են տրիբունալի բոլոր արբիտրները: Եթե կան հանգամանքներ, որոնք խոչընդոտում են ստորագրումը, ապա այդ մասին պարտադիր նշում է կատարվում վճռում: Վճռին չհամաձայնող արբիտրը իրավունք ունի ներկայացնելու գրավոր հատուկ կարծիք, որը կազմում է վճռի բաղկացուցիչ մասը:

Ըստ AMCA-ի կանոնների, եթե մեկից ավելի արբիտրների մասնակցության դեպքում նրանցից մեկը վճիռը չի ստորագրում, ապա վճռում նշվում է ստորագրության բացակայության պատճառը: Մեծամասնության վճռին ամբողջությամբ կամ մասնակիորեն չհամաձայնող արբիտրները կարող են առանձին կամ հատուկ կարծիք տրամադրել վճռի մասին:

38. ԻՆՃ պահանջներ է ներկայացվում արբիտրաժային վճռին

Արբիտրաժի վճռին ներկայացվում են ընդհանուր պահանջներ՝ **գրավոր ձևի պահպանում** և **պատճառաբանվածություն**:

Թեև վճռին ու նրա կառուցվածքին ներկայացվող ձևական պահանջներ չկան, արբիտրաժային տրիբունալը պարտավոր է պատճառաբանել վիճելի բոլոր հարցերի լուծումները, դրանց նկատմամբ ընտրված իրավունքի կիրառելիությունը և ցանկացած այլ հարց, որ կարևոր կհամարի:

Արբիտրաժային տրիբունալը կարող է կայացնել համաձայնեցված պայմաններով վճիռ՝ հաշտության համաձայնության մասին, կողմերի հաշտության դեպքում և նրանց պահանջով: Արբիտրաժային տրիբունալը պարտավոր չէ պատճառաբանել հաշտության համաձայնության մասին վճիռը կամ ներառել հաշտության պայմանները:

Եթե կողմերը չեն պահանջում հաշտության համաձայնության մասին վճիռ, ապա նրանք պետք է արբիտրաժային տրիբունալին և Քարտուղարությանը հավաստիացնեն, որ ձեռք է բերվել հաշտություն, որի պարագայում արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում արբիտրաժի ավարտի մասին:

Կողմերի պահանջով Կենտրոնը տրամադրում է նաև արբիտրաժային տրիբունալի վճռի/որոշման լրացուցիչ օրինակներ՝ Գլխավոր քարտուղարի վավերացմամբ: Եթե այլ բան նախապես չի որոշվել կողմերի ու տրիբունալի կամ Քարտուղարության միջև, վճռի մասին ծանուցվում է էլեկտրոնային եղանակով, իսկ թղթային տարբերակով վճռի բնօրինակները ի պահ են հանձնվում Քարտուղարությանը:

Արբիտրաժային տրիբունալի որոշումը/վճիռը պարտադիր է կողմերի համար ու ենթակա չէ բողոքարկման, եթե բացակայում են համապատասխան օրենսդրությամբ այն չեղյալ ճանաչելու հիմքերը: Արբիտրաժային տրիբունալի կայացրած վճռում տեխնիկական, թվաբանական, շարվածքային կամ նման բնույթի այլ վրիպակների ուղղում հնարավոր է ինչպես արբիտրաժային տրիբունալի նախաձեռնությամբ, երբ վերջինս հայտնաբերում է այդպիսիք, այնպես էլ կողմի դիմումի հիման վրա: Սակայն նման հնարավորություն տրիբունալն ու կողմերն ունեն Քարտուղարության՝ վճռի մասին կողմերին ծանուցելու պահից 30 օրվա ընթացքում: Նշված ժամկետը հավասարապես վերաբերում է նաև վճռի/որոշման մեկնաբանմանն ու լրացուցիչ որոշման կայացմանը:


Ի տարբերություն վրիպակի ուղղմանն ու մեկնաբանմանը՝ արբիտրաժային վճռի մասին լրացուցիչ որոշումն ուղղակիորեն կարող է փոխել վճռի ազդեցությունը կողմերի վրա: Նման որոշման կայացման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ վճռի առարկային վերաբերող ու լուծման ենթակա ոչ բոլոր հարցերին է վճռով տրվում լուծումներ: Նշվածը հաշվի առնելով՝ լրացուցիչ որոշման կայացման համար բարձրաձայնված հարցերի շուրջ կարծիք հայտնելու համար Քարտուղարությունը կողմերին տրամադրում է որոշակի ժամանակ, որը չի կարող գերազանցել 30 օրը: Նշված ժամ-

Կետի ավարտից սկսած 30-օրյա ժամկետում արբիտրաժային տրիբունալը կայացնում է լրացուցիչ որոշում: Անհրաժեշտության դեպքում տրիբունալն իրավասու է իր որոշմամբ երկարաձգելու նշված ժամկետը:

Վրիպակների ուղղման, վճռի մեկնաբանման կամ լրացուցիչ որոշումները կազմում են վճռի բաղկացուցիչ մասը:

Ինչպես արբիտրաժային ողջ վարույթը, այնպես էլ վճիռը գաղտնի է և ենթակա չէ որևէ եղանակով հրապարակման կամ տրամադրման երրորդ անձանց: Վճռի բովանդակությունը մասնակիորեն կամ ամբողջությամբ կարող է բացահայտվել բոլոր կողմերի համաձայնությամբ կամ օրենքով սահմանված այն դեպքերում ու այն չափով, որ անհրաժեշտ է կողմին իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, կատարողական թերթ ստանալու, վճռի բողոքարկման կամ այլ հիմքերով դատարան դիմելու համար կամ օրենքով սահմանված հիմքերով ու կարգով ենթակա է բացահայտման իրավասու պետական մարմնի պահանջով, դատարանի որոշմամբ:

ՎճՐԻ ԱՏՈՒՂԱԹԵՐԹ | Էջ 1/5



Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾ №

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃՐԻ ԱՏՈՒՂԱԹԵՐԹ

ՆՇՈՒՄ

Սույն ստուգաթերթը հանդիսանում է ուղեցուց Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային կանոնների (այսուհետ՝ **«Արբիտրաժային կանոններ»**) համաձայն կենտրոնում քննվող արբիտրաժային գործերով վճիռները կազմելիս: Այն չի արտացոլում կենտրոնի քարտուղարության կամ արբիտրաժային տրիբունալի անդամների դիրքորոշումը և ծառայում է կազմակերպաաշխատանքային նպատակներին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- (Ա) Վճռում առկա է արբիտրաժային գործի համարը և վճռի ամսաթիվը
- (Բ) Վճռի վերնագրում ներկայացված է վճռի տեսակը (վերջնական, լրացուցիչ և այլն)
- (Գ) Վճռի էջերը և պարագրաֆները համարակալված են
- (Դ) Վճռից պարունակում է բովանդակության էջ (միայն մեծածավալ վճիռների պարագայում)
- (Ե) Վճռում օգտագործված հապավումների բացատրությունները ներկայացված են պատշաճ ձևով
- (Զ) Վճռում բերված օտարալեզու մեջբերումները թարգմանված են արբիտրաժի լեզվով
- (Է) Վճռի թղթային տարբերակը պատրաստված է կենտրոնի կողմից վճիռների համար սահմանված միօրինակ ձևաթղթի վրա
- (Ը) Վճռից շարադրված է միօրինակ տառաչափով տառատեսակով միջտողային հեռավորությամբ և լուսանցային հեռավորությամբ:

ՎՃՐԻ ԱՏՈՒՂԱԹԵՐԹ | Էջ 2/5

ՎՈՂՄԵՐԸ, ՎՈՂՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

- (Ա) Վճիռը պարունակում է արբիտրաժային գործով բոլոր կողմերի անունը ազգանունը, կողմերի ներկայացուցիչների անունը, ազգանունը
- (Բ) Վճիռը պարունակում է արբիտրաժային գործով բոլոր կողմերի հասցեները

ԳՈՐԾԻ ՆԱՄԱՂԱՏՈՒՅՈՒՅՈՒՆ

- (Ա) Արբիտրաժ իրականացնելու պահանջի ներկայացման ամսաթիվը
- (Բ) Զարտուղարության կողմից պահանջի կողմերին ծանուցման ամսաթիվը
- (Գ) Հակվնդյեմ հայցի ներկայացման ամսաթիվը (եթե ներկայացվել է հակվնդյեմ հայց)
- (Դ) Ներգրավված լրացուցիչ կողմի անունը, ազգանունը, հասցեն, լրացուցիչ կողմ ներգրավելու մասին միջնորդության ներկայացման ամսաթիվը
- (Ե) Արբիտրաժային տրիբունալի ձևավորման ամսաթիվը և կազմը, արբիտր(ներ)ի անունը, ազգանունը
- (Զ) Արբիտրաժի լեզուն
- (Է) Արբիտրաժային գործի կառավարման խորհրդակցության ամսաթիվը (եթե իրականացվել է այդպիսի խորհրդակցություն)
- (Ը) Արբիտրաժի վայրը և լսումների իրականացման վայրը
- (Թ) Դեղատվային փաստաթղթերի մուտքագրման ամսաթիվը
- (Ժ) Վարույթի փակման մասին որոշման ամսաթիվը

Էջեր Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի արբիտրաժային վճռի ստուգաթերթից

39. Ինչպե՞ս են կատարվում արբիտրաժային վճիռները

Արբիտրաժային վճիռները պարտադիր կատարման ենթակա են արբիտրաժային վարույթի մասնակիցների կողմից, միջազգային գործերով ևսև ճանաչման ու կատարման ենթակա՝ «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիայի անդամ բոլոր երկրներում այն դեպքում, երբ պահպանվել են արբիտրաժային տրիբունալին ու արբիտրաժային վարույթին ներկայացվող օրենսդրական պահանջները:

Հաղթող կողմն ակնկալում է, որ մյուս կողմը վճիռն ինքնակամ կկատարի, և սա խելամիտ ակնկալիք է: AMCA-ի կանոնների համաձայն, վեճը արբիտրաժին հանձնելով, կողմերը պարտավորվում են անհապաղ կատարել բոլոր վճիռները և պետք է համարվեն ցանկացած այլ ձևով պաշտպանության իրավունքից հրաժարված՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հրաժարումը կարող է հիմնավոր լինել: Մյուս կողմից, Կանոնների համաձայն, արբիտրաժային տրիբունալը պետք է գործադրի բոլոր ջանքերը՝ ապահովելու, որ վճիռը ենթակա լինի օրենքով սահմանված կարգով կատարման:

Այդուհանդերձ, ինչպես գիտենք, քաղաքացիաիրավական հարաբերություններում ու առհասարակ յուրաքանչյուր տեսակի իրավահարաբերության մեջ չեն բացառվում դեպքերը, երբ կողմերը հրաժարվում են իրենց իսկ ստանձնած կամ օրենքով, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի որոշումներով իրենց վրա դրված որոշակի պարտավորություններ կամավոր կատարելուց: Նշված դեպքում, ինչպես և դատարանների կայացրած վճիռների կատարման համար գործում է հարկադիր կատարման ինստիտուտը:

Արբիտրաժային վճիռների հարկադիր կատարման ապահովումը պայմանակալորեն կարող ենք բաժանել երեք խմբի.

1. վճիռներ, որոնք մշտապես գործող արբիտրաժային հաստատությունն է կայացրել, արբիտրաժի վայրը եղել է ՀՀ տարածքը, կողմերը եղել են միայն ՀՀ քաղաքացիներ կամ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք, և բռնագանձման ենթակա գումարը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը,
2. տեղական վեճերով արբիտրաժային վճիռներ, որոնք չեն բավարարում 1-ին կետի որևէ պահանջ,
3. օտարերկրյա արբիտրաժային տրիբունալների վճիռներ:

40. Արբիտրաժային ո՞ր վճիռներով է հնարավոր ուղղակիորեն դիմել ՀԿԱԾ՝ կատարման համար

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում 2022 թ. կատարված փոփոխությամբ մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը հնարավորություն է ընձեռվել 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող տեղական գործերով էլեկտրոնային հաղորդագրության միջոցով արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար դիմելու Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն:

Այսպես, օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, մշտապես գործող արբիտրաժային հաստատությունը էլեկտրոնային հաղորդագրության միջոցով արբիտրաժային տրիբունալի վճիռը հարկադիր կատարման համար ներկայացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը, եթե.

- 1) մշտապես գործող արբիտրաժային հաստատությունն է արբիտրաժի իրականացրել, և
- 2) արբիտրաժի վայրը ՀՀ տարածքն է, և
- 3) արբիտրաժի կողմերը միայն ՀՀ քաղաքացիներ են կամ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք, և
- 4) արբիտրաժի վճռով բռնագանձման ենթակա գումարի չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը:

Այս փոփոխությունը կնպաստի, որ կազմակերպությունները կնքվող պայմանագրում արբիտրաժային վերապահում նախատեսեն կամ վեճի առաջացումից հետո արբիտրաժային համաձայնություն կնքեն, քանի որ արբիտրաժային վճռի կատարման համար այլևս ստիպված չեն լինի դիմել դատարան¹²: Հետաքրքիր է ընդգծել, որ ՀՀ-ում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության 2020-2022 թթ. արբիտրաժային վճիռների հիման վրա տված կատարողական թերթերի քանակն աճել է, և կա աճի միտում (2021-ին, 2020-ի համեմատությամբ, կատարողական վարույթների քանակն աճել է 151%-ով, իսկ 2022-ի առաջին տասնամյակում, 2021-ի համեմատությամբ, 11,5%-ով): ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը 2022 թ. նոյեմբերի 11-ին ՀՀ արդարադատության նախարարին ուղղած գրության մեջ նշել է, որ, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կատարողական վարույթների վարման էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն, 2020 թ. հունվարի 1-ից առ 2022 թ. հոկտեմբերի 31-ը արբիտրաժային վճիռների հիման

¹² Նշվածը հնարավոր է, եթե բռնագանձման ենթակա գումարը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, արբիտրաժի վայրը ՀՀ տարածքն է, արբիտրաժի կողմերը միայն ՀՀ քաղաքացիներ են կամ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք: Նման հնարավորությունից ad hoc արբիտրաժները զրկված են:

վրա տրված կատարողական թերթերով հարուցվել է շուրջ 50.100 կատարողական վարույթ՝ 90.532.040.487 դրամ բռնագանձման ենթակա գումարով: Դրանցից.

- 2020-ին՝ 7.939 կատարողական վարույթ՝ 24.860.437,563 դրամ բռնագանձման ենթակա գումարով,
- 2021-ին՝ 19.934 կատարողական վարույթ՝ 29.618.565.279 դրամ բռնագանձման ենթակա գումարով,
- 2022-ին՝ (01.01.2022-31.10.2022)՝ 22.227 կատարողական վարույթ՝ 36.053.037.645 դրամ բռնագանձման ենթակա գումարով:

Մշտապես գործող արբիտրաժային հաստատության կողմից էլեկտրոնային հաղորդագրության միջոցով արբիտրաժային վճռի հարկադիր կատարման համար ՅԿԱԾ դիմելու լիազորության ամրագրումը առավել գրավիչ է դարձնում արբիտրաժային հաստատությունների միջոցով վեճերը լուծելու հեռանկարը, ինչն առհասարակ կողմերին ազատում է որևէ հարցով դատարան դիմելու պարտականությունից:

41. Ինչպե՞ս են կատարվում 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող տեղական գործերով արբիտրաժային վճիռները

5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող տեղական գործերով արբիտրաժային վճիռը կատարելու համար կողմը դիմում է արբիտրաժային հաստատություն, AMCA-ի դեպքում Քարտուղարությանը, որի հիման վրա Կենտրոնն էլեկտրոնային հաղորդագրության միջոցով արբիտրաժային տրիբունալի վճիռը հարկադիր կատարման համար ներկայացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:

Նշված հաղորդագրությունը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, ՅԿԱԾ-ի՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմք է: Այս եղանակով հարկադիր կատարման դիմում ներկայացնելու իրավունքը կողմն ունենում է արբիտրաժային տրիբունալի վճիռը ստանալու պահից երեք ամսից ոչ շուտ և մեկ տարուց ոչ ուշ:

Նշված սահմանափակումը կոչված է նաև ապահովելու կողմերի՝ արբիտրաժային տրիբունալի վճռի հնարավոր վիճարկման իրավունքը մինչև այն հարկադիր կատարման ներկայացնելը, տալու վարույթի մասնակցին ողջամիտ ժամկետ՝ ինքնակամ կատարելու վճռով սահմանված պարտականությունը: Բարձր շեմը՝ մեկ տարին, սահմանվում է կողմերի վարքագծի կանխատեսելիությունն ապահովելու նպատակով ու հավասարապես կիրառելի է ինչպես արբիտրաժային վճիռների, այնպես էլ դատարանների կայացրած վճիռների նկատմամբ:

Այսպես, վերը նշված ժամկետներում արբիտրաժային տրիբունալի վճիռը հարկադիր կատարման ուղարկելու համար կողմը Կենտրոնի քարտուղարությանը պետք է ներկայացնի գրավոր դիմում, որում պարտադիր պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

1) Կենտրոնի անվանումը, արբիտրաժի վայրը և արբիտրաժային տրիբունալի կազմը,

2) արբիտրաժային վարույթի մասնակիցների անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի դեպքում անվանումը, հաշվառման, իրավաբանական անձի դեպքում գտնվելու վայրի հասցեն, դիմող ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները, դիմող իրավաբանական անձի պետական գրանցման համարը,

3) արբիտրաժի վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և համարը,

4) արբիտրաժի վճռի հարկադիր կատարման մասին պահանջը:

Նշվածից բացի՝ դիմումին պետք է կցել.

1) արբիտրաժային տրիբունալի վճիռը,

2) արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար ներկայացված դիմումի պատճենն արբիտրաժային վարույթի մյուս կողմին հանձնելը կամ ուղարկելը հավաստող փաստաթուղթը:

Վերը թվարկվածները դիմումին ներկայացվող նվազագույն պահանջներն են. Որոշակի դեպքերում Կենտրոնի քարտուղարությունը կարող է կողմից պահանջել այլ տեղեկություններ ևս: Բացի այդ՝ բոլոր այն դեպքերում, երբ կողմի ներկայացուցիչն է դիմումը ներկայացնում, որը վարույթի ընթացքում ներգրավված չի եղել, կամ որի լիազորությունները հավաստող փաստաթղթի գործողությունը դադարել է (օրինակ՝ լրացել է լիազորագրի ժամկետը), ապա նրանք պարտավոր են ներկայացնել նաև իրենց լիազորությունները, ինչպես նաև լիազոր անձի անձը հաստատող համապատասխան փաստաթղթեր:

Կենտրոնի քարտուղարությունը հարկադիր կատարման համար ներկայացված դիմումը քննում է դիմումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերն ու այլ նյութերը: Եթե նշված քննության ընթացքում պարզվում է, որ արբիտրաժային վճիռը կողմերի համար դեռևս պարտադիր չի դարձել (օրինակ՝ չի լրացել սահմանված եռամսյա ժամկետը), կամ առաջին ատյանի դատարանի վարույթում առկա է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմում, ապա հարկադիր կատարման դիմումը թողնվում է առանց քննության:

Պահանջների խախտմամբ ներկայացված դիմումը Քարտուղարությունը վերադարձնում է ներկայացնող կողմին: Դիմումի վերադարձը կամ առանց քննության թողնելը կողմին չի զրկում կրկին դիմելու հնարավորությունից, եթե պահպանվում են դիմում ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետները:

Եթե դիմումի ձևին և բովանդակությանը վերաբերող պահանջներն ապահովված են լինում, Քարտուղարությունը արբիտրաժային վճիռն ուղարկում է ՀԿԱԾ՝ հարկադիր կատարման, որից հետո արգելվում է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումով

դատարան դիմելը: Նշվածից բացառություն կարող է լինել միայն այն դեպքը, երբ վճիռը չեղյալ ճանաչելու դիմում ներկայացրած անձը հիմնավորում է արբիտրաժի վճռի հարկադիր կատարման դիմումով վարույթի ընթացքում նման դիմում ներկայացնելու անհնարիանությունը՝ իրենից անկախ պատճառներով:

42. Ինչպե՞ս են կատարվում տեղական այլ գործերով և օտարերկրյա արբիտրաժային վճիռները

Այս խումբը ներառում է 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող տեղական գործերով արբիտրաժային տրիբունալի կայացրած այն վճիռները, որ չեն համապատասխանում 7-ին խմբին ներկայացվող պահանջներին, այլ կերպ ասած՝ տեղական արբիտրաժային վեճերով մյուս բոլոր վճիռները, եթե բացակայում են հիմքերը, որ արբիտրաժային տրիբունալը, վերը նշված կարգով, վճիռն էլեկտրոնային հաղորդագրության միջոցով ուղարկել է ՀԿԱԾ, ինչպես նաև միջազգային վեճերով կայացրած արբիտրաժային վճիռները: Այս դեպքում կողմը, որի օգտին կայացվել է արբիտրաժային վճիռը, դրա հարկադիր կատարում ստանալու համար պետք է դիմի Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի քաղաքացիական դատարան: Նշված վեճերով կայացված արբիտրաժային վճիռները, ի տարբերություն երրորդ խմբում ներառված օտարերկրյա արբիտրաժային հաստատությունների վճիռների, դատարանից լրացուցիչ ճանաչման ենթակա չեն: Դատարանը քննում է բացառապես կատարողական թերթ տրամադրելու հարցը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս երկու խմբի դեպքում էլ դատարան դիմելու ընթացակարգերը գրեթե նույնն են, դրանք կքննարկենք միասին:

Ինչպես գիտենք, ՀՀ-ն միացել է Նյու Յորքի կոնվենցիային, որի ուժով պարտավորվել է ճանաչել ու կատարել կոնվենցիայի անդամ երկրների արբիտրաժային տրիբունալների կայացրած վճիռները (այսուհետ՝ օտարերկրյա արբիտրաժային վճիռներ): Սա նշանակում է, որ Կենտրոնի՝ միջազգային վեճերով կայացրած արբիտրաժային վճիռները Հայաստանի սահմաններից դուրս ենթակա կլինեն ճանաչման ու կատարման: Նշված դեպքերում արբիտրաժային վճռի կատարման համար արբիտրաժային վճռի կողմը դիմումը պետք է ներկայացնի տվյալ երկրի դատարան՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով: Այս հարցում չբացառելով ներպետական օրենսդրություններով սահմանված ընթացակարգային տարբերությունները՝ ընդգծենք, որ Նյու Յորքի կոնվենցիայով սահմանվում են այն հիմնաքարային երաշխիքները, որոնց պահպանմամբ յուրաքանչյուր պետություն սահմանում է իր դատավարական կարգը: Ուստի, ծանոթանալով ՀՀ-ում օտարերկրյա արբիտրաժի վճիռների ճանաչման ու հարկադիր կատարման կարգին, կարող ենք ընդհանուր պատկերացում կազմել կոնվենցիայի անդամ մյուս երկրներում նույն ընթացակարգի ընդհանուր գծերի մասին:

Ներպետական արբիտրաժի վճռի հարկադիր կատարման, օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման դիմումները ՀՀ-ում ներկայացվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան: Դիմումը ներկայացնելու իրավասություն ունի այն կողմը, որի օգտին կայացվել է արբիտրաժային վճիռը: Ներքին վեճերով սման դիմում կարելի է ներկայացնել արբիտրաժային վճիռը ստանալու պահից մեկ տարվա ընթացքում, միջազգային արբիտրաժի վճռի ճանաչման և կատարման դիմումների դեպքում երեք տարվա ընթացքում:

Դատարանին ներկայացվող դիմումին ու կից փաստաթղթերին առաջադրվող պահանջները նույնն են, ինչ արբիտրաժային հաստատությանը ներկայացվող դիմումին որոշ տարբերություններով, որոնց կանդիդատներն ստորև:

Ի տարբերություն նախորդ դեպքի՝ արբիտրաժային վճռի բնօրինակի կամ պատշաճ ձևով վավերացված պատճենի հետ դատարանին ներկայացվում է նաև արբիտրաժային վեճի կողմերի արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ պատշաճ ձևով վավերացված պատճենը: Եթե վճիռը կամ համաձայնությունը շարադրված չէ հայերեն, ապա կողմը ներկայացնում է նաև դրա պատշաճ ձևով վավերացված հայերեն թարգմանությունը: Ինչպես գիտենք, մշտապես գործող արբիտրաժային հաստատությունների, ներառյալ Կենտրոնի տված վճիռները ու այլ փաստաթղթերը, ներառյալ արբիտրաժային համաձայնության պատճենը, վերջիններս վավերացնում են: Ad hoc արբիտրաժների դեպքում վճռի վրա առկա ստորագրությունների իսկության հավաստումը, վճռի օրինակի վավերացումը, արբիտրաժային համաձայնության պատճենի վավերացումը պետք է կատարի նոտարը (խնդրահարույց կողմերն արդեն իսկ քննարկվել են): Ինչ վերաբերում է թարգմանություններին, ապա դրանց ձևին ներկայացվող պահանջները սահմանվում են դատավարական օրենքով. թարգմանությունները պետք է վավերացրած լինի սման իրավասություն ունեցող անձը:

Օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման դիմումին կից նաև ներկայացվում է պետական տուրքը վճարած լինելը հավաստող ապացույց, որի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» օրենքով ու ներկա պահին կազմում է 50.000 ՀՀ դրամ:

Եթե դիմումին և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները պահպանված չեն լինում, դիմում ստանալու պահից 7-օրյա ժամկետում դատարանն վերադարձնում է կողմին առաջարկելով եռօրյա ժամկետում շտկել: Վերադարձի հիմքեր չլինելու դեպքում նույն ժամկետում դիմումը ընդունվում է վարույթ:

Արբիտրաժային վճռի հարկադիր կատարման դիմումը դատարանը պարտավոր է քննել վարույթ ընդունելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում առանց նիստ հրավիրելու կամ, օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման ու հարկադիր կատարման դիմումի դեպքում, երկու ամսվա ընթացքում: Ամեն դեպքում դատարանն իրավունք ունի նիստ հրավիրելու, եթե համարում է, որ կա անհրաժեշտություն, օրինակ՝ անհրաժեշտ է կողմերից ստանալ լրացուցիչ պարզաբանումներ՝ ներկայացված ապացույցների

կամ վճարի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ տեղեկությունների մասին: Նիստ հրավիրելու դեպքում գործի քննության ու որոշման կայացման համար գործի քննության ժամկետը կարող է տևել մինչև երկու ամիս:

Եթե կատարողական թերթ տրամադրելու հարցի քննարկման ժամանակ դատարանը պարզում է, որ դատարանի վարույթում առկա է նաև արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմում, ապա այս երկու դիմումները միացվում են, և քննում է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը քննող դատավորը մեկ վարույթի շրջանակում: Այս դեպքում դատարանը պարտավոր է դիմումները քննել ու որոշումը կայացնել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը վարույթ ընդունելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ լրացուցիչ պարզաբանումներ կամ ապացույցներ ներկայացնելու համար նիստ հրավիրելու դեպքում երկու ամսվա ընթացքում:

Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալուց հետո արգելվում է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմում ներկայացնելը՝ բացառությամբ այն դեպքի, երբ վճիռը չեղյալ ճանաչելու դիմում ներկայացրած անձը հիմնավորում է արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումով վարույթի ընթացքում նման դիմում ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Արբիտրաժային վճռի հարկադիր կատարման կամ օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման ու հարկադիր կատարման դիմումը կարող է մերժվել կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ, եթե առկա են դրա համար օրենքով սահմանված հիմքերը: Հաշվի առնելով, որ նշված հիմքերը նույնանում են արբիտրաժային տրիբունալի չեղյալ ճանաչման համար օրենքով սահմանվող հիմքերին, դրանց կանդրադառնանք հաջորդիվ:

Վերը նշված հիմքերի բացակայության դեպքում դատարանը բավարարում է վճռի կատարման կամ միջազգային արբիտրաժային վճռի ճանաչման ու կատարման համար ներկայացված դիմումը, որի կապակցությամբ կայացնում է պատճառաբանված որոշում: Դատարանի որոշումը, օրենքի համաձայն, ենթակա է հրապարակման դատարանների՝ ընդհանուր կարգով քննվող գործերով կայացրած վճիռների հրապարակման համար սահմանված եղանակով: Նշված կարգավորման առումով դատաիրավական պրակտիկայում առկա է խնդիր՝ պայմանավորված արբիտրաժային վարույթների գաղտնիությամբ: Այդ իսկ պատճառով այս պահին դատական իշխանության պաշտոնական կայքում չկա հասանելիություն «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ներկայացված դիմումներով կայացված որոշումներին, ինչով պայմանավորված որոշումները դատարանները շարունակում են թղթային եղանակով ուղարկել վարույթի մասնակիցներին, իսկ որոշման հրապարակման պահը պրակտիկայում մեկնաբանվում է դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրվելու կամ կողմի ստանալու ամսաթիվը:

Քննարկվող դիմումներով՝ դատարանի կայացրած որոշումները՝ տեղական վեճերով, ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, իսկ միջազգային արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման դիմումներով՝ հրապարակման պահից յոթ օր հետո, եթե վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվում:

Կարևոր է ընդգծել, որ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դատարանի մերժումը կողմերին չի սահմանափակում, որ վեճի լուծման համար կրկին դիմեն արբիտրաժի, եթե այդ հնարավորությունը սպառված չէ, օրինակ, ժամկետները լրանալու հիմքով կամ արբիտրաժային համաձայնության բացակայության պատճառով: Կողմերն իրավունք ունեն իրենց միջև առկա վեճը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնների համաձայն լուծելու համար դիմելու դատարան, եթե դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժում է արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը հետևյալ հիմքերից որևէ մեկով.

- արբիտրաժային համաձայնությունն անվավեր ճանաչելու հետևանքով,
- արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացրել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում արբիտրաժային համաձայնության պայմաններին, կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից:

43. Ո՞ր դեպքերում կարող են չեղյալ ճանաչվել արբիտրաժային վճիռները

Արբիտրաժային կարգով՝ գործերի քննության կարևորագույն առավելություններից մեկը արբիտրաժային վճիռների անբողոքարկելիությունն է ու վերջնական լինելը: Ուստի, խոսելով արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման մասին, ընդգծենք, որ այն նախատեսում է ոչ թե վճիռների վերադասության կարգով բողոքարկում կամ դատական բողոքարկման միջոցով վերանայում, այլ վճիռների չեղյալ ճանաչում արբիտրաժային վարույթի մեկնարկի, ընթացքի կամ ավարտի ժամանակ արբիտրաժային տրիբունալի թույլ տված ընթացակարգային այնպիսի խախտումների պատճառով, որոնք ուղղակիորեն ազդում են գործի ելքի վրա ու վերաբերում են.

- արբիտրաժային համաձայնության առկայությանը կամ վավերությանը,
- արբիտրաժային տրիբունալի՝ գործը լսելու իրավասությանը (ամբողջությամբ կամ մասնակիորեն),
- արբիտրաժային տրիբունալի անաչառությանն ու անկողմնակալությանը,
- վարույթի ընթացքում կողմին տրված հնարավորությանը՝ արտահայտելու իր դիրքորոշումը,
- ՀՀ հանրային կարգին:

Արբիտրաժային տրիբունալի վճիռների չեղյալ ճանաչման հարցը կարող է քննարկվել երկու դեպքում.

1. երբ ներկայացվել է վճռի հարկադիր կատարման դիմումի շրջանակում կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, դատարանն անդրադառնում է վճռի չեղյալ ճանաչման հիմքերին,

2. նման դիմումով արբիտրաժային վարույթի մասնակիցը դիմել է դատարան մինչև վճռի կատարումը:

**ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**Արբիտրաժային վճիռը կարող է դատարանի կողմից չեղյալ
ճանաչվել միայն բացառիկ դեպքերում**

- ✗ արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունն անվավեր է,
- ✗ կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից,
- ✗ վճիռ է կայացվել այնպիսի վճռի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից,
- ✗ արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել օրենքին:

**44. Ի՞նչ կարգով կարող են չեղյալ ճանաչվել
արբիտրաժային վճիռները**

Արբիտրաժային տրիբունալի չեղյալ ճանաչման հարցը քննում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը: Եթե չեղյալ ճանաչման պահանջով դիմում է կողմը, ապա պետք է ներկայացնի ապացույցներ, որոնք կհիմնավորեն ներքևում նշված հիմքերից մեկի կամ մի քանիսի առկայությունն առ այն, որ.

1. արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ,
2. արբիտրաժային համաձայնությունն անվավեր է այն իրավունքի համաձայն, որը կողմերն ընտրել են իրենց վճռի նկատմամբ, իսկ այդպիսին ընտրած չլինելու դեպքում ՅՅ օրենսդրության համաձայն,

3. վիճարկող կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը (դիրքորոշումը) արբիտրաժային տրիբունալում ներկայացնելու հնարավորությունից,
4. արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի՝ օրենքին չհակասող արբիտրաժային համաձայնությանը, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում օրենքին,
5. արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացրել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում արբիտրաժային համաձայնության պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որ դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից: Այս դեպքում կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային տրիբունալի վճիռ միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր, եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից:

Դատարանը, իր նախաձեռնությամբ, արբիտրաժային վճիռը կարող է չեղյալ ճանաչել, եթե համարի, որ, ՀՀ օրենսդրության համաձայն, վեճի առարկան ենթակա չէր լուծման արբիտրաժի միջոցով, կամ վճիռը հակասում է ՀՀ հանրային կարգին: Հատկանշական է, որ չեղարկման համար, վերոհիշյալներից բացի, այլ հիմքեր նախատեսված չեն: Համաձայն Նյու Յորքի կոնվենցիայի՝ օտարերկրա արբիտրաժային վճիռների ճանաչումն ու կատարումը կարող է մերժվել նույն հիմքերով:

Կարևոր է հիշել, որ արբիտրաժային վճիռի չեղյալ ճանաչման դիմումը դատարանին կարող է ներկայացվել արբիտրաժային վճիռը կամ վճիռ ուղղման, պարզաբանման կամ լրացուցիչ վճիռ կայացնելու արբիտրաժային տրիբունալի որոշումը (որոշման ամսով) ստանալու պահից եռամսյա ժամկետը լրանալուց հետո: Դատարանը, որին ներկայացվել է վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը, կարող է կողմերից մեկի խնդրանքով կամ իր նախաձեռնությամբ որոշակի ժամանակով դադարեցնել հարցի քննությունը, որպեսզի հնարավորություն ընձեռի արբիտրաժային տրիբունալին վերսկսելու արբիտրաժային վարույթը կամ ձեռնարկելու այլ միջոցներ, որոնք, արբիտրաժային տրիբունալի կարծիքով, կարող են վերացնել արբիտրաժային տրիբունալի վճիռի չեղյալ ճանաչման հիմքերը:

Եթե արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը քննելիս պարզվում է, որ դատարանի վարույթում առկա է արբիտրաժի վճիռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմում, ապա նշված դիմումները միացվում են, և դրանք քննում է արբիտրաժի վճիռի համար կատարողական թերթ տալու դիմումը քննող դատավորը մեկ վարույթի շրջանակում:

45. Որո՞նք են արբիտրաժային վարույթի դատական աջակցության վարույթները

Դատարանների և արբիտրաժային տրիբունալների փոխհարաբերությունը կարող է առաջին հայացքից պարադոքսային թվալ. թեև արբիտրաժը դատարան դիմելու այլընտրանք է՝ օրենքը արբիտրաժային վարույթի մեկնարկին նախորդող փուլում, վարույթի ընթացքում կամ ավարտից հետո կողմերին տալիս է դատարան դիմելու ու որոշակի հարցերում դատարանից աջակցություն ստանալու հնարավորություն: Դատարանից աջակցություն ստանալը պայմանավորված է նրանով, որ դատարաններն օժտված են հարկադրող ուժով, որը հաճախ անհրաժեշտ է արդյունավետ արբիտրաժային վարույթ իրականացնելու համար:

Այսպես, դատական աջակցություն ստանալու համար դատարան կարելի է դիմել.

- արբիտր(ներ)ի նշանակման շուրջ անհամաձայնության դեպքում արբիտր(ներ) նշանակելու դիմում,
- արբիտրի բացարկի վերաբերյալ որոշում կայացնելու դիմում,
- արբիտրի լիազորությունների դադարեցման հարցը լուծելու դիմում,
- արբիտրաժային տրիբունալի իրավասության վերաբերյալ որոշում կայացնելու դիմում,
- հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դիմում,
- դատարանի աջակցությամբ ապացույց(ներ) ձեռք բերելու դիմում:

Նշված բոլոր դեպքերում դիմումը ներկայացվում է արբիտրաժի գտնվելու վայրի դատարանին՝ բացառությամբ արբիտրաժային տրիբունալի իրավասությանն առնչվող գործերի. այդ դեպքում դիմումը ենթակա է ներկայացման **Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին**:

Այսպես, վերը նշված դիմումները դատարանին կարող են ներկայացվել մեկ ամսվա ընթացքում սկսած այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ կարող էր իմանալ դիմում ներկայացնելու հիմք հանդիսացող հանգամանքների մասին, եթե այլ ժամկետ սահմանված չէ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով: Նշված ժամկետն ընդհանուր է և առանձին դեպքերում օրենքով կամ արբիտրաժային համաձայնությամբ կարող է փոփոխվել:

Օրենքը նման դիմումներին ներկայացնում է նվազագույն պահանջներ, որոնք չպահելը կհանգեցնի դիմումի վերադարձի: Այսպես, դիմումի մեջ պետք է նշվեն.

- 1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է դիմումը,
- 2) վեճը քննող արբիտրաժի անվանումը, վայրը և կազմը,

3) արբիտրաժային վարույթի մասնակիցների անունները (անվանումները), նրանց հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, դիմող քաղաքացու անձնագրային տվյալները, դիմող իրավաբանական անձի պետական գրանցման համարը,

4) այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել դատարան դիմելու համար՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի այն դրույթների վկայակոչմամբ, որ նախատեսում են դատարանի՝ հայցվող գործառույթների կատարումը,

5) դիմողի պահանջը:

Առանձին դիմումների դեպքում ներկայացվում են նաև լրացուցիչ պահանջներ: Օրինակ՝ եթե դիմումով դատարանից խնդրարկվում է հայցի ապահովման միջոցի կիրառում, ապա, վերը նշված տեղեկությունից բացի, պետք է ներկայացվեն նաև այն փաստարկները, որ հիմնավորում են հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունը, և այն միջոցը, որի կիրառումը խնդրարկվում է (օրինակ՝ հայցագնի չափով արգելանք դնել պատասխանողին պատկանող գույքի վրա, պատասխանողին արգելել որոշակի գործողություններ կատարել, պատասխանողին կամ այլ անձանց պարտավորեցնել կատարել վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ, կասեցնել վեճի առարկա գույքի իրացումը): Կամ եթե ներկայացվում է արբիտրաժին բացարկ հայտնելու դիմում, ապա դիմող կողմը պարտավոր է վկայակոչել այն բոլոր հանգամանքները, որոնք, իր կարծիքով, բացարկի հիմք են: Եթե ներկայացվում է արբիտրաժային վարույթին առնչվող փաստաթղթերը կամ ապացույցներն արբիտրաժին կամ արբիտրաժային վարույթի կողմերին տրամադրել պարտավորեցնելու դիմում, ապա, վերը նշված փաստերից բացի, անհրաժեշտ է ներկայացնել այն փաստաթղթերի հստակ ցանկն ու դրանք անհատականացնող այլ տվյալներ, որոնց հանձնման մասին պահանջով կողմը դիմում է դատարան: Նմանատիպ պահանջը վերաբերելի է նաև ապացույցների ձեռքբերման հարցում աջակցություն ստանալու դիմումներին. այդ դեպքում դիմողը պետք է նշի տեղեկություններ՝ ձեռքբերման ենթակա ապացույցների մասին, ինչպես նաև ակնկալվող աջակցության եղանակը՝ ինչ եղանակով պետք է ձեռք բերվեն ապացույցները (գույք կամ նմուշ վերցնել, անձին հարցաքննել ևն):

Վերը նշված դիմումներին կից անհրաժեշտ է ներկայացնել.

1) արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու դիմումը ներկայացնելու պահին գործն արբիտրաժի համապատասխան փուլում գտնվելու մասին վկայող փաստաթուղթը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվել է հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու դիմում,

2) արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ դրա պատշաճ ձևով վավերացված պատճենը կամ համաձայնության՝ կնքված լինելու մասին այլ ապացույցի բնօրինակը կամ պատշաճ ձևով վավերացված պատճենը, ընդ որում Կենտրոնում քննվող կամ Կենտրոնին հանձնման ենթակա վեճերով փաստաթղթերի պատշաճ վավերացումները կատարում է Կենտրոնը (գործընթացը կազմակերպում է Քարտուղարությունը),

3) պետական տուրքի անդորրագիրը¹³,

¹³ «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն՝ նշված դիմումներով պետական տուրքի չափը 4.000 ՀՀ դրամ է:

4) դիմումի պատճենն արբիտրաժային վարույթի մյուս կողմին հանձնելը կամ ուղարկելը հավաստող փաստաթուղթ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվել է հայցի ապահովման միջոցներ կիրառելու, արբիտրաժային վարույթին առնչվող փաստաթղթերը կամ ապացույցներն արբիտրաժին կամ արբիտրաժային վարույթի կողմերին տրամադրել պարտավորեցնելու կամ ապացույցներ ձեռք բերելուն օժանդակելու դիմում:

Բոլոր այն դեպքերում, երբ դատարանին ներկայացվում է արբիտրաժային վարույթին առնչվող փաստաթղթերը կամ ապացույցներն արբիտրաժին կամ արբիտրաժային վարույթի կողմերին տրամադրել պարտավորեցնելու, ապացույցներ ձեռք բերելուն օժանդակելու դիմումներ, կցվում է նաև արբիտրաժային տրիբունալի՝ դատարան դիմելու համաձայնությունը: Դատարանը նշված դիմումներով նիստ չի հրավիրում, իսկ դիմումի կապակցությամբ որոշումը պարտավոր է դիմողին տրամադրել ոչ ուշ, քան դիմումը ստանալու հաջորդ աշխատանքային օրը: Մյուս բոլոր դիմումներով՝ դատարանը գործի քննությունն անցկացնում է նիստով ու պարտավոր է գործն ավարտել և որոշումը տրամադրել դիմումը վարույթ ընդունելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դիմումների քննության ընթացքում դատարանը կայացնում է որոշում, որն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ: Ընդ որում, օրենքի համաձայն, նշված որոշումները պետք է հրապարակվեն վճռի համար սահմանված կանոններով, ինչը ենթադրում է հրապարակում դատական իշխանության պաշտոնական կայքէջում, իսկ կատարում ենթադրող որոշումներով տրամադրվում է կատարողական թերթ:

ԱՐՔԻՏՐԱԺԻ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

46. Ո՞ր հարաբերություններն են կարգավորվում «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով

Արբիտրաժային հաստատությունների ստեղծման, գործունեության, կայացրած վճիռների ու այլ որոշումների ճանաչման, կատարման հետ կապված հարաբերություններն իրավականորեն կարգավորվում են ներպետական օրենսդրությամբ ու պետության վավերացրած միջազգային պայմանագրերով: Քանի որ միջազգային պայմանագրերին անդրադարձը կկատարվի հաջորդ ենթաբաժնում, ընդգծենք միայն, որ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և գործում են ուղղակիորեն, եթե դրանցում գործողության այլ կանոններ սահմանված չեն: Այս կանոնի իրավական հիմքերը սահմանվում են ՀՀ սահմանադրությամբ, որի վրա հիմնվելով էլ կարող ենք պնդել, որ արբիտրաժային վարույթներին առնչվող ներպետական իրավական ակտերի մեջ առաջինը նախ և առաջ ՀՀ սահմանադրությունն է:

Քննարկվող իրավահարաբերությունների իրավական կարգավորման հարցում մեծ բաժինը պատկանում է «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքին¹⁴, որը գործում է 2007 թ. փետրվարի 10-ից: Նրա ընդունումով ուժը կորցրած է ճանաչվել «Միջևորդ դատարանների և միջևորդ դատավարության մասին» օրենքը (գործել է 1999 թ. հունվարի 1-ից մինչև «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի ուժի մեջ մտնելու պահը): Ի դեպ, հետաքրքիր է, որ վերջինս անդրադառնում էր ad hoc դատարաններին՝ սահմանելով դրանց ու մշտապես գործող միջևորդ դատարանների տարբերակումը, ինչը բացակայում է «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում: Հաշվի առնելով ձեռնարկի նպատակն ու այն հանգամանքը, որ «Միջևորդ դատարանների և միջևորդ դատավարության մասին» օրենքի ուժը կորցնելու պահից անցել է ավելի քան 16 տարի, այդ ժամանակահատվածում ավարտվել են միջևորդ դատարանների վարույթներում գտնվող գործերի քննություններն ու դրանց հաջորդող հնարավոր վեճերը, այս և ուժը կորցրած այլ իրավական ակտերի չենք անդրադառնա:

¹⁴ՀՕ-55-Ն, ընդունվել է 25.12.2006, ուժի մեջ է մտել 10.02.2007:

Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը այն հիմնական իրավական ակտն է, որն ընդհանուր գծերով սահմանում է արբիտրաժային վարույթի հիմնական սկզբունքները, արբիտրաժային համաձայնություններին ներկայացվող պահանջները, արբիտրաժային տրիբունալների ձևավորմանը և իրավասությանը վերաբերող կանոնները, արբիտրների անաչառության և անկողմնակալության օրենսդրական երաշխիքները, արբիտրի գործունեության սկզբունքներն ու վարքագծի կանոնները, բացարկի հիմքերն ու ներկայացման կարգը, արբիտրաժային վարույթին նախորդող կամ դրա ընթացքում կիրառվող նախնական կարգադրությունների, հայցի ապահովման միջոցների հիմնական կարգավորումները, վարույթի լեզվի, վեճի նկատմամբ կիրառելի օրենսդրության ընտրության ուղենիշները, կարգավորում է հայցադիմումի և պատասխանի ներկայացման, գործի քննության ընթացքի վերաբերյալ հարցերը, արբիտրաժային տրիբունալի վճռի ձևին, բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները, վճռի ուղղման, լրացման, մեկնաբանման հիմնահարցերը, վիճարկման հիմքերն ու ընդհանուր կարգը, արբիտրաժային վճիռների կատարման, միջազգային արբիտրաժային վճիռների ճանաչման հարցերը:

Հատկանշական է, որ Նշված բոլոր հարցերի առումով՝ օրենքը հիմնականում տալիս է ուղենշային կարգավորումներ՝ հնարավորություն տալով արբիտրաժային վարույթի մասնակիցներին ու արբիտրաժային հաստատություններին փոխադարձ համաձայնությամբ կամ ներքին կանոնակարգերով, կանոններով սահմանելու այլ կարգավորումներ՝ պահպանելով օրենքով սահմանված հիմնական երաշխիքները կամ պարտադիր կանոնները: Օրինակ՝ արբիտրի ընտրության հարցում օրենքով պարտադիր են արբիտրի տարիքային նվազագույն շեմը՝ 25 տարեկան, և կրթական ցենզի՝ բարձրագույն կրթության ամկայությունը: Մնացած չափանիշների հարցում օրենքը կողմերին ու արբիտրաժային հաստատություններին տալիս է գործելու ազատություն:

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը հիմնականում սահմանում է արբիտրաժի իրականացման նյութաիրավական հիմքերն ու ժամկետները՝ ընթացակարգային կարգավորումները թողնելով կողմերի կամ տրիբունալի ընտրությանը: Մասնավորապես՝ օրենքի 19-րդ հոդվածից բխում է, որ կողմերը կարող են իրենց հայեցողությամբ համաձայնել արբիտրաժային տրիբունալի՝ վարույթի իրականացման ընթացակարգին: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալը արբիտրաժային վարույթն իրականացնում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան ընթացակարգային կանոններով:

Նշվածն այն հիմնական իրավական ակտն է, որն ուղղակիորեն կարգավորում է արբիտրաժային իրավահարաբերությունները: Մշտապես գործող արբիտրաժային հաստատության դեպքում գործում են նաև իր ներքին ակտերը, օրինակ՝ Կենտրոնի դեպքում իր Արբիտրաժային կանոններն են ու կառավարման մարմինների ընդունած այլ ակտեր, որոնք արբիտրաժային համաձայնության ու վեճը Կենտրոնին հանձնելու ուժով պարտադիր են դառնում նաև կողմերի համար, եթե կողմերի միջև չկա առանձին հարցերի շուրջ

ձեռք բերված համաձայնություն: Արբիտրաժային տրիբունալների համար պարտադիր կիրառման ենթակա են նաև արբիտրաժային վարույթի մասնակիցների՝ արբիտրաժային համաձայնությամբ կամ այլ եղանակով որոշած նորմերն ու ընթացակարգերը, եթե դրանք չեն հակասում օրենքին:

47. Արբիտրաժին առնչվող դատական և հարկադիր կատարման վարույթները ո՞ր օրենսդրությամբ են կարգավորվում

ՀՀ-ում արբիտրաժին առնչվող դատական վարույթների վերաբերյալ հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Օրենսգրքի 5-րդ ենթաբաժինը կարգավորում է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու դիմումներով գործերով վարույթների ընթացակարգային նորմերը, դիմելու և քննության ժամկետները, դատավարական փաստաթղթերին ու դատական ակտերին ներկայացվող պահանջները: Անհրաժեշտության դեպքում ենթաբաժնի նորմերը հաճախ հղում են կատարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այլ բաժինների հոդվածների, ուստի օրենսգիրքն ամբողջությամբ կիրառելի է քննարկվող իրավահարաբերությունների նկատմամբ:

Արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման, արբիտրաժային վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու դիմումները դատարանին ներկայացնելը, դատական ակտերի վերադաս բողոքարկումները ենթադրում են նաև պետական տուրքի վճարում, որի չափերը սահմանվում են «Պետական տուրքի մասին» օրենքով:

Արբիտրաժային վճիռների, հայցի ապահովման միջոցների (դատարանի և արբիտրաժային հաստատության սահմանած) հարկադիր կատարումն իրականացնում է ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (ՀԿԱԾ), որը կատարողական գործողությունների կատարման հիմքերն ու կարգը սահմանում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով:

48. Լայն կիրառում ստացած ինչպիսի՞ ներպետական նախադեպային որոշումներ կան արբիտրաժի ոլորտում

Բացի իրավական ակտերից՝ ուղենշային իմաստով կարևորություն կարող են ունենալ նաև ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, եթե դրանք անդրադառնում են ոլորտի նկատմամբ կիրառելի իրավական ակտերի կիրառելիության չափանիշներին, ակտերի մեկնաբանմանը: Թեև նշված որոշումներով արտահայտված դիրքորոշումներն ուղղակիորեն պարտադիր չեն արբիտրաժային վարույթի մասնակիցների ու արբիտրաժային տրիբունալների համար, սակայն դրանց չիտեսելը մեծացնում է հավանականությունը, որ հետագայում դատական բողոքարկումների ժամանակ, դատարանները օրենքը կկիրառեն հենց այդ դիրքորոշումներին համապատասխան:

ՀՀ վճռաբեկ դատարանը, Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո, 2018-ին ընդունել է, որ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձի՝ պայմանագրից բխող կամ դրան առնչվող վեճը դատարանին հանձնելու իրավունքը չի կարող կրել սահմանափակումներ, և այդպիսի վեճը, եթե կողմը հանձնել է դատարանին, պետք է ըստ էության քննվի՝ հակառակ կնքված պայմանագրով նախատեսված արբիտրաժային համաձայնությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնելու արբիտրաժային տրիբունալի լուծմանը:¹⁵

Մեկ այլ 2023 թվականի գործով, անդրադառնալով արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն ընդհանուր իրավասության դատարանի կողմից կատարվելու հնարավորության վերաբերյալ հարցին, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արբիտրաժի ենթակայությանն օրենքով հանձնված գործերը քննում և լուծում է վերջինս, եթե առկա է կողմերի համաձայնությունը: Իսկ արբիտրաժի իրավասությանը հանձնված գործերի քննությունը և լուծումը, համաձայն ընդհանուր կանոնի, դատական կամ այլ կարգով բացառվում է, եթե առկա է արբիտրաժային վավեր համաձայնություն, արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել և կողմը հղում է կատարում նշված համաձայնությանը:¹⁶

¹⁵ Սվետլանա Գևորգյանն ընդդեմ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի, թիվ ԵԿԴ/3817/02/16 քաղաքացիական գործով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում, 07.04.2018:

¹⁶ Եվգենի Պրիյմակի՝ ընդդեմ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության՝ որոշումն անվավեր ճանաչելու, զրպարտություն համարվող տեղեկությունները հերքելու, վիրավորանքի համար ներողություն խնդրելու, վիրավորանքով ու զրպարտությամբ պատվին ու արժանապատվությանը, գործարար համբավին պատճառված և նյութական վնասների հատուցման պահանջների մասին թիվ ԵԴ/23193/02/20 գործով՝ Վճռաբեկ դատարանի 2023 թ. որոշումը՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905402990:

Առանձնահատուկ պետք է համարել արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ վեճի ենթակայության հարցի շուրջ կայացված որոշումը, որում 2014 թ. ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա է քննության բացառապես դատարանում¹⁷: Չնայած այդ որոշմանը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքն այսօր թույլ է տալիս վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը քննել նաև արբիտրաժային կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև սնանկ ճանաչված պարտապանի դեմ ներկայացված պահանջներով արբիտրաժային վարույթի կարճման հարցին: Մասնավորապես՝ վճռաբեկ դատարանը 2024 թ. որոշմամբ արձանագրել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից կարճման են ենթակա բացառապես քաղաքացիական կամ վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող այն գործերի վարույթները, որոնցով ներկայացված են սնանկ ճանաչված պարտապանից գումար բռնագանձելու կամ գույք բռնագրավելու պահանջներ՝ պայմանով, որ պարտատերերը հնարավորություն ունեն դրանք սնանկության վարույթի շրջանակում ներկայացնելու որպես «Սնանկության մասին» օրենքի իմաստով առանձին պահանջ: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված պահանջները «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի առարկա չեն, սակայն ծագել են սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ, ու այդ վեճով պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում երրորդ անձ, ապա այդ գործերի վարույթները ենթակա են ոչ թե կարճման, այլ ըստ առարկայական ընդդատության հանձնման Սնանկության դատարանի քննությանը՝ նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ քննելու համար¹⁸:

¹⁷ Սեյրան Մանթաշյան և մյուսներ, «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ, քաղաքացիական թիվ ԵԿԴ/1910/02/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում, 18.07.2014:

¹⁸ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Հակոբ Սաֆարյանի և Ելենա Հարությունյանի, թիվ ԵԴ/1846/02/20 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2024 թ. որոշումը:

49. Ինչպիսի՞ն է դատական պրակտիկան Հայաստանում արբիտրաժի ոլորտում

Անդրադառնալով ՀՀ դատաիրավական պրակտիկային՝ կարող ենք ընդգծել, որ արբիտրաժային վարույթի դատական աջակցման վարույթները ՀՀ դատաիրավական պրակտիկայում տարածված չեն, իսկ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատարանները երբեմն համանման փաստական հանգամանքների պայմաններում կիրառում են տարբերակված մոտեցում: Նշվածը հաշվի առնելով՝ հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ դատաիրավական պրակտիկայից վերցված մի քանի հիմնախնդրի:

Նախ նշենք, որ աջակցման վարույթներում մեծ կշիռ ունեն հայցի ապահովման միջոցների կիրառման դիմումներով վարույթները: Հետաքրքիր է ընդգծել, որ դատարանները որոշ դեպքերում մերժել են հայցի ապահովման միջնորդությունները՝ պատճառաբանելով, որ գործն արդեն իսկ գտնվում է արբիտրաժային հաստատության վարույթում, իսկ դիմողը չի ներկայացրել պատշաճ հիմնավորումներ, թե ինչու համապատասխան դիմումը չի ներկայացրել արբիտրաժային տրիբունալին: Նման դատաիրավական պրակտիկայի հետագա զարգացումը, արբիտրաժային կանոնների բովանդակությունից անկախ, որոնք կիրառում է արբիտրաժային տրիբունալը, կարող է նպաստել արբիտրաժային հաստատությունների դերի բարձրացմանն ու նվազեցնել արբիտրաժային վարույթներին դատարանների միջամտության դեպքերը: Բացի նշվածից՝ բավականին շատ են դատարանների մերժումները (երբ հայցի ապահովման միջնորդություններով դիմումները ներկայացվել են թե՛ մինչև վեճն արբիտրաժին հանձնելը, թե՛ արբիտրաժային վարույթի ընթացքում)՝ պայմանավորված դիմումներում հիմնավորումների բացակայությամբ: Այլ կերպ ասած՝ դատարանները, մերժելով հայցի ապահովման միջոց կիրառելու՝ կողմի խնդրանքը, ընդգծել են, որ դիմողը չի հիմնավորել, թե նման միջոց չձեռնարկելը ինչով կարող է անհնարին դարձնել հետագայում կայացվելիք արբիտրաժի վճռի կատարումը, կամ որ չկիրառելը կարող է ազդել հայցվորի շահերի վրա:

Արբիտրաժային վարույթի դատական աջակցման վարույթներում տեսակարար կշիռ ունեն նաև արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման դիմումների բավարարումները: Նշված գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնականում գործ ունենք վարկային իրավահարաբերություններից բխող վեճերի հետ, որոնցով արբիտրաժային հաստատությունները պատասխանող կողմին պատշաճ կերպով չեն ներգրավել արբիտրաժային վարույթին, ու արբիտրաժային վճռի առկայության մասին անձնիմացել է արդեն կատարման փուլում: Սա վկայում է երկու խումբ խնդիրների մասին.



ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ ԽՆԴԻՐՆԵՐ

Արբիտրաժային համաձայնությունների կնքման ժամանակ հաճախ անձը չի գիտակցում, որ կնքում է նման համաձայնություն. բանկը, վարկային կազմակերպությունը չեն պարզաբանում արբիտրաժի բնույթն ու վարույթի առանձնահատկությունները, ինչով պայմանավորված անձինք սպասում են դատական ծանուցագրերի՝ անտեսելով արբիտրաժային հաստատության ուղարկած նամակները կամ ծանուցումները կամ չգիտակցելով դրանց բնույթը: Կարևոր է ընդգծել, որ վարկային պայմանագրերում կիրառվող մասնագիտական եզրութաբանությունը, պայմանագրերի ծավալն ու հաճախ կիրառվող մանր տառաչափերը նվազագույնի են հասցնում հավանականությունը, որ համապատասխան կեղ մասնագիտական գիտելիքի չտիրապետող անձը պայմանագիրը կնքելուց առաջ մանրամասն կուսումնասիրի և/կամ կընկալի գործարքի բոլոր դրույթների իրական իմաստը:




ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ ԽՆԴԻՐՆԵՐ

Առաջին խմբի խնդիրների տրամաբանական շարունակությունը արբիտրաժային հաստատությունների՝ վարույթների իրականացումն է, որի ժամանակ պահվում են ծանուցման համար կանոններով սահմանված ձևական չափանիշները, սակայն բովանդակային իմաստով չի բացահայտվում արբիտրաժային համաձայնության ու վարույթի առկայության մասին պատասխանող կողմի իրական տեղեկացվածության հանգամանքը:

Ի վերջո, բանկերը, իրենց առաջարկած արբիտրաժային համաձայնությունների էության ու առանձնահատկությունների մասին պատշաճ չիրազեկելով կողմին, ծախսում են կյութական (արբիտրաժային ծախսեր) ու ոչ կյութական (ժամանակ, աշխատուժ) ռեսուրսներ՝ ստանալու մի վճիռ, որը վերը նշված պատճառներով չեղյալ է ճանաչվում, իսկ կողմերն իրենց շահերի պաշտպանության համար ստիպված են լինում սկսել նոր վարույթ արդեն դատարաններում: Այս հանգամանքը ոչ միայն վնասում է կողմերի օրինական շահերը, այլև պատճառ է դառնում արբիտրաժային հաստատությունների նկատմամբ հանրային վստահության կորստի, ձևավորում նրանց գործունեության նկատմամբ անլուրջ ու ոչ վստահելի վերաբերմունք:

50. Ո՞րն է «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման» մասին Նյու Յորքի կոնվենցիայի դերը

ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, ու դրանցով սահմանվող իրավակարգավորումները պարտադիր են ՀՀ տարածքում գտնվող ու գործունեություն կատարող յուրաքանչյուր անձի համար: Արբիտրաժի ոլորտում ՀՀ կարևոր քայլերից մեկը «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման» մասին կոնվենցիայի (առավելապես հայտնի է որպես Նյու Յորքի կոնվենցիա) վավերացումն է եղել, որի անդամ է **172 երկիր**¹⁹: Ընդունված տեսակետ կա, որ Նյու Յորքի 1958 թ. կոնվենցիան միջազգային առևտրային իրավունքի ոլորտում ամենահաջողված բազմակողմ փաստաթուղթն է, որն ընդունման պահից առ այսօր անդամ երկրներն ուղղակիորեն կիրառում ու մեկնաբանում են:



Նյու Յորքի կոնվենցիայի անդամ պետությունների աշխարհագրությունը

Նյու Յորքի կոնվենցիան ունի երկու նպատակ՝ ա. արբիտրաժային համաձայնությունների ճանաչում և կատարում, բ. օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչում և կատարում: Հետևաբար, այն վերաբերում է միայն օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչմանը և կատարմանը. չի կիրառվում ներպետական արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման նկատմամբ:

¹⁹«Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման» մասին Նյու Յորքի կոնվենցիա, 1958, <https://www.newyorkconvention.org/countries>:

Կոնվենցիան իրավունք է վերապահում անդամ երկրներին ազգային օրենսդրությամբ սահմանելու առավել մեղմ կարգավորումներ և ամրագրում կարևոր սկզբունք. կոնվենցիան առավելապես պետք է մեկնաբանվի ու կիրառվի այնպես, որ գործի արբիտրաժային վճիռների ճանաչման ու կատարման կանխավարկածը: Կատարմանը միտված քաղաքականությանը համապատասխան՝ կիրառվում է առավելագույն արդյունավետության սկզբունքը. եթե կիրառելի են մեկից ավելի միջազգային պայմանագրեր, դատարանները պետք է կիրառեն այն միջազգային պայմանագիրը, որն ապահովում է արբիտրաժային վճռի կատարումը:

Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդը (ԱԱՄԽ)²⁰ 1976 թվականից մեկնարկել է առևտրային արբիտրաժի տարեգրքի հրատարակումը: Տարեգրքերը ներառում են անդամ երկրների դատարանների՝ մոտ երկու հազարի չափ դատական ակտեր, որոնք վերաբերում են կոնվենցիայի նորմերի կիրառմանն ու մեկնաբանմանը: Նշվածը մեծապես նպաստում է անդամ երկրների՝ կոնվենցիոն դրույթների միատեսակ մեկնաբանմանն ու կիրառմանը՝ դրանով իսկ արբիտրաժը դարձնելով ավելի գրավիչ ու կանխատեսելի: Դատավորները, արբիտրները, իրավաբանները, առևտրային գործարքի կողմերը, արբիտրաժային հաստատությունների մարմինները և մյուս շահագրգիռ անձինք հնարավորություն են ստանում մատչելի ու համակարգված եղանակով ծանոթանալու տարբեր երկրների դատարանների տված իրավական մեկնաբանություններին ու ազգային դատարանների դիրքորոշումներին: Արբիտրաժային համաձայնությունների կազմման, մեկնաբանման, վճիռների կայացման ժամանակ, արբիտրաժային վարույթների ընթացքում սրանք հաշվի են առնում այն երկրների փորձն ու դատարանների մոտեցումները, որտեղ հնարավոր է կատարման ներկայացվի արբիտրաժային վճիռը: Ի վերջո, միջազգային վեճերով կայացված արբիտրաժային վճիռները արբիտրաժի գտնվելու վայրից տարբերվող երկրում ճանաչման ու կատարման ներկայացնելիս արբիտրաժային վարույթի մասնակիցներն ունենում են ողջամիտ ակնկալիք, որը նվազագույնի է հասցնում ազգային օրենսդրությունների տարբերության հետևանքով արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման կամ ճանաչումն ու կատարումը մերժելու հավանականությունը:

Արբիտրաժային վճիռների ճանաչման ու կատարման համար անհրաժեշտ չէ, որ պետությունը, որտեղ կայացվել է վճիռը, լինի կոնվենցիայի անդամ պետություն (փոխադարձության սկզբունք): Սույն կարգավորումը չի գործում, երբ պետությունը, որտեղ հայց-

²⁰ Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդը (ԱԱՄԽ) հիմնադրվել է 1961 թ. մայիսին միջազգային առևտրային արբիտրաժի ոլորտում հանդես եկող մի խումբ փորձագետների և գործընկերների նախաձեռնությամբ: Համաշխարհային հասարակական կազմակերպություն է, որը ուղղված է արբիտրաժը, հաշտարարությունը և միջազգային վեճերի լուծման այլ եղանակները խթանելուն ու զարգացնելուն: ԱԱՄԽ անդամները դատական տարբեր համակարգերից են, ակտիվորեն ներգրավված միջազգային արբիտրաժում որպես իրավաբաններ, արբիտրներ, գիտնականներ և դատական համակարգի անդամներ:

վում են արբիտրաժային վճռի ճանաչումն ու կատարումը, կատարել է փոխադարձության վերապահում: Նյու Յորքի կոնվենցիան թույլ է տալիս այն վավերացնող երկրին կատարել երկու տեսակի **վերապահում**.

1. Փոխադարձության վերապահում. այս դեպքում անդամ պետությունը հայտարարում է, որ կիրառում է կոնվենցիան միայն այլ անդամ պետության տարածքում կայացված արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման նկատմամբ: Դետաքրքիր է, որ անդամ պետությունների մոտ երկու երրորդը կատարել է սույն վերապահումը: Փոխադարձության վերապահում կատարած պետության դատարանը կիրառում է կոնվենցիան միայն այն դեպքում, երբ արբիտրաժային վճիռը կայացվել է այլ անդամ պետության տարածքում, կամ երբ արբիտրաժային վճիռը չի պատկանում ներպետական վճիռների տեսակին և արտացոլում է այլ անդամ պետության հետ կապերի առկայությունը:
2. Առևտրային վեճերի առումով վերապահում. այս դեպքում անդամ պետությունը հայտարարում է, որ կիրառում է կոնվենցիան միայն այն վեճերի նկատմամբ, որ ծագել են նման հայտարարություն կատարած պետության ներպետական օրենսդրությամբ առևտրային համարվող պայմանագրային կամ ոչ պայմանագրային իրավահարաբերություններից: Անդամ պետությունների մոտ մեկ երրորդը կատարել է նման վերապահում:

Չնայած այն հանգամանքին, որ կոնվենցիան նախատեսում է վերապահումներ միայն արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման համար, վերապահումներն ընդհանուր առմամբ կիրառվում են նաև արբիտրաժային համաձայնությունների ճանաչման նկատմամբ:

Կոնվենցիային միանալիս ԶԶ-ն կատարել է վերը նշված երկու վերապահումները՝ միանալով հետևյալ հայտարարությամբ.

«1. Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիան կկիրառի միայն մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ընդունված արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման նկատմամբ:

2. Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիան կկիրառի միայն իրավական հարաբերություններից բխող պայմանագրային կամ ոչ պայմանագրային անհամապատասխանությունների նկատմամբ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան համարվում են փնտրելի»²¹:

Քանի որ Նյու Յորքի կոնվենցիան միջազգային պայմանագիր է, կիրառող ազգային դատարաններն այն պետք է մեկնաբանեն ոչ թե ազգային օրենսդրությամբ սահմանված իրավանորմերի մեկնաբանման կանոններով, այլ միջազգային իրավունքի մեկնաբանման կանոններով, որոնք կողիֆիկացված են «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թ. կոնվենցիայի (Վիեննայի կոնվենցիա) 31-րդ և 32-րդ հոդվածների համաձայն: Զայաստանի Զանրապետությունը ևս միացել է Վիեննայի կոնվենցիային:

²¹ ԶԶ վերապահումները Նյու Յորքի կոնվենցիային, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=77867>:

51. ԻՆՃ Է ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ը

Քանի որ խոսեցինք միջազգային իրավունքի և արբիտրաժի ոլորտում միջազգային կառույցների ընդունած նորմերի մասին, այժմ անդրադառնանք նաև ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովին (ՅՈՒՆՍԻՏՐԱԼ կամ UNCITRAL), որի ընդունած մի շարք մոդելային օրենքներ, կանոններ կարևոր նշանակություն ունեն անդամ երկրների համար՝ զարգացնելու ներպետական օրենսդրությունը, մոտարկելու այն միջազգային պայմանագրերով սահմանված չափանիշներին: Այս մոդելային օրենքներն ու կանոնները չունեն պարտադիր բնույթ և խորհրդատվական են, սակայն իրավակիրառողները, ներառյալ արբիտրաժային տրիբունալներն ու դատարանները հաճախ օգտագործում են դրանք, երբ առկա է նորմի մեկնաբանման անհրաժեշտություն կամ իրավակարգավորման բաց: Այսպես, դեռևս 1985-ին UNCITRAL-ը հաստատել է (փոփոխել է 2006-ին) միջազգային առևտրային արբիտրաժի մոդելային օրենքը (UNCITRAL-ի մոդելային օրենք). կոնվենցիայի անդամ ութ տասնյակից ավելի երկրներ ընդունել են իրենց ազգային օրենքները՝ ամբողջությամբ հիմք ընդունելով մոդելային օրենքի տեքստը կամ վերցնելով մոդելային օրենքի հիմնական կարգավորումները: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը ևս հիմնված է UNCITRAL մոդելային օրենքի վրա:

Կարևոր է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2006 թ. փոփոխություններն անդրադարձել են արբիտրաժային պրակտիկայում 1985 թվականից ի վեր տեղի ունեցած կարևոր զարգացումներին: Այսպես, առաջին փոփոխությունը վերաբերում է արբիտրաժային համաձայնության ձևին: Այն սահմանում է, որ համաձայնությունը կարող է կնքվել նաև կապի ժամանակակից միջոցների օգտագործմամբ, օրինակ՝ էլեկտրոնային նամակագրությամբ: Մյուս փոփոխությամբ օրենքը սահմանում է արբիտրաժային տրիբունալի՝ հայցի ապահովման միջոցների կիրառման որոշում կայացնելու իրավասությունը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն արտացոլում է այս կարևոր նորամուծությունները՝ 7-րդ և 17-րդ հոդվածներում համապատասխանաբար:

Արբիտրաժային արդարադատության ոլորտում կարևոր է անդրադառնալ նաև Արբիտրաժային կանոններին, որի առաջին տարբերակը ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովն ընդունել է 1976-ին: Հետագայում դրանք երեք անգամ լրացվել ու փոփոխվել են. վերջին լրացված տարբերակը հաստատվել է 2021-ին: Բազմաթիվ արբիտրաժային հաստատություններ ու, առավելապես, ad hoc արբիտրաժային տրիբունալներ այս կանոնները լայնորեն կիրառվում են: Դրանք կարգավորում են արբիտրաժային վարույթի բոլոր փուլերն ու հարցերը, ներառյալ արբիտրների ընտրության, արբիտրաժային վարույթի անցկացման ընթացակարգերը, արբիտրաժային վճիռների ձևին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներն ու մեկնաբանման կանոնները, սահմանում պարզ արբիտրաժային համաձայնության տիպային ձև: Կանոնների վերջին՝ 2021 թ. լրացումներով տրվել են կարգավորումներ նաև արագացված վարույթների առումով: Համակարգային մոտեցման ու պարբերաբար լրացումների շնորհիվ UNCITRAL-ի Արբիտրաժային կանոնները հաճախ օգտագործում են մշտապես գործող մի շարք արբիտրաժային հաստատություններ սեփական արբիտրաժային կանոնների մշակման ու ընդունման համար:

52. Որո՞նք են արբիտրաժի ոլորտում այլ հիմնարար միջազգային փաստաթղթերը, և ի՞նչ կարևորություն ունեն դրանք

Մի շարք միջազգային ուղեցույցներ կամ միջազգային լավագույն փորձի ամփոփումներ արբիտրաժային տրիբունալների և վեճի կողմերի համար խորհրդատվական նշանակության աղբյուրներ կարող են լինել: Այս փաստաթղթերը նպաստում են արբիտրաժային գործընթացն ավելի թափանցիկ և կանխատեսելի դարձնելուն: Խոսելով խորհրդատվական նշանակություն ունեցող փաստաթղթերից՝ անդրադառնանք նաև դեռևս 1947 թվականից գործող Իրավաբանների միջազգային ասոցիացիայի ընդունած կանոններին:

→ 2004 թ. ընդունված Միջազգային արբիտրաժում շահերի բախման ուղեցույցը (անգլ.՝ IBA Guidelines on Conflicts of Interest in International Arbitration), որում սահմանվող կանոնները կարևոր նշանակություն ունեն արբիտրների անկախության ու անաչառության ապահովման հարցում: Նշված կանոնները ուղենշային են դարձել աշխարհի տարբեր երկրներում վարվող արբիտրաժային վարույթների մասնակիցների, արբիտրների ու ազգային դատարանների համար այն իրավիճակներում ու այնպիսի վեճերով, որոնք վերաբերում են շահերի բախման ժամանակ տեղեկության բացահայտմանն ու արբիտրների բացարկին:

→ 2013 թ. ընդունված Միջազգային արբիտրաժում կողմերի ներկայացուցչության ուղեցույցը (անգլ.՝ IBA Guidelines on Party Representation in International Arbitration) վերաբերում է կողմերի օրինական և այլ ներկայացուցիչների վարքագծին:

→ Իրավաբանների միջազգային ասոցիացիայի ընդունած կանոններից բացի՝ աչքի են ընկնում 2018 թ. Պրահայի՝ միջազգային արբիտրաժում վարույթի արդյունավետ վարման կանոնները (անգլ.՝ Prague Rules on the Efficient Conduct of Proceedings in International Arbitration), որոնք արբիտրաժային տրիբունալներին քաջալերում են ավելի նախաձեռնող դեր ստանձնել արբիտրաժային վարույթի ընթացքում: Ի տարբերություն Իրավաբանների միջազգային ասոցիացիայի կանոնների՝ Պրահայի կանոնները չեն խրախուսում փաստաթղթաշրջանառությունն արբիտրաժային վարույթի ընթացքում:

→ 2020 թ. վերանայված Ապացույցների ձեռքբերման կանոնները (անգլ.՝ IBA Rules of the Taking of Evidence in International Arbitration), որոնցով սահմանվում են միջազգային արբիտրաժում ապացույցների ձեռքբերման գործում արդյունավետ ու արդար ընթացակարգեր: Կանոնները սահմանում են փաստաթղթերի, վկաների, փորձագետների ներկայացման, ստուգումների, ապացուցողական լսումների անցկացման մեխանիզմներ: Կանոնները մշակելիս հաշվի են առնվել տարբեր իրավական համակարգերում կիրառվող ընթացակարգային կանոնները, ինչը հատկապես կարևորվում է, երբ արբիտրաժային վարույթի կողմերը ներկայացնում են իրավական տարբեր համակարգեր կամ դրանց

կրողն են. խնդիր, որը միջազգային արբիտրաժային վարույթներում ամենատարածվածներից է:

Ազգային օրենսդրությունից զատ՝ կարևոր են երկկողմ միջազգային պայմանագրերը, միջազգային կառույցների ընդունած ու խորհրդատվական նշանակություն ունեցող մի շարք ակտերը, որոնք ուղղված են արբիտրաժին վերաբերող կարգավորումների միատեսակ կիրառությունն ապահովելուն: Միջազգային արբիտրաժային վարույթների դեպքում միջազգային փաստաթղթերի կարևորությունը մեծանում է, քանի որ նման վարույթներով կայացված արբիտրաժային վճիռները հաճախ ներկայացվում են ճանաչման ու կատարման արբիտրաժի գտնվելու վայրից դուրս մեկ և ավելի երկրներում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր իրավական համակարգը, ազգային օրենսդրության առանձնահատկություններն ու հաճախ տարբերվող իրավակարգավորումներ: Վերը նշված փաստաթղթերն ուղղված են նվազագույնի հասցնելու նման վեճերով արբիտրաժային վճիռների ճանաչման ու կատարման հետ կապված ռիսկերը, օժանդակելու վարույթների անխոչընդոտ ու բոլորի համար ընդունելի ընթացակարգերի ընտրությանն ու արդար, անաչառ, կանխատեսելի արդարադատության իրականացմանը:

53. Որքանո՞վ են կիրառելի միջազգային նախադեպերը արբիտրաժում

Միջազգային արբիտրաժային վեճերով արբիտրաժը բացառիկ է իր աշխարհագրությամբ ու կիրառելիությամբ: Ընդունված է համարել, որ արբիտրաժը հաճախ չի ճանաչում սահմաններ, իրավական համակարգերի տարբերություններ, կախված չէ վեճերի մասնակիցների ազգային օրենսդրություններից ու ներպետական արդարադատության համակարգերից: Ինչպես գիտենք, ազգային դատական համակարգերն ունեն բազմաստիճան համակարգ, որի վերջին աստիճանը, լինի դա Վճռաբեկ դատարան, Գերագույն դատարան կամ այլ անվանում կրող դատական ատյան, ունենում է նախադեպային որոշումների կայացման գործառույթ, ապահովում օրենքի միատեսակ կիրառությունը. վերջիններիս կայացրած որոշումները համանման փաստական հանգամանքների պայմաններում դառնում են պարտադիր ստորադաս դատարանների համար: Արբիտրաժային տրիբունալների դեպքում դրանց կայացրած վճիռները վերջնական են, չկան վերադաս տրիբունալներ կամ ներազգային կամ վերպետական մարմիններ, որոնք կարող են բովանդակային իմաստով վերանայել արբիտրաժային վճիռները, ստեղծել նախադեպային պրակտիկա:

Վերը նշվածը արբիտրաժի առավելություններից է. այն նաև յուրաքանչյուր առանձին դեպքում հնարավորություն է տալիս արբիտրաժային տրիբունալին կոնկրետ գործով առաջնորդվելու արդարության, անաչառության, անկողմնակալության սկզբունքներով, լինելու ազատ իրավունքի կիրառման ու օրենքի մեկնաբանման հարցում չկաշկան-

դելով այլ ատյանների արտահայտած դիրքորոշումներով: Մինևույն ժամանակ, արբիտրաժային վարույթները հիմնականում գաղտնի են, ինչը վարույթին չներգրավված ցանկացած անձի գրկում է վարույթի կամ կայացված արբիտրաժային վճռի մասին տեղեկություն ստանալու հնարավորությունից: Այս հանգամանքը թեև կարևոր ու նախընտրելի է վարույթի մասնակիցների համար, սակայն, այնուամենայնիվ, գրկում է տեսաբաններին, պրակտիկ մասնագետներին ու ոլորտը հետազոտողներին՝ հավաքագրելու անհրաժեշտ տեղեկություն, կատարելու վերլուծություններ, վերհանելու արբիտրաժային վարույթների խնդիրներն ու պրակտիկ օրինաչափությունները, ինչու չէ, նաև հանրայնացնելու ազդեցիկ արբիտրաժային վճիռները առարկայական օրինակներով ցույց տալու համար, թե որքան մեծ ազդեցություն կարող է ունենալ վեճերի լուծման արբիտրաժային եղանակը խոշոր բիզնես գործարքներով վեճերի ժամանակ, ու որքան արհեստավարժ կարող են լինել արբիտրաժային տրիբունալներն այդ վեճերը քննելիս ու լուծելիս:

Այնուամենայնիվ, արբիտրաժային վճիռները գործնականում հաճախ ուղենշային կարևորություն ունեն այլ արբիտրաժային տրիբունալների համար: Արբիտրաժային վճիռները նյութական իրավունքի կիրառման տեսանկյունից նախադեպ չեն հանդիսանում, սակայն դրանք նշանակալի ազդեցություն են ունեցել ընթացակարգային, արբիտրաժային տրիբունալների իրավասության և կիրառելի իրավունքի ընտրության վերաբերյալ հարցերում:

Այս ամենը հաշվի առնելով՝ ձեռնարկում կներկայացնենք դատական գործերից օրինակներ, որոնք վերաբերում են ազգային դատարանների՝ արբիտրաժային վարույթներում առաջացած խնդիրների վերաբերյալ կայացրած որոշումներին ու դրանցում արտահայտված դիրքորոշումներին, որոնք վերաբերում են արբիտրաժային համաձայնությունների վավերականությանը, արբիտրների անաչառությանը, արբիտրաժային համաձայնությունների վեճերի նկատմամբ կիրառելի իրավունքի ընտրությանը, արբիտրաժային վճիռների ճանաչման ու կատարման ժամանակ քննարկվող մի շարք այլ հարցերի:

Ձեռնարկում բերվող դատական գործերի օրինակներում ընկերությունների անվանումները որոշ դեպքերում նշվում են լատինատառ՝ ապահովելու դրանց ճանաչելիությունն ու հետաքրքրվողներին հնարավորություն տալու հեշտությամբ ծանոթանալու ընկերությունների գործունեությանն ու մեջբերվող գործի առանձնահատկություններին:

54. Արբիտրաժային վճիռների կատարմանը վերաբերող կարևոր նախադեպեր

Այսպես, իր աշխարհագրությամբ ու դատարանի տված մեկնաբանություններով հատկապես հետաքրքրություն է ներկայացնում «Costco Wholesale Corporation»-ն (Costco) ընդդեմ «TicketOps Corporation»-ի (TicketOps)²² գործը: Այն վերաբերում է «TicketOps»-ի՝ «Costco»-ին տրամադրած թվային տոմսերի ծառայություններին: «TicketOps»-ը թվային տոմսերի մեծածախ վաճառող է, իսկ «Costco»-ն ստանալու էր վճարումներ, որոնք պետք է փոխանցեր տոմսերի մատակարարներին: COVID-19 համաճարակի սկզբից «TicketOps»-ը դադարեցրել է վճարումները փոխանցել մատակարարներին՝ խախտելով «Costco»-ի հետ ունեցած համաձայնագիրը: Հաշվի առնելով, որ կողմերի միջև կնքված պայմանագրում առկա էր արբիտրաժային համաձայնություն պարունակող դրույթ, ըստ որի՝ արբիտրաժային վայրը պետք է լիներ Սիեթլում (ԱՄՆ, Վաշինգտոն նահանգ), «Costco»-ն «TicketOps»-ի նկատմամբ արբիտրաժային վարույթ է սկսել, որն ավարտվել է «Costco»-ի հաջողությամբ: «Costco»-ն արբիտրաժային վճիռը ներկայացրել է ճանաչման ու կատարման Օստարիոյում (Կանադա), ինչին «TicketOps»-ը առարկել է: Սույն գործում «TicketOps»-ն առաջ է քաշել ենթադրյալ պաշտպանության բազում միջոցներ առ այն, թե ինչու որոշումը չպետք է կատարվի Օստարիոյում. դրանց շարքում են արբիտրաժային վարույթի նկատմամբ կիրառելի օրենքի, արբիտրաժային լուծման տևողության, արբիտրի կողմնակալության հարցերը: Օստարիոյի դատարանը «TicketOps»-ի բարձրաձայնած այս և մնացած բոլոր հիմքերը մերժել է ու պարտավորեցրել «TicketOps»-ին կատարել որոշումը:

Այսպես, Օստարիոյի բարձրագույն դատարանը հաստատել է, որ կիրառելի օրենքը Օստարիոյի 2017 թ. «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» օրենքն է, որն ինկորպորացնում է UNCITRAL-ի մոդելային օրենքն ու Օտարերկրյա արբիտրաժային որոշումների կատարման ու ճանաչման մասին Նյու Յորքի կոնվենցիան: Դատարանը համարել է, որ կոնվենցիան և Մոդելային օրենքը սահմանում են, որ ներպետական դատարանները չպետք է միջամտեն արբիտրաժային որոշումների կատարմանը՝ բացառությամբ հատուկ դեպքերի, հետևաբար արբիտրաժային վճիռների կատարումը մերժելու հիմքերը դատարանները «պետք է նեղ մեկնաբանեն»:

Անդրադառնալով այն հակափաստարկին, որ լուծմանը, ըստ արբիտրաժային համաձայնության, տևել են ընդամենը երկու օր, Օստարիոյի բարձրագույն դատարանը նշել է, որ երկօրյա լուծմանը ինչ-որ կերպ «չեն վնասել» բնական արդարադատությանը:

Հետաքրքրական է հատկապես արբիտրի անաչառության վերաբերյալ փաստարկի առումով դատարանի դիրքորոշումը, քանի որ այն ուղղակիորեն առնչվում է համաճանցում կամ, այլ կերպ ասած՝ վիրտուալ կյանքում անձանց կապերին, միմյանց սոցիալական ցանցերում գտնվելու հանգամանքին: Նշված դեպքում քննարկվել է արբիտրի ու

²² Costco Wholesale Corporation v. TicketOps Corporation, 2023 ONSC 573.

վարույթի կողմի՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում «ընկեր» լինելու հանգամանքը: Դատարանը մերժել է այն կանխավարկածը, որ ֆեյսբուքյան «ընկերությունը» հանգեցնում է կողմնակալության ողջամիտ կասկածի: Մասնավորապես, վկայակոչելով Նախկին Նախադեպերը, դատարանն արձանագրել է, որ ժամանակակից աշխարհում ողջամիտ և տեղեկացված անհատն առհասարակ ուշադրություն չի դարձնի կամ շատ քիչ ուշադրության կարժանացնի այն հանգամանքը, որ մարդիկ «ընկեր» են «Ֆեյսբուք»-ում²³:

55. Արբիտրաժային համաձայնություններին և արբիտրի ընտրությանը վերաբերող կարևոր նախադեպեր

Արբիտրաժային համաձայնությունների և արբիտրի ընտրության վերաբերյալ հարցերի քննարկման առումով հետաքրքիր է Նեպալի գերագույն դատարանի 2021 թ. որոշումը՝ կայացված «Hanil Engineering & Construction Co., Ltd. v Melamchi» գործով: Դատարանն իր որոշմամբ անդրադարձել է հետևյալ հիմնական հարցերին.

- 1. Կարգավորող օրենսդրությունը:** Բաժանելիության սկզբունքի լույսի ներքո (այս սկզբունքին մանրամասնորեն կանդրադառնանք ստորև՝ այլ գործերի քննարկման ժամանակ) արբիտրաժային վերապահումը համարվում է պայմանագրից անկախ: Քանի դեռ կողմերը հստակ այլ համաձայնության չեն եկել, պայմանագիրը կարգավորող օրենսդրությունը կիրառելի չի լինի արբիտր(ներ)ի նշանակման, արբիտրաժային համաձայնությունների և արբիտրաժային վարույթի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ պայմանագրի կարգավորող օրենսդրությունը ինքնաբերեբաբար չի համարվելու արբիտրաժային համաձայնության դրույթները կարգավորող օրենսդրությունը:
- 2. Նշանակող մարմինը:** Եթե կողմերը կազմակերպությանը կամ անհատին իրավասու չեն դարձրել նշանակելու արբիտր(ներ), ապա կողմերի ընտրած ընթացակարգային օրենքը (կանոնները) կիրառելի կլինի նաև արբիտր(ներ)ի նշանակման հարցում:
- 3. Արբիտր(ներ)ի նշանակումը:** Գերագույն դատարանը շեշտադրել է, որ կողմերը պետք է համաձայնության գան այն ընթացակարգի շուրջ, որով պետք է նշանակվեն արբիտրները: Այլ կերպ ասած՝ արբիտր(ներ)ի նշանակումը պետք է կատարվի ըստ այն օրենքների և ընթացակարգերի, որոնք հստակ նշված են համաձայնագրով: Միայն այն դեպքում, երբ կողմերին չի հաջողվում այդ հարցի շուրջ համաձայնության գալ և դիմում են դատարան արբիտր(ներ) նշանակելու համար, դատարանը նշանակումը կատարում է կիրառելի ներպետական օրենսդրության համաձայն:

²³ Դատական ակտին ամբողջությամբ հնարավոր է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ <https://www.canlii.org/en/on/onsc/doc/2023/2023onsc573/2023onsc573.html>:

56. Արբիտրների նշանակման կարգին վերաբերող կարևոր նախադեպեր

Խոսելով արբիտրների նշանակման կարգի մասին՝ անդրադառնանք նրանց բացարկյի հիմքերի շուրջ դատական պրակտիկային: Այս հարցում հետաքրքիր է Չեխիայի գերագույն դատարանի 2020-ի թիվ 23 որոշումը՝ «Cdo 1337/2019» գործով: Գերագույն դատարանը եզրահանգել է, որ արբիտրների անկախության և անաչառության պահանջները նաև կիրառելի են նրանց նշանակող մարմնի/մարմինների անաչառության և անկախության նկատմամբ: Այնուամենայնիվ, դատարանն առանձնացրել է արբիտրի որակագրկման ինստիտուտը (նախատեսված ազգային օրենսդրությամբ) արբիտրի անաչառության կամ անկողմնակալության հետևանքով կայացված արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման ինստիտուտից: Գերագույն դատարանը, ամփոփելով նախադեպային պրակտիկան, մեկնաբանել է արբիտրի անաչառությանը վերաբերող երկու կոմպոնենտները՝ անկախությունն ու անկողմնակալությունը: Անկախությունը ենթադրում է արբիտրի անձնական, մասնագիտական կամ տնտեսական կապերի բացակայություն վարույթի կողմերից որևէ մեկի հետ: Անկողմնակալությունը ենթադրում է արբիտրի վարույթի որևէ կողմին սուբյեկտիվ աջակցության բացակայություն:

Դատարանը համարել է, որ այն հանգամանքը, որ արբիտրաժային տրիբունալի արբիտրներից մեկը վարույթի մասնակիցների առջև չի բացահայտել, որ փաստաբանական գրասենյակը, որտեղ ինքն աշխատում է, վարույթի կողմերից մեկին մինչև արբիտրաժային վարույթը ցուցաբերել է իրավաբանական օգնություն, բավարար չէ, որ արբիտրի անաչառությունը դրվի կասկածի տակ, և արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչվի: Նշված արարքը կարող է արբիտրին որակագրկելու հիմք լինել, որն ուղղակիորեն չի կարող ազդել արբիտրաժային վճռի վրա: Ինչ վերաբերում է արբիտրի անկողմնակալության կամ անկախության բացակայության փաստարկին, ապա այդպիսին վկայակոչող կողմը պետք է ապացուցի, նման անաչառության բացակայությունը պետք է ուղղակիորեն ազդի գործի ելքի վրա կամ առաջացնի նման ազդեցության իրական վտանգ: Այս միտքը զարգացնելով՝ գերագույն դատարանը նշել է, որ արբիտրի ու կողմերից որևէ մեկի ներկայացուցչի՝ միևնույն մասնագիտական կամ հասարակական կազմակերպությանը անդամակցելը չի կարող ուղղակիորեն կասկածի տակ դնել արբիտրի անաչառությունը: Նման դիրքորոշումը դատարանը բացատրել է նրանով, որ պրակտիկայում սպասելի է, երբ արբիտրները, որոնք նաև փաստաբանական գործունեությամբ են զբաղվում, որպես կանոն, գործնական հարաբերություններ են հաստատում այլ փաստաբանների հետ: Նման հարաբերությունների առկայության փաստը չի կարող ուղղակիորեն մեկնաբանվել որպես արբիտրի անկողմնակալության հիմնավոր կասկածի առկայություն: Այնուամենայնիվ, Գերագույն դատարանը նշել է, որ արբիտրաժային վարույթի մասնակցի ներկայացուցիչ փաստաբանի հանդեպ արբիտր-փաստաբանի անաչառության բացարկյի հիմքերի շուրջ դատական պրակտիկային:

ցակայության մասին հիմնավոր կասկածի մասին կարելի է խոսել, օրինակ, երբ վերջիններիս միջև առկա է տնտեսական փոխադարձ կախվածություն ունեցող երկարատև համագործակցություն, օրինակ՝ միևնույն իրավաբանական գրասենյակում աշխատելու հանգամանքը: Չեխիայի գերագույն դատարանն այս որոշմամբ իր դիրքորոշումն արտահայտելիս առավելապես առաջնորդվել է Իրավաբանների միջազգային ասոցիացիայի Միջազգային արբիտրաժում շահերի բախման ուղեցույցի կարգավորումներով:

57. Արբիտրաժային համաձայնությունների

վավերականության հարցին վերաբերող կարևոր նախադեպեր

Դատական պրակտիկայում հաճախ են քննարկվում վեճեր, որոնք վերաբերում են արբիտրաժային համաձայնությունների վավերականության հարցին այն դեպքերում, երբ գործարքները, որոնց հիման վրա առաջացել է վեճը, վավեր չեն կամ դրանց վավերականության հարցում առկա է վեճ: Այս հարցում հետաքրքիր է քննարկել «Dell» ընկերության և Կանադայի սպառողների միության միջև վեճը²⁴: «Dell»-ը, որի գրասենյակները գտնվում են Կանադայի Տորոնտո և Մոնրեալ քաղաքներում, իր անգլալեզու կայքում սխալմամբ տեղադրել է ապրանքների ավելի ցածր գներ, իսկ մեկ օր անց, հայտնաբերելով սխալը, հեռացրել: Սպառողներից մեկը՝ Օլիվիե Դյումլենը, կարողացել է օգտագործել այդ փաստը և, շրջանցելով «Dell»-ի կիրառած արգելքը, գնել է համակարգիչ շուկայականից անհամեմատ ցածր գնով: Երբ «Dell»-ը հրաժարվել է կատարել պատվերը, Սպառողների միությունը «Dell»-ի դեմ դատարանին է ներկայացրել կոլեկտիվ հայց: «Dell»-ը դատարանում պահանջել է գործը հանձնել արբիտրաժային տրիբունալին՝ հայտարարելով, որ կայքում տեղադրված առցանց առքուվաճառքի կանոններում առկա է արբիտրաժային համաձայնություն և կոլեկտիվ հայց ներկայացնելուց հրաժարման հայտարարություն: Կանադայի ազգային դատարանները մերժել էին «Dell»-ի միջնորդությունը՝ հիմնվելով ազգային օրենսդրությամբ առկա այն կարգավորման վրա, որ օտարերկրյա տարր պարունակող հայցերով օրենքը արգելում է Կանադայի դատարաններին հրաժարվել վեճի քննությունից, եթե սպառողը (գնորդը) բնակվում է Քվեբեկում (Կանադայում): Կանադայի գերագույն դատարանը, ի հակադրություն ստորադաս դատարանների որոշումների, 2008 թ. իր որոշմամբ սահմանել է, որ գործը ենթակա է քննության արբիտրաժային տրիբունալում: Դատարանը նշել է, որ արբիտրաժային համաձայնությունների առումով Կանադայի ներպետական օրենսդրական կարգավորումները մոտարկված են UNCITRAL-ի մոդելային օրենքին և բխում են Նյու Յորքի կոնվենցիայի պահանջներից, ուստի եթե կողմը հղում է կատարում կնքված արբիտրաժային համաձայնությանը, գործը չի կարող շարունակել քննվել ազգային դատարաններում:

²⁴ Dell Computer Corp. v. Union des Consommateurs, [2007] 2 SCR.

58. Արբիտրաժային համաձայնության բաժանելիության սկզբունքին վերաբերող կարևոր նախադեպեր

Արբիտրաժային համաձայնությունների առումով հիմնաքարային որոշումներից մեկը «Prima Paint Corp. v. Flood & Conklin Mfg» գործն է²⁵, որով 1967 թ. ԱՄՆ գերագույն դատարանը խոսել է արբիտրաժային համաձայնության բաժանելիության սկզբունքի մասին: Դատարանն ընդգծել է, որ արբիտրաժային վերապահումը (համաձայնությունը) դաշնային իրավունքի տեսանկյունից «բաժանելի» է այն պայմանագրերից, որոնցում դրանք ներառված են: Այն դեպքում, երբ հիմնական պայմանագիրը կնքվել է խարդախությամբ, սակայն արբիտրաժային համաձայնությունը որպես առանձին պայմանագիր չի կնքվել նույն կերպ, ինչ հիմնական պայմանագիրը, ապա արբիտրաժային համաձայնությունը կմեկնաբանվի լայնորեն՝ նախատեսելով արբիտրաժային կարգով վեճը լուծելու հնարավորությունը: Արբիտրաժային համաձայնությունների բաժանելիության սկզբունքին դատարանները բազմիցս անդրադարձել են նաև հետագա տարիներին: Օրինակ՝ Անգլիայի Լորդերի պալատը, հաստատելով Վերաքննիչ դատարանի որոշումը՝ «Fiona Trust & Holding Co. v. Privalov» գործով²⁶, նշել է, որ բաժանելիության սկզբունքը նշանակում է, որ հիմնական պայմանագրի անվավերությունը կամ լուծումը չի ենթադրում արբիտրաժային համաձայնագրի անվավերություն կամ ընդհատում: Արբիտրաժային համաձայնությունը պետք է դիտարկվի որպես «առանձին համաձայնություն» և կարող է անվավեր կամ առոչինչ ճանաչվել միայն այն հիմքերով, որ ուղղակիորեն կապված են արբիտրաժային համաձայնագրի հետ:

59. Պայմանագրի վավերականությանը վերաբերող կարևոր նախադեպեր

Յետաքրքրական է «DHL Project & Chartering Ltd (այսուհետ՝ DHL) v. Gemini Ocean Shipping Co. Ltd (այսուհետ՝ Gemini)» գործը²⁷, որին վերաբերող որոշումը կայացվել է ոչ վաղ անցյալում 2022 թ.: Գործը լսվել է անգլիական դատարանում: Վերաքննիչ դատարանը նշված գործով քննարկման առարկա է դարձրել հետյալ հարցը. արդյո՞ք արբիտրաժային համաձայնությունը պարտադիր էր կողմերի համար այն հանգամանքներում, երբ պայմանագրի արդյունավետության նախապայմանը չի բավարարվել: Գործի հան-

²⁵ Prima Paint Corp. v. Flood & Conklin Mfg. Co., 388 U.S. 395 (1967).

²⁶ Fiona Trust & Holding Co. v. Privalov [2007] UKHL 40.

²⁷ DHL Project & Chartering Ltd v. Gemini Ocean Shipping Co. Ltd [2022] EWCA 1555.

գամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև DHL-ի մատուցած ծառայություններից օգտվելու համար կողմերը բանակցել են ֆրախտի պայմանագրի շուրջ, սակայն այդպես էլ Gemini-ն չէր գործարքը չի ստորագրել: Չնայած պայմանագրային տարաձայնությունները վերաբերել են գործարքի պայմաններին, ու քննարկումները չեն հասել արբիտրաժային համաձայնության շուրջ միակարծության հանգեցնելու, այնուամենայնիվ արբիտրաժային համաձայնության տեքստը ներառված է եղել հենց այն գործարքում, որը չի կնքվել:

Դատարանը այս գործի քննության ընթացքում անդրադարձել է երկու տեսակի վեճերի տարբերակմանը՝ վեճեր, որոնք վերաբերում են պայմանագրի կազմմանը և վեճեր, որոնք վերաբերում են պայմանագրի վավերականությանը, ինչից հետո դատարանը եզրակացրել է, որ այս գործը վերաբերում է պայմանագրի կազմմանը, և առկա չէ վավեր արբիտրաժային համաձայնություն: Ավելին՝ դատարանը հստակեցրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ համարվում է, որ կողմերի միջև առկա չէ պարտադիր համաձայնագիր, ապա արբիտրաժային համաձայնությունը, որպես կանոն, նույնպես պարտադիր բնույթ չի ունենա: Այս որոշման լույսի ներքո կողմերը, որոնք բանակցում են պայմանագրի առարկայի դրույթների շուրջ, պետք է ի նկատի ունենան, որ արբիտրաժի վերաբերյալ դրույթը չի կարող պարտադիր լինել, քանի դեռ կողմերը համաձայնության չեն եկել այն այդպիսին համարելու շուրջ մինչև հիմնական պայմանագրի ուժի մեջ մտնելը:

Սույն գործը օգտակար ուղեցույց է պայմանագրի վավերականությանը վերաբերող գործերի համար, երբ պայմանագիրը պարունակում է արբիտրաժային դրույթ: Ինչպես գիտենք, տեսությունն ու դատական պրակտիկան զարգացել են այն ուղղությամբ, որ եթե առկա է կնքված գործարք, որի վավերականությունը կողմերը կասկածի տակ են դնում, ապա այդ գործարքով կնքված արբիտրաժային համաձայնությունն ինքնաբերաբար չի կարող համարվել անվավեր: Սակայն այլ է իրավիճակը, երբ մեկ քայլ ևս հետ ենք գնում ու գործ ունենք դեռևս չկնքված գործարքի հետ: Նշված դեպքում անգլիական դատարանն արձանագրել է, որ չի կարող խոսք լինել նաև կնքված արբիտրաժային համաձայնության մասին:

Շարունակելով արբիտրաժային համաձայնությունների վավերականության հարցը, անդրադառնանք այն հարցադրմանը, թե ինչու է անհրաժեշտ մշտապես շեշտադրել արբիտրաժային համաձայնության հիմքում ընկած օրենքը: «Kabab-Ji SAL (Լիբանան) v. Kout Group (Քուվեյթ)» գործով որոշմամբ Անգլիայի գերագույն դատարանը և Ֆրանսիայի վճռաբեկ դատարանը կայացրել են տարբեր որոշումներ առ այն, թե որ օրենքը պետք է ընկած լինի արբիտրաժային համաձայնագրի հիմքում. դա բնականաբար հանգեցրել է իրարամերժ եզրակացությունների: Վեճի հիմնական խնդիրն այն է, թե արդյոք պատասխանողն արբիտրաժային համաձայնագրի կողմ է: Անգլիայի գերագույն դատարանը 2021 թ. կայացրած որոշմամբ արձանագրել է, որ պատասխանողն արբիտրաժային համաձայնագրի կողմ չէ, ուստի առկա չէ արբիտրաժային համաձայնագիր, որը պարտադիր կլինի կողմերի համար, և, որի վրա հիմնվելով, տրիբունալը կկայացնի որո-

շում: Սրա հետևանքով Անգլիայի գերագույն դատարանը մերժել է որոշման կատարումը: Ի հակադրումն այս դիրքորոշման՝ արդեն 2022 թ. հոկտեմբերի որոշմամբ Ֆրանսիայի վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պատասխանողի համար արբիտրաժային համաձայնագիրը պարտադիր է, ուստի արբիտրաժային վճիռը ենթակա է կատարման: Այս տարակարծությունը ծագում էր այն օրենսդրական կարգավորումների տարբերությունից (անգլիական ու ֆրանսիական ազգային օրենսդրություն), որոնց կիրառմամբ դատարանները մեկնաբանել են արբիտրաժային համաձայնությունը: Սա գործնականում ունի առավել ուսուցողական նշանակություն և ընդգծում է արբիտրաժային դրույթի ձևակերպման ժամանակ արբիտրաժային համաձայնության նկատմամբ կիրառելի օրենսդրության որոշման կարևորությունը: Դա հնարավորություն կտա կողմերին խնայելու ժամանակ և միջոցներ նմանատիպ ընթացակարգային վեճերի մեջ չմտնելու համար ու կերաշխավորի արբիտրաժային համաձայնության անվիճարկելիությունը, վեճի կողմերի ընտրած արբիտրաժային հաստատության վեճը քննելու հանգամանքն ու բուն վեճի քննությամբ կայացրած արբիտրաժային վճռի կատարումը ինչպես արբիտրաժի գտնվելու վայրում, այնպես էլ կատարման վայրում (եթե դրանք տարբեր են):

60. Կիրառելի իրավունքի որոշմանը վերաբերող կարևոր նախադեպեր

Արբիտրաժային համաձայնությունների նկատմամբ կիրառելի իրավունքի որոշման հարցում հետաքրքիր է անգլիական դատարանի 2012 թ. որոշումը գործով «Sulamerica CIA Nacional De Seguros SA and others v. Enesa Engenharia SA and others» գործը²⁸: Որոշման կարևորությունն այն է, որ պարզաբանում է, թե որ օրենքը պետք է կիրառվի արբիտրաժային համաձայնության նկատմամբ այն դեպքերում, երբ համաձայնության տեքստում դրա մասին ուղղակի նշում առկա չէ: Նման դեպքերում Անգլիայի վերաքննիչ դատարանն առաջարկում է եռաստիճան ստուգում.

- ա) կողմերի ուղղակի ընտրությունը,
- բ) ուղղակի ընտրության բացակայության դեպքում ենթադրյալ (անուղղակի) ընտրությունը, և
- գ) եթե կողմերը ընտրություն չեն կատարել, այն օրենքը, որի հետ արբիտրաժային համաձայնագիրն ունի ամենամոտ և իրական կապը:

Ի լրումն վերը նշվածի՝ արդեն «Enka v. Chubb»²⁹ գործով Միացյալ Թագավորության գերագույն դատարանը 2020 թ. որոշմամբ պարզաբանել է, թե ինչպես պետք է որոշվի արբիտրաժային համաձայնությունը կարգավորող օրենքը, երբ պայմանագրի նկատ-

²⁸ Sulamerica CIA Nacional De Seguros SA and others v. Enesa Engenharia SA and others [2012] EWHC 42.

²⁹ Enka v. Chubb [2020] UKSC.

մամբ կիրառելի օրենքը տարբերվում է արբիտրաժի վայրի օրենքից: Անգլիայի գերագույն դատարանը պարզաբանել է, որ եթե կողմերը չեն նշել արբիտրաժի նկատմամբ կիրառելի իրավունքը, սակայն սահմանել են պայմանագրի նկատմամբ կիրառելի իրավունքը, ապա այդ ընտրությունը կգործի նաև արբիտրաժային վերապահման համար: Այս ընդհանուր կանոնը խրախուսում է իրավական որոշակիությունը, կայունությունը՝ բացառելով բարդությունները: Ավելին՝ այն դեպքում, երբ կողմերը չեն սահմանել արբիտրաժային վերապահման նկատմամբ կիրառելի իրավունքը կամ հատուկ ընտրել են իրավունք, որը կիրառելի է պայմանագրի նկատմամբ, դատարանը պետք է ընտրի այն օրենքը, որին արբիտրաժային վերապահումը սերտորեն կապված է: Ընդհանուր կանոնը սովորաբար դեպքում այն է, որ արբիտրաժային համաձայնագրին սերտորեն կապված է արբիտրաժի վայրի իրավունքը:

Ազգային դատարանների մոտեցումներով պայմանավորված միևնույն արբիտրաժային վճիռը կարող է կատարվել մի երկրում, իսկ կատարումը՝ մերժվել մեկ այլ երկրում: Թեև այս ուղղությամբ միջազգային կառույցները շարունակում են աշխատել ու ջանքեր գործադրել նման տարբերակված մոտեցումները աստիճանաբար նվազեցնելու համար, սակայն բարձր ցուցանիշներով արդյունքի հասնելու համար դեռևս աշխատանք կանելու: Այնուամենայնիվ, դատական պրակտիկայում բազմիցս արձանագրվել է, որ մի երկրի ազգային դատարանի՝ միևնույն արբիտրաժային վճռի ճանաչման ու կատարման մերժումը չի սահմանափակում մեկ այլ երկրի դատարանի՝ այն ճանաչելու և կատարելու: Նման դատական գործերը բազմաթիվ են: Օրինակ, «Omnium de Traitement et de Valorisation SA v. Hilmarton Ltd» գործով³⁰, Անգլիայի և Ուելսի բարձրագույն դատարանը համարել է, որ շվեյցարիական արբիտրաժային որոշումը միջազգային բնույթի է եղել, ինչը նշանակում է, որ այն կցված չէ շվեյցարական իրավական համակարգին, ուստի կշարունակի գոյություն ունենալ անկախ այն հանգամանքից, որ արբիտրաժի գտնվելու վայրի դատարանը արբիտրաժային վճիռը չեղարկել է:

Այդ առումով հետաքրքիր է «Société PT Putrabali Adyamulia v. Société Rena Holding et Société Moguntia Est Epices» գործը³¹, որով արբիտրաժային դատարանը կայացրել է երկու վճիռ: Երկրորդ վճռի լուծման պատճառը եղել է արբիտրաժի գտնվելու վայրի՝ Լոնդոնի դատարանի՝ «Putrabali»-ի դիմումի հիման վրա առաջին վճռի մասնակի չեղարկումը: Ի վերջո, արբիտրաժային վճռի չեղարկված մասով արբիտրաժային տրիբունալը երկրորդ վճռով մասնակիորեն փոփոխել է իր առաջին վճիռը: Անկախ չեղարկման փաստից՝ արբիտրաժային տրիբունալի առաջին վճիռը Ֆրանսիայում ներկայացվել է ճանաչման ու հարկադիր կատարման, ինչի դեմ «Putrabali»-ը կրկին առարկել է արդեն ֆրանսիայում հիմնավորումներ ներկայացնելով, որ իր դատավարական հակառակորդը խախտում է բարեխղճության սկզբունքը. վճիռը, որը ներկայացվել է հարկադիր կատարման, հետագայում մեկ այլ վճռով փոփոխվել է, քանի որ անգլիական դատարանը

³⁰ Omnium de Traitement et de Valorisation SA v. Hilmarton Ltd / 1998 Folio No 1003.

³¹ Société PT Putrabali Adyamulia v. Société Rena Holding et Société Moguntia Est Epices.

րանն այն մասնակիորեն չեղարկել է: Ֆրանսիայի վճռաբեկ դատարանը, սակայն, վերահաստատել է «Hilmarton»-ի գործով սահմանված սկզբունքը և եզրակացրել, որ միջազգային արբիտրաժային որոշումը միջազգային բնույթի է, հետևաբար ներպետական դատարանի՝ դրա չեղարկումը չի կարող հետ պահել մյուս պետությանը այն կատարելուց:

«Mr Nikolay Maximov v. Novolipetsky Steel Mill»-ի գործով³² փաստացի ունենք նույն դիրքորոշումը: Այս դեպքում ՌԴ ազգային դատարանների չեղարկած արբիտրաժային վճիռը ճանաչման ու կատարման է ներկայացվել եվրոպական երկու երկրներում: Գործով ֆրանսիական դատարանը հաստատել է իր՝ վերը նշված դիրքորոշումներն ու ճանաչել արբիտրաժային վճիռը՝ անկախ ՌԴ-ի՝ այն չեղարկելու հանգամանքից: Այս գործով Անգլիայի և Ուելսի բարձր դատարանը հակառակ դիրքորոշմանն է հանգել ու նշել է, որ կողմը, որպես կանոն, կարող է վկայակոչել արբիտրաժային վճռի չեղարկման՝ օտարերկրյա դատարանի որոշումը, եթե չի հաստատվում, որ նշված որոշումը հակասում է արդարության սկզբունքներին ու տվյալ պետության հանրային կարգին: Համանման տարբերակված դիրքորոշումներ ունենք նաև «Yukos Capital SARL v. OJSC Rosneft Oil Company» գործով³³, որով արբիտրաժի վայրը կրկին եղել է ՌԴ-ն, և ՌԴ ազգային դատարանը չեղյալ է ճանաչել արբիտրաժային վճիռը: Այս գործով Ամստերդամի վերաքննիչ դատարանը համարել է, որ այն փաստը, որ ռուսական դատարանը չեղարկել է ռուսական արբիտրաժային որոշումը, բավարար չէ կանխելու համար դրա կատարումը Նիդերլանդներում: Նշված գործով անգլիական դատարանը հավատարիմ է մնացել իր նախորդ դիրքորոշումներին ու պաշտպանել այն տեսակետը, որ եթե արբիտրաժի գտնվելու վայրի դատարանը արբիտրաժային վճիռը չեղարկել է, անգլիական դատարանն այն չի կարող ճանաչել ու կատարել: Այլ գործերով նմանատիպ դիրքորոշումներ ունի նաև գերմանական դատարանը: Նկարագրված նախադեպերի վերլուծությունը ցույց է տալիս է, որ միջազգային արբիտրաժային վեճերի կողմերը գործարքների կնքման, դրանց մասով արբիտրաժային համաձայնությունների կայացման ու արբիտրաժի ընտրության ժամանակ պետք է հստակ կանխատեսեն, թե որ երկրներում է առաջանալու արբիտրաժային վճռի հնարավոր ճանաչման ու կատարման անհրաժեշտությունը, ինչ մոտեցումներ ունեն այդ երկրների դատարանները արբիտրաժային համաձայնությունների, դրանց ու վեճի նկատմամբ կիրառվող օրենսդրության վերաբերյալ, ինչ դիրքորոշում ունեն այն դեպքերում, երբ արբիտրաժի գտնվելու վայրի դատարանները չեղյալ են ճանաչել արբիտրաժային վճիռը:

³² Mr Nikolay Maximov v. Novolipetsky Steel Mill (NLMK).

³³ Yukos Capital SARL v. OJSC Rosneft Oil Company [2014] EWHC 2188 (Comm).

ՎԵՐՋԱԲԱՆ

Որպես ձեռնարկի վերջաբան ներկայացնում ենք այն տեղեկատվական համակարգերի ու պաշտոնական կայքերի հղումները, որոնք արբիտրաժով հետաքրքրվող անձին հնարավորություն կտան ինքնուրույն ուսումնասիրելու ոլորտը, գտնելու հետաքրքրող հարցերի պատասխանները, ծանոթանալու կարգավորող օրենսդրությանը: Դրանք են.



www.arlis.am - Հայկական իրավական տեղեկատվական համակարգ, որտեղ տեղադրվում են ՀՀ նորմատիվ իրավական ակտերը (օրենքները, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի որոշումները, պետական մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումները, հրամանները ևն), ՀՀ-ի վավերացրած միջազգային պայմանագրերը, ՄԻԵԴ վճիռները, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, ԵԱՏՄ ակտերը, տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը և ՀՀ օրենսդրության մաս կազմող այլ ակտեր:



www.datalex.am - ՀՀ դատական տեղեկատվական համակարգ, որտեղ կարելի է տեսնել ՀՀ բոլոր դատարանների նիստերի ժամանակացույցները, կողմերի և այլ տվյալներով կատարել որոնում ու գտնել հետաքրքրող դատական գործը, փնտրել հետաքրքրող իրավական ոլորտին վերաբերող դատական գործեր ու դատական ակտեր, հետևել սեփական գործով վարույթի ընթացքին, փնտրել ՄԻԵԴ որոշումներ ու ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ:



<https://court.am> - ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքէջը, որտեղ կարելի է գտնել ամբողջական տեղեկություն ՀՀ դատարանների, դատավորների մասին, ծանոթանալ դատական իշխանությանը վերաբերող նորություններին ևն:



<https://uncitral.un.org> - ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի պաշտոնական կայքէջը, որտեղ կարելի է գտնել ինչպես կառույցի ընդունած ուղենշային կանոնները, այնպես էլ առևտրային իրավունքին առնչվող տեսական գրականություն, հետազոտական աշխատանքներ, վերլուծություններ, տարեգրքեր:



<https://www.legal500.com> - Աշխարհի տարբեր փաստաբանական գրասենյակների վերաբերյալ տվյալների հարթակ, որտեղ առկա են նաև կայքում գրանցված գրասենյակների իրավաբանների կատարած վերլուծությունները, հոդվածները, ինչպես նաև արբիտրաժային արդարադատությանը վերաբերող նյութեր:



<https://chambers.com> - Աշխարհի տարբեր փաստաբանական գրասենյակների վերաբերյալ տվյալների հարթակ, որտեղ առկա են նաև կայքում գրանցված գրասենյակների իրավաբանների կատարած վերլուծությունները, հոդվածները, ինչպես նաև արբիտրաժային արդարադատությանը վերաբերող նյութեր:



<https://www.globalarbitrationnews.com> - Տարբեր երկրներում ներկայացուցչություն ապահովող հայտնի փաստաբանական գրասենյակներից մեկի՝ «Baker McKenzie»-ի իրավաբանական բլոգը, որը վերաբերում է արբիտրաժային արդարադատությանը:



<https://www.lexology.com> - Կարելի է գտնել իրավունքի տարբեր ճյուղերին, ներառյալ արբիտրաժային արդարադատությանը վերաբերող իրավական վերլուծություններ:



<https://globalarbitrationreview.com> - Կայքին անդամագրությունը հնարավորություն է տալիս ծանոթանալու արբիտրաժային արդարադատությանը վերաբերող նորություններին, վերլուծություններին, ազգային դատարանների որոշումներին:



www.kluwerarbitration.com - Կայքին անդամագրությունը հնարավորություն է տալիս ծանոթանալու արբիտրաժային արդարադատությանը վերաբերող նորություններին, վերլուծություններին, ազգային դատարանների որոշումներին:

ԱՎՆԱՐԿ

ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱԾՏՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի հիմնադիրները, կառուցվածքը և արբիտրները

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը հիմնադրվել է 2023 թ. մայիսի 19-ին: Կենտրոնի հիմնադիրներն են.

1) «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամը՝ պետական գրանցման համար՝ 222.160.930235, գտնվելու վայրի հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան, 3/8, 0010,

2) «Հայ իրավաբանական միություն» կազմակերպությունը՝ գրանցման վկայականի համար՝ 1472207, գտնվելու վայրի հասցե՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կալիֆորնիա նահանգ, 91201, ք. Գլենդեյլ, Ալեն պողոտա, 1762,

3) «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» Ամերիկայի Միացյալ Նահանգների Դելավեր նահանգում գրանցված կազմակերպությունը (գրանցման վկայականի համար՝ 486313, վավերացված՝ 11.03.2020, գործունեության վայրի հասցե՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք նահանգ, 10022-1112, ք. Նյու Յորք, Արևելք, 59-րդ փողոց, 55:

Կենտրոնի մարմիններն են.

- 1) Հոգաբարձուների խորհուրդը,
- 2) Արբիտրաժային խորհուրդը,
- 3) տնօրենը:

Եթե փորձենք սխեմատիկորեն պատկերել Կենտրոնի հիմնադիրների ու կառավարման մարմինների դերն ու հարաբերակցությունը, ապա կստանանք հետևյալը.

Կենտրոնի բնականոն գործունեությունն իրականացվում է աշխատակազմի միջոցով, որը գործում է որպես քարտուղարություն, ապահովում արբիտրաժային և հաշտարարության գործերի վարումը:

Հոգաբարձուների խորհուրդը

Կենտրոնի Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է ինը անդամից, որոնք նշանակվում են երեք տարի ժամկետով: Հոգաբարձուների խորհրդի աշխատանքը համակարգում է Նախագահը, որին ընտրում է Հոգաբարձուների խորհուրդը՝ Հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ճայների մեծամասնությամբ: Նախագահը, կանոնադրությամբ իրեն վերապահված համակարգման մի շարք գործառույթներ կատարելուց

բացի, ստորագրում է խորհրդի որոշումները, տնօրենի հետ կնքում աշխատանքային պայմանագիր: Կենտրոնի Յոգաբարձուների խորհրդի անդամները (ներառյալ նախագահը) չեն համարվում Կենտրոնում պաշտոն զբաղեցնող անձ և իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով:

Յոգաբարձուների խորհուրդը ներկայացնում է վերաբերելի բիզնես դաշտը, հայկական սփյուռքը, մասնագիտական միավորումները, ինչը միտված է ապահովելու Կենտրոնի անկախությունը, բազմազանությունը և բիզնես միջավայրը:

Յոգաբարձուների խորհրդի անդամների առաջին կազմը ձևավորել են հիմնադիրները: Յոգաբարձուների խորհրդի երկրորդ և հաջորդ կազմերի ձևավորման մանրամասն կարգը սահմանվում է Կենտրոնի կանոնադրությամբ: Կենտրոնի Յոգաբարձուների առաջին խորհրդի կազմում ընդգրկված անձինք ներկայացնում են հետևյալ կազմակերպությունները՝ Կենտրոնի երեք համահիմնդիրները, ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ հանրային հեռուստատեսությունը, Առաջատար տեխնոլոգիաների ծեռնարկությունների միությունը, Կառուցապատողների հայկական ասոցիացիան, Հայաստանի օպերատորների միությունը, ՀՀ փաստաբանական ակադեմիան:

Յոգաբարձուների խորհրդի անդամը պաշտոնավարում է երեք տարի ժամկետով, եթե, օրենքով սահմանված այլ հիմքերով, լիազորությունները չեն դադարում ավելի շուտ: Բացի նշված դեպքից՝ Կենտրոնի կանոնադրությունը հնարավորություն է տալիս Յոգաբարձուների խորհրդի անդամների ձայների առնվազն 3/4-ով վաղաժամկետ դադարեցնելու իր պարտականությունները պատշաճ չկատարող խորհրդի անդամի լիազորությունները:

Կենտրոնի կանոնադրությունը նախատեսում է նաև Յոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամի ինստիտուտը: Պատվավոր անդամի կոչում շնորհում է Յոգաբարձուների խորհուրդը իրավաբանական գործունեության կամ գիտության ոլորտում բարձր հեղինակություն վայելող անձանց: Յոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամները Յոգաբարձուների խորհրդի աշխատանքներին կարող են մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

Այսպես, Յոգաբարձուների խորհուրդը կրում է ինչպես ՀՀ օրենսդրությամբ՝ հիմնադրամների խորհրդին վերապահված բոլոր լիազորությունները, այնպես էլ լիազորություններ, որոնք ուղղակիորեն բխում են Կենտրոնի առանձնահատկություններից ու բնույթից, որոնց մեջ հատկապես կարելի է առանձնացնել *Կենտրոնի ռազմավարական ծրագրերի հաստատումը, Կենտրոնի արբիտրաժային և հաշտարարության կանոնների հաստատումը, Կենտրոնի կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը, Կենտրոնի կառավարման մարմինների ձևավորումը, ինչպես նաև աշխատանքի ֆինանսատնտեսական կառավարման և վերահսկողության ամբողջական իրավասությունը:*

Արբիտրաժային խորհուրդը

Կենտրոնի՝ որպես արբիտրաժային հաստատության գործառնությունների կատարման հարցում առանցքային դերը պատկանում է Կենտրոնի Արբիտրաժային խորհրդին, որի քանակական կազմը, Կենտրոնի կանոնադրության համաձայն, հաստատում է Յոթաբարձուների խորհուրդը: Այսօր Արբիտրաժային խորհուրդը բաղկացած է տասը անդամից:

Արբիտրաժային խորհրդի անդամներին նշանակում է Յոթաբարձուների խորհուրդը չորս տարի ժամկետով: Արբիտրաժային խորհրդի քանակական կազմի սահմանման և առաջին կազմի թեկնածուների վերաբերյալ առաջարկները Յոթաբարձուների խորհրդին են ներկայացնում հիմնադիրները կամ տնօրենը Յոթաբարձուների խորհրդի կազմավորումից հետո երեք ամսվա ընթացքում:

Կենտրոնի Արբիտրաժային խորհրդի առաջին կազմի անդամներն են.

1. Գրանտ Յանեսայան (խորհրդի նախագահ, Նյու Յորք, ԱՄՆ)
2. Ռաֆիկ Գրիգորյան (խորհրդի փոխնախագահ, Երևան, ՀՀ)
3. Թոմաս Մնայդեր (Դուբայ, ԱՄԷ)
4. Յայկ Կուպելյանց (Լոնդոն, Միացյալ Թագավորություն)
5. Մնդրեա Կառլևարիս (Միլան, Իտալիա)
6. Գալինա Զուկովա (Ռիգա, Լատվիա)
7. Աիդա Ավանեսյան (Երևան, ՀՀ)
8. Արտյոմ Գեղամյան (Երևան, ՀՀ)
9. Արա Խզմալյան (Երևան, ՀՀ)
10. Յայկ Յովհաննիսյան (Երևան, ՀՀ)

Այսպես, Արբիտրաժային խորհուրդն ունի հետևյալ լիազորությունները.

- 1) սահմանում է արբիտրների և քարտուղարությունն ապահովող անձանց վարքագծի կանոնները,
- 2) ընդունում է Արբիտրաժային խորհրդի գործունեության կարգը,
- 3) Արբիտրաժային կանոններով սահմանված դեպքերում և կարգով հանդես է գալիս որպես նշանակող մարմին,
- 4) քննում է արբիտրների դեմ ներկայացված բացարկի դիմումներն ու որոշում է կայացնում արբիտրների բացարկի հարցերով, սահմանում է բացարկի քննության կարգը,
- 5) Կենտրոնի արբիտրաժային կանոններով նախատեսված դեպքերում և կարգով որոշում, հաստատում կամ փոփոխում է կոնկրետ արբիտրաժային գործի շրջանակում արբիտրների վարձատրության չափերը.

6) կատարում է Կենտրոնի կանոնադրությամբ, արբիտրաժային կանոններով, Արբիտրաժային խորհրդի գործունեության կարգով կամ Հոգաբարձուների խորհրդի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

Կենտրոնի արբիտրաժային կանոններով Արբիտրաժային խորհրդին են վերապահված նաև այնպիսի կարևոր գործառույթներ, ինչպիսիք են արբիտրների հաստատումը և նշանակումը, նրանց բացարկի հետ կապված որոշումների կայացումը, արբիտրաժային վարույթների միացման և արբիտրաժային վարույթի ժամկետների փոփոխության հարցերը:


Արբիտրաժային խորհրդում ներգրավված են ոլորտի մասնագետներ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից: Արբիտրաժային խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ամբողջ կազմով՝ բացառությամբ, Կենտրոնի արբիտրաժային կանոններով, տեղական համարվող վեճերի, որոնց կապակցությամբ որոշումները Արբիտրաժային խորհուրդը կայացնում է ազգային հանձնաժողովի կազմով:

Արբիտրաժային խորհրդի ազգային հանձնաժողովը ձևավորվում է Արբիտրաժային խորհրդի նախագահի որոշմամբ՝ Արբիտրաժային խորհրդի գործունեության կարգին համապատասխան: Արբիտրաժային խորհրդի ազգային հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել Արբիտրաժային խորհրդի ոչ պակաս, քան երեք անդամ: Արբիտրաժային խորհրդի ազգային հանձնաժողովի նիստերը նախագահում է դրա՝ Արբիտրաժային խորհրդի նախագահի որոշմամբ նշանակված անդամը՝ ազգային հանձնաժողովի առնչությամբ կատարելով բոլոր այն գործառույթները, որ վերապահված են Արբիտրաժային խորհրդին: Արբիտրաժային խորհրդի ազգային հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետները, դադարեցման հիմքերն ու կարգը, Արբիտրաժային խորհրդի գործունեության հետ կապված այլ կարգավորումները տրվում են Կենտրոնի կանոնադրությամբ:

Եթե արբիտրաժային խորհրդի գործունեության կարգով այլ քվորում չի սահմանվում, ապա Արբիտրաժային խորհրդի, ներառյալ ազգային հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Արբիտրաժային խորհրդի կամ ազգային հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին, իսկ որոշումները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

Եթե փորձենք սխեմատիկորեն պատկերել Արբիտրաժային խորհրդի կառուցվածքն ու իրավազորությունների բաժանումը, ապա կստանանք հետևյալը.

Արբիտրաժային խորհուրդ



Արբիտրաժային խորհրդի գործունեությունը համակարգում են խորհրդի նախագահը և փոխնախագահը: Արբիտրաժային խորհրդի նախագահին և փոխնախագահին ընտրում է Հոգաբարձուների խորհուրդը՝ Արբիտրաժային խորհրդի անդամների առնվազն կեսից ավելիի նշանակվելուց հետո: Արբիտրաժային խորհրդի նախագահը և փոխնախագահը պաշտոնավարում են մինչև իրենց՝ որպես Արբիտրաժային խորհրդի անդամի լիազորությունների դադարումը: Հոգաբարձուների խորհուրդը կարող է դադարեցնել Արբիտրաժային խորհրդի նախագահի կամ փոխնախագահի լիազորությունները առանց Արբիտրաժային խորհրդի կազմից անձին հեռացնելու, եթե նրանք նման դիմում են ներկայացրել Հոգաբարձուների խորհրդին, ինչպես նաև երբ Արբիտրաժային խորհրդի նախագահը կամ փոխնախագահը պատշաճ չեն կատարում իրենց գործառնությունները:

Կենտրոնի արբիտրները

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը սահմանում է արբիտրին ներկայացվող նվազագույն պահանջներ: Օրենքի համաձայն՝ արբիտր կարող է լինել 25 տարին լրացած, բարձրագույն կրթություն ունեցող յուրաքանչյուր գործունակ ֆիզիկական անձ: Արբիտր չի կարող լինել դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված, հանցագործություն կատարելու համար դատապարտված անձը, ինչպես նաև այն անձը, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում: Այսօր Կենտրոնի արբիտրների ցանկում ներառված արբիտրները, ներկայացված նվազագույն պահանջներից բացի, որպես կանոն, ունեն նվազագույնը տասը տարվա մասնագիտական աշխատանքի փորձ, ներկայացնում են տարբեր երկրներ, տիրապետում են մեկից ավելի աշխատանքային լեզուների, ներգրավված են այլ արբիտրաժային հաստատությունների

արբիտրների ցանկում, ունեն ոլորտում փորձառություն ևն: Կենտրոնի արբիտրների ցանկը, արբիտրների աշխատանքային փորձը, կենսագրական տվյալներն ու կոնտակտային տվյալներն առկա են Կենտրոնի պաշտոնական կայքէջում հետևյալ հղմամբ՝ <https://amca.am/arbitration/>:

Տևորենը

Տևորենը ղեկավարում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը, իրականացնում ՀՀ օրենսդրությամբ՝ ընկերության գործադիր մարմնի ղեկավարին վերապահված բոլոր իրավասությունները, կազմակերպում Հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը, իրականացնում է Կենտրոնի արբիտրաժային կանոններով արբիտրաժային հաստատության Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունները (հանդես է գալիս որպես Գլխավոր քարտուղար) և կազմակերպում է Քարտուղարության աշխատանքները, Հոգաբարձուների խորհրդին և Արբիտրաժային խորհրդին ապահովում է գործունեության կազմակերպման տեխնիկական և այլ անհրաժեշտ միջոցներով:

Տևորենն իր գործունեության համար հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին, այլ կազմակերպություններում կարող է զբաղեցնել վճարովի պաշտոններ՝ միայն Հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ, բացառությամբ գիտական, ստեղծագործական և մանկավարժական գործունեության:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի առաքելությունը, նպատակները, գործունեության ուղղություններն ու բացառիկությունը

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը՝ որպես մշտապես գործող արբիտրաժային հաստատություն, նպատակ ունի երաշխավորելու ներպետական և միջազգային արբիտրաժային վարույթների և հաշտարարության իրականացումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը:

Կենտրոնի գործունեության նպատակները սահմանվում են իր կանոնադրությամբ: Կանոնադրական նպատակներին զուգահեռ՝ նրա խնդիրներից է արբիտրաժը Հայաստանում դարձնել վեճերի լուծման նախընտրելի այլընտրանք:

Անկախ Հայաստանի պատմության ընթացքում արբիտրաժային արդարադատության ձևավորմանն ու կայացմանն ուղղված քայլեր կատարվել են, սակայն դրանք շատ փոքր են, եթե հաշվի առնենք աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները և այս ինստիտուտի սրընթաց զարգացումը: Թեև ստեղծվել են օրենսդրական որոշակի հիմքեր ու հիմնվել են արբիտրաժային հաստատություններ, սակայն թե՛ նեղ մասնագիտական, թե՛ հանրային լայն շրջանակներում չկա բավարար չափով իրազեկվածություն արբիտրաժի

և նրա առավելությունների մասին. ոլորտի զարգացումը կարծես թե թողնված է եղել ինքնահոսի:

Պրակտիկայում իրավաբանների՝ որպես գործարքներն ուղեկցող իրավախորհրդատուների՝ արբիտրաժային համաձայնություն կնքելու առաջարկին, որպես կանոն, տնտեսվարողները տալիս են հետևյալ պատասխանը. «Թանկ է. վեճը թողնենք դատարաններին»: Սակայն նման պատասխաններին հազվադեպ են նախորդում խորքային վերլուծություններ՝ արդյոք դա այդպես է, թե ոչ, ինչպես նաև հազվադեպ են հաջորդում բացատրություններ առ այն, որ ընկալումը սխալ է: Նման մոտեցումը վկայում է թե իրավաբանների, թե տնտեսվարողների շրջանում ինստիտուտի վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակի մասին: Կենտրոնի առաջնային նպատակներից մեկը արբիտրաժի՝ որպես վեճերի լուծման այլընտրանքի դերի, կարևորության, արդյունավետության ու առավելությունների մասին իրազեկելն է իրավաբաններին, տնտեսվարողներին, ուսանողներին, ոլորտով հետաքրքրված անձանց ու հանրության լայն շերտերի: Այս նպատակին հասնելու համար նախաձեռնվել ու շարունակաբար անցկացվելու են բազմաբնույթ միջոցառումներ, դասընթացներ, իրազեկման արշավներ, քննարկումներ, ստեղծվելու և տարածվելու են տպագիր ու մեդիա նյութեր ևն: Կենտրոնը նպատակ ունի օժանդակելու բուհերում կրթական ծրագրերի ներդրմանը, ձեռնարկների, հետազոտական նյութերի և ուղեցույցների ստեղծմանն ու տարածմանը, կազմակերպելու միջազգային ու ներպետական գիտաժողովներ, աշխատաժողովներ, դատախազեր, մասնագիտական վերապատրաստումներ, որոնք կկատարելագործեն ոլորտում ներգրավված անձանց գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև առավել լայն շրջանակի անձանց մեջ կառաջացնեն հետաքրքրություն ոլորտի նկատմամբ:

Կենտրոնը նպատակ ունի դառնալու ոչ միայն վեճերի լուծման, այլև ոլորտի զարգացման առաջամարտիկ, ինչի համար շարունակաբար անցկացնելու է ոլորտի մոնիթորինգ, առկա խնդիրների խորքային ուսումնասիրություն, վերհանելու է դրանց պատճառները, գիտահետազոտական ու պրակտիկ մակարդակներում ստեղծելու է նյութեր, ուսումնասիրելու է միջազգային լավագույն փորձն ու ներդրելու Հայաստանում: Այս աշխատանքներին զուգահեռ՝ Կենտրոնը նախաձեռնել ու շարունակելու է նախաձեռնել օրենսդրական դաշտի բարելավմանն ուղղված քայլեր՝ առաջարկների, քննարկումների, աշխատաժողովների, արշավների ևն միջոցով՝ համագործակցելով ոլորտի կարգավորմանն ու աջակցությանը ներգրավված հանրային ու մասնավոր օղակների, գիտաշխատողների, փորձագետների, պետական մարմինների հետ:

Վերը նշված գործիքների օգտագործմամբ՝ Կենտրոնի նպատակն է.

- նպաստել տարբեր ոլորտներում վեճերի մասնագիտացված լուծմանը,
- ապահովել ավելի բարենպաստ ներդրումային միջավայր,
- բարձրացնել Հայաստանի՝ որպես վեճերի լուծման հարթակի համբավը,
- նպաստել դատական համակարգի ծանրաբեռնվածության նվազմանը,

- ընդլայնել էլեկտրոնային գործիքակազմերի և թվային տեխնոլոգիաների կիրառումը ոչ միայն արբիտրաժային վարույթում, այլև արդարադատության համակարգում:

Դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և որպես դատարանների այլընտրանք՝ արբիտրաժի զարգացման գործում կարևոր է նաև արբիտրաժային հաստատություններին վերապահված գործերի շրջանակի ընդլայնման հարցը, որը Կենտրոնի խնդիրներից մեկն է: Ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում արբիտրաժային տրիբունալներին ենթակա են առևտրային բնույթի վեճերը օրենքով սահմանված շրջանակում: Դրանից ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են մնում մտավոր սեփականության ոլորտը, տեղեկատվական տեխնոլոգիաների, կրիպտոարժույթների, արհեստական բանականության կիրառության անչությամբ իրավահարաբերությունները, անձնական տվյալների պաշտպանությունը, պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանությունը, սպառողների իրավունքների պաշտպանությունը հատկապես էլեկտրոնային առևտրի ոլորտում, բնապահպանական ոլորտը, ներառյալ հանքարդյունաբերությանը վերաբերող մի շարք վեճեր: Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես այս ոլորտներում մեծ է արբիտրաժային համաձայնությունների կնքման դեպքերի և արբիտրաժային վեճերի քանակը: Համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են «Netflix»-ը, «Google»-ը, «Meta»-ն, «Amazon»-ը, իրենց օգտատերերի հետ միացման պայմանագրերով կնքում են հենց արբիտրաժային համաձայնություններ՝ դրանցից բխող բոլոր տեսակի վեճերը հանձնելով արբիտրաժին: Որպեսզի ծավալների մասին հնարավոր լինի պատկերացում կազմել, բավարար է բերել մեկ օրինակ. ձայնային օգնական Ալեքսայի (Alexa)՝ հաճախորդներին առանց համաձայնության ձայնագրելու վեճով էլեկտրոնային առևտրի համաշխարհային հարթակ «Ամազոն» (Amazon) ընկերության դեմ ներկայացվել է շուրջ 75.000 արբիտրաժային հայց:

Կենտրոնն իր առջև դրած խնդիրների լուծման ճանապարհին իրավունք ունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝ ստացված չափույթն ուղղելով նպատակների իրագործմանը.

- 1) իրավաբանական գործունեություն (ներառյալ, բայց չսահմանափակվելով, արբիտրաժի և վեճերի լուծման այլընտրանքային այլ մեխանիզմների միջոցով վեճերի լուծում, փաստաթղթերի պատրաստում, խորհրդատվություն),
- 2) խորհրդատվական գործունեություն տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում,
- 3) գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում,
- 4) մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն՝ մյուս խմբերում չներառված,

- 5) գրքերի, թերթերի, ամսագրերի, տեղեկագրերի, պարբերականների հրատարակում և հրատարակչական այլ գործունեություն,
- 6) գովազդային գործունեություն,
- 7) սեփական և վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլ գործառնություններ,
- 8) գրասենյակային մեքենաների և սարքավորանքի, ներառյալ համակարգիչները, վարձույթ և լիզինգ,
- 9) վեհաժողովների կազմակերպում,
- 10) նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման դասընթացներ:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի գործունեության առանցքային նպատակների, ինչպես նաև անցկացրած հիմնական միջոցառումների ուսումնասիրությունը ցույց է տալիս Կենտրոնի՝ արբիտրաժի և հաշտարարության ոլորտում իրականացվող գործունեության բացառիկությունը: Մասնավորապես.

1) Կենտրոնը արբիտրաժային միակ հաստատությունն է ՀՀ-ում, որի հիմնադիրների կազմում են նաև ԱՄՆ-ում գրանցված կազմակերպությունները, որոնք Նշված ոլորտներում շարունակաբար անցկացրել են տարբեր միջոցառումներ՝ աջակցելով ՀՀ-ին:

2) Կենտրոնը արբիտրաժային միակ հաստատությունն է ՀՀ-ում, որի մարմինների՝ Հոգաբարձուների խորհրդի և Արբիտրաժային խորհրդի կազմերում ընդգրկված են արբիտրաժի և հաշտարարության ոլորտում հանրահայտ միջազգային և տեղացի մասնագետներ, որոնք անմիջական ազդեցություն են ունենալու Կենտրոնի գործունեության վրա:

3) Կենտրոնը հաշտարարության կանոնների ընդունումից ամիսներ անց ունի հաշտարարության չորս ավարտված գործ, որոնց թվում միջազգային հաշտարարության մեկ գործ:

4) Կենտրոնը արբիտրաժային միակ հաստատությունն է, որը 2023-ին՝ իր ստեղծումից ամիսներ անց, ՀՀ-ում առաջին անգամ մասնակցել է «Արբիտրաժային շաբաթ»-ին, դրա շրջանակում միջազգային կոնֆերանսի կազմակերպմանը՝ հյուրընկալելով շուրջ 200 մասնակիցների և նրանց ծանոթացնելով Կենտրոնի գործունեությանը:

5) Կենտրոնը միջազգային այցերի, քննարկումների և հանդիպումների շնորհիվ ընկալվում է որպես ՀՀ-ում մշտական արբիտրաժային կայուն հաստատություն և ՀՀ-ում արբիտրաժի և հաշտարարության ոլորտի զարգացման առաջամարտիկ, որը կարող է ներգրավվել և քննել նաև միջազգային գործեր:

6) Կենտրոնը կրթական, վերապատրաստման և նմանատիպ այլ միջոցառումների շնորհիվ կարողացել է թիրախավորել աննախադեպ թվով մասնակիցների և ոլորտներ:

7) Կենտրոնը բացառիկ է վեճերի լուծման այլընտրանքային եղանակների շրջանակում թվային լուծումներ ներդնելու քայլերով:

Իր առաքելության կատարման համար Կենտրոնում ստեղծվել են տեխնիկական անհրաժեշտ պայմաններ, ներդրվել է ժամանակի պահանջներին համահունչ գործիքակազմ:

Այսպես, Կենտրոնի աշխատանքների և արբիտրաժային վարույթների պատշաճ և արդյունավետ կազմակերպման համար ներդրվել է Էլեկտրոնային Նոր և ժամանակակից հարթակ, որի «Օնլայն դիմում» և «Փաստաթղթաշրջանառություն» մոդուլները արբիտրաժի կողմերին հնարավորություն են տալիս Կենտրոնի հետ հաղորդակցվելու առցանց՝ կազմակերպելով գործի վարույթը, օրինակ՝ հայցի, պատասխանի, այլ փաստաթղթերի կամ ապացույցների ներկայացում:

Էլեկտրոնային հարթակի «Գործի կառավարում» մոդուլը նախատեսված է Կենտրոնի աշխատակազմի՝ արբիտրաժային վարույթների Էլեկտրոնային ադմինիստրացիայի ապահովման նպատակով, օրինակ՝ հիշեցումներ, նշանակումներ, աշխատանքի բաշխում:

Կենտրոնի ծառայություններից օգտվելը առավել հարմարավետ դարձնելու նպատակով ապահովվել են շենքային լավագույն պայմանները՝ ժամանակակից նիստերի սրահից սկսած, տեխնիկական լիարժեք հագեցվածությամբ ավարտած:

Այսպես, ընդհանրացնելով վերը նշվածը, կարող ենք պնդել, որ Կենտրոնն ունի բոլոր նախադրյալները ոչ միայն արբիտրաժային արդարադատության ոլորտում դառնալու տարածաշրջանային առաջամարտիկ, այլև նպաստելու իրավունքի ու իրավական մտքի զարգացմանը: Կենտրոնի թիրախում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, մտավոր սեփականությունը, անձնական տվյալների պաշտպանությունը, Էլեկտրոնային հարթակների, ներառյալ առևտրային հարթակների գործունեության կանոնակարգումն ու սպառողների իրավունքների պաշտպանությունը, կրիպտոարժույթների շրջանառությանը վերաբերող խնդիրները, արհեստական բանականության կիրառմամբ առաջացած բազմաթիվ իրավական խնդիրներ, բնապահպանական խնդիրները, ներառյալ հանքարդյունաբերական ոլորտում առկա հակասական մոտեցումները են: Այս և մի շարք ոլորտների իրավական կարգավորումն ու դատական պրակտիկան չափազանց դանդաղ են զարգանում, հետ են մնում արագ զարգացման տեմպից, դառնում ժամանակավրեպ և ուշացած:

Իսկ ինչո՞վ կարող է Կենտրոնն իր նպաստը բերել: Վերը նշված ոլորտներում արբիտրաժային տրիբունալի պրոֆեսիոնալ ու արագ աշխատանքը կբերի իրավական սկզբունքների մեկնաբանման ու կիրառման Նոր պրակտիկա, որը կներառի նաև օտարերկրյա լավագույն փորձն ու ժամանակակից լուծումները: Սա ազդեցիկ գործոն կլինի օրենսդրական դաշտի կատարելագործման, դատարանների՝ Նոր իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի կայացումն ու զարգացումը մեծ կարևորություն ունի նաև հայ տնտեսվարողների համար, որոնք ունեն օտարերկրյա գործընկերներ: Նրանք երբեմն ստիպված են լինում համաձայնել օտարերկրյա

արբիտրաժային հաստատությունների միջոցով վեճի լուծմանը, ինչը հայ տնտեսվարողի համար անհամեմատ մեծ ֆինանսական բեռ է, և հաճախ նրանց պաշտպանությունը դարձնում է ոչ հասանելի: Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի նկատմամբ վստահության առկայության պայմաններում հայ տնտեսվարողները կստանան հնարավորություն առանց մտավախությունների և սեփական իրավունքների պաշտպանությունից «հրաժարվելու» արբիտրաժային համաձայնություններ կնքելու և հավասար պայմաններով բանակցելու օտարերկրյա գործընկերների հետ՝ գործարքի պայմանների ու վեճերի լուծման մեխանիզմների շուրջ:

Հավելված 1

Արբիտրաժ իրականացնելու պահանջի օրինակելի ձև

ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾ

[ՀԱՅՅՎՈՐԻ ԱՆՈՒՆԸ]

(ՀԱՅՅՎՈՐ)

ԵՎ

[ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ]

(ՊԱՏԱՍԽԱՆՈՂ)

ՄԻՋԵՎ

ԱՐԲԻՏՐԱԺ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅԱՆՋ

[Արբիտրաժ իրականացնելու պահանջի ամսաթիվը]

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արբիտրաժ իրականացնելու սույն պահանջը ներկայացվում է [հայցվորի անունը/անվանումը] (այսուհետ՝ հայցվոր) անունից՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային կանոնների (այսուհետ՝ Արբիտրաժային կանոններ) 5-րդ հոդվածի համաձայն, ընդդեմ [պատասխանողի անունը/անվանումը] (այսուհետ՝ պատասխանող, միասին կոչվեր):

2. Արբիտրաժ իրականացնելու սույն պահանջը պարունակում է տեղեկություն հետևյալի վերաբերյալ.
 - i. Կողմերից յուրաքանչյուրի անունը/անվանումը, կոնտակտային տվյալները և հասցեն (II)

 - ii. Պահանջների հիմքում ընկած վեճի բնույթի և փաստական հանգամանքների նկարագրությունը (III)

 - iii. Վեճի լուծման վերաբերյալ արբիտրաժային վերապահումը, կիրառելի իրավունքը, դրույթներ արբիտրաժի վայրի և լեզվի վերաբերյալ (կողմերի միջև կնքված համաձայնությունը և վերաբերելի այլ համաձայնություններ) (IV)

 - iv. Արբիտրաժային տրիբունալի ձևավորման կարգը (V)

 - v. Հայցապահանջ (VI)

 - vi. Հայցվորի կատարած վճարները (VII)

II. ԿՈՂՄԵՐԸ

Ա. Հայցվոր

3. Հայցվորի տվյալներն են.

[Հայցվորի լրիվ անունը/անվանումը]

[Հայցվորի հասցեն/իրավաբանական հասցեն]

[Հայցվոր ֆիզիկական անձի անձնագրային տվյալները/իրավաբանական անձի դեպքում ՅՎՀՀ-ն, պետական գրանցման համարը (առկայության դեպքում)]

[Հայցվոր կազմակերպության տնօրենի անունը (միայն իրավաբանական անձանց պարագայում)]

[Հայցվորի հեռախոսահամարը]

[Հայցվորի էլեկտրոնային փոստի հասցեն]

[Հայցվորի համար ծանուցումների նախընտրելի միջոցը և ծանուցման համար անհրաժեշտ տեղեկությունը]

4. Հայցվորի ներկայացուցչի (առկայության պարագայում) տվյալներն են.

[Հայցվորի ներկայացուցչի անունը]

[Հայցվորի ներկայացուցչի հեռախոսահամարը]

[Փաստաբանական արտոնագրի համարը]

[Հայցվորի ներկայացուցչի էլեկտրոնային փոստի հասցեն]

[Այլ տեղեկություններ]

[Լրացուցիչ տվյալներ՝ անհրաժեշտության դեպքում]

Բ. Պատասխանող

5. Պատասխանողի տվյալներն են.

[Պատասխանողի լրիվ անունը/անվանումը]

[Պատասխանողի հասցեն/իրավաբանական հասցեն]

[Պատասխանող ֆիզիկական անձի անձնագրային տվյալները/իրավաբանական անձի դեպքում ՅՎՀՀ-ն, պետական գրանցման համարը (առկայության դեպքում)]

[Պատասխանող հանդիսացող կազմակերպության տնօրենի անունը (միայն իրավաբանական անձանց պարագայում)]

[Պատասխանողի հեռախոսահամարը]

[Պատասխանողի էլեկտրոնային փոստի հասցեն]

III. ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ՎԵՃԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Ա. Նախապատմություն և փաստական հանգամանքներ

6. [Ներկայացրե՞ք պատասխանողի այն գործողությունները (անգործություն), որ առաջացրել են արբիտրաժ իրականացնելու սույն պահանջում ներկայացվող կետերը]

Բ. Պահանջի իրավական հիմքը

7. [Ներկայացրե՞ք պատասխանատվության հիմքը՝ պայմանագրային կամ այլ]

Գ. Պատասխանողի՝ պարտավորությունների խախտումը

8. [Ներկայացրե՞ք պատասխանողի՝ պարտավորությունների խախտումը]

[Ներկայացրե՞ք հայցվորի կրած վնասը, որն առաջացել է պատասխանողի՝ պարտավորությունների խախտման փաստի հիմքով]

Հայցվորի կրած վնասի ընդհանուր չափը կազմում է [ավելացրե՞ք վնասի չափը]:

IV. ՎԵՃԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՅՈՒՄԸ, ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԱՐԲԻՏՐԱԺԻ ԼԵՂՈՒՆ ԵՎ ՎԱՅՐԸ

Ա. Արբիտրաժային վերապահումը

9. Արբիտրաժ իրականացնելու սույն պահանջի կապակցությամբ արբիտրաժային վարույթը նախաձեռնվում է՝ հիմք ընդունելով կողմերի միջև առկա արբիտրաժային համաձայնությունը [կցված], որը նախատեսում է:
10. [ՅԱՅԵՑՈՂԱԿԱՆ: Որոշ դեպքերում արբիտրաժային վարույթը կարող է նախաձեռնվել միայն այն պարագայում, երբ հայցվորը նախքան Արբիտրաժ իրականացնելու պահանջի ներկայացումը կատարել է համաձայնությամբ ստանձնած որոշ պարտավորություններ, օրինակ՝ փորձել է վեճը լուծել բանակցությունների կամ այլ խաղաղ եղանակով: Այդպիսի դեպքում ներկայացրե՞ք համապատասխան ապացույցներ առկա պայմանները պահպանելու վերաբերյալ]

Բ. Արբիտրաժի վայրը

11. Ըստ արբիտրաժային համաձայնության [և՛ շեք արբիտրաժային համաձայնության այն հոդվածը, որտեղ նախատեսված է արբիտրաժի վայրը] հոդվածի՝ արբիտրաժի վայրն է՝ [և՛ շեք քաղաքը և պետությունը]:
12. [ՆՇՈՒՄ: Հայցվորը կարող է ավելացնել արբիտրաժի վայրի վերաբերյալ ցանկացած այլ նկատառում]

Գ. Կիրառելի իրավունքը

13. Արբիտրաժային համաձայնությունը կարգավորվում է [և՛ շեք՝ որ երկրի իրավունքն է կիրառվում պայմանագրի նկատմամբ] օրենսդրությամբ՝ ըստ [և՛ շեք արբիտրաժային համաձայնության հոդվածը, որտեղ դա ներկայացված է], որը սահմանում է հետևյալը.

[Ամբողջությամբ և՛ շեք այն դրույթները, որտեղ սահմանված է կիրառելի իրավունքը]

14. [ՆՇՈՒՄ: Հայցվորը կարող է ավելացնել կիրառելի իրավունքի վերաբերյալ ցանկացած այլ նկատառում]

Դ. Արբիտրաժի լեզուն

15. Ըստ արբիտրաժային համաձայնության [նշեք արբիտրաժային համաձայնության հոդվածը, որտեղ նշված է արբիտրաժի [եզուն] հոդվածի՝ արբիտրաժի [եզուն] [ավելացրեք արբիտրաժի [եզուն]] է:
16. [ՆՇՈՒՄ: Հայցվորը կարող է ավելացնել արբիտրաժի [եզվի վերաբերյալ ցանկացած այլ նկատառում]

**V. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ [ՆՇՈՒՄ:
ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾ]**

17. Ըստ արբիտրաժային համաձայնության [նշեք արբիտրաժային համաձայնության հոդվածը, որը նախատեսում է տրիբունալի ձևավորման կարգ] հոդվածի՝ [ներկայացրեք համաձայնության մեջ առկա դրույթները՝ տրիբունալի ձևավորման վերաբերյալ, ներառյալ արբիտրների թիվը, եթե նշված է արբիտրաժային վերապահման մեջ, և նշանակման կարգը:]

[ՆՇՈՒՄ: Եթե կողմերը նախկինում համաձայնության չեն եկել արբիտրաժային տրիբունալի կազմի շուրջ, հայցվորը պետք է առաջարկներ ներկայացնի արբիտրների թվի, նշանակման կարգի և ընտրության վերաբերյալ՝ Կանոնների 13-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին համապատասխան]

18. [ՆՇՈՒՄ: Այն պարագայում, երբ արբիտրաժային համաձայնությունը նախատեսում է մեկ արբիտրից բաղկացած արբիտրաժային տրիբունալի ձևավորում]

Ըստ [նշեք արբիտրաժային համաձայնության այն դրույթը, որը նախատեսում է տրիբունալի ձևավորումը] և Արբիտրաժային կանոնների 14-րդ հոդվածի՝ հայցվորն առաջադրում է [առաջարկվող միանձնյա արբիտրի անունը]՝ որպես միանձնյա արբիտրի, հաստատման համար: Ըստ հայցվորի իմացության՝ [առաջարկվող արբիտրի անունը] անկախ է սույն արբիտրաժային գործում ներգրավված կողմերից: [Առաջադրված արբիտրի անունը] կոնտակտային տվյալները հետևյալն են.

[Միանձնյա արբիտրի անունը]

[Միանձնյա արբիտրի հասցեն]

[Միանձնյա արբիտրի հեռախոսահամարը]

[Միանձնյա արբիտրի էլեկտրոնային փոստի հասցեն]

19. [ՆՇՈՒՄ: Այն պարագայում, երբ արբիտրաժային համաձայնությունը նախատեսում է երեք արբիտրներից բաղկացած արբիտրաժային տրիբունալի ձևավորում]
20. Ըստ [նշեք արբիտրաժային համաձայնության այն դրույթը, որը նախատեսում է տրիբունալի ձևավորումը] և Արբիտրաժային կանոնների 14-րդ հոդվածի՝ հայցվորն առաջադրում է [առաջարկվող համաարբիտրի անունները] որպես արբիտրների, հաստատման համար: Ըստ հայցվորի իմացության՝ [առաջարկվող արբիտրների անունները] անկախ են սույն արբիտրաժային գործում ներգրավված կողմերից: [Առաջադրված արբիտրների անունները] կոնտակտային տվյալները հետևյալն են.

[Արբիտրի անունը]

[Արբիտրի հասցեն]

[Արբիտրի հեռախոսահամարը]

[Արբիտրի էլեկտրոնային փոստի հասցեն]

[Արբիտրի անունը]

[Արբիտրի հասցեն]

[Արբիտրի հեռախոսահամարը]

[Արբիտրի էլեկտրոնային փոստի հասցեն]

[Արբիտրի անունը]

[Արբիտրի հասցեն]

[Արբիտրի հեռախոսահամարը]

[Արբիտրի էլեկտրոնային փոստի հասցեն]

VI. ՀԱՅՑԱՊԱՀԱՆՁ

21. Այսպիսով, հայցվորը խնդրում է արբիտրաժային տրիբունալին կայացնել վճիռ հետևյալի մասին.

- i. Արբիտրաժային տրիբունալն իրավասու է քննելու կողմերի միջև առկա սույն վեճը:
- ii. Պատասխանողը խախտել է իր պարտավորությունները, մասնավոր-

րապես՝ [նկարագրեք պատասխանողի պատասխանատվության հիմքը]:

- iii. Պատասխանողին պարտավորեցնել փոխհատուցել հայցվորի կրած այն վնաս(ներ)ը և/կամ կորուստ(ներ)ը, որ պատասխանողը պատճառել է պայմանագրի խախտման հետևանքով: Գնահատվում է [հայցվորի կրած վնասի գնահատումը]:
- iv. Պատասխանողին պարտավորեցնել կատարել արբիտրաժային վարույթին առնչվող բոլոր վճարները, ներառյալ հայցվորի ներկայացուցչի ծախսերը:
- v. [Չայեցողական] Պարտավորեցնել պատասխանողին վճարել [նշեք պայմանագրով նախատեսված տոկոսների չափը]՝ սկսած վճարման պարտավորության առաջնալու պահից մինչև վճարում կատարելու պահը՝ համաձայն [նշեք իրավական հիմքը]:
- vi. Չայցվորը պահպանում է ցանկացած պահանջ ներկայացնելու իր իրավունքը, որ բխում է արբիտրաժ իրականացնելու սույն պահանջում նկարագրված վիճելի հարցերից կամ առնչվում է դրանց կամ այլ կերպ ծագել կամ կարող է ծագել կողմերի միջև:
- vii. Փոփոխել կամ լրացնել ներկայացված հայցապահանջը:
- viii. Ներկայացնել այնպիսի փաստական կամ իրավական փաստարկներ և/կամ ապացույցներ (ներառյալ վկաների ցուցմունքները, փորձագետի եզրակացությունները և այլ փաստաթղթեր), որոնք կարող են անհրաժեշտ լինել գործը ներկայացնելիս կամ պատասխանողի ներկայացրած ցանկացած գործ հերքելու համար:
- ix. Դիմել հայցի ապահովման միջոցներ կիրառելու միջնորդությամբ այս արբիտրաժային տրիբունալին կամ որևէ իրավասու ազգային դատարանի:

VII. ՎճԱՐՆԵՐԸ

22. Չամաձայն Արբիտրաժային կանոնների հավելված 1-ի՝ հայցվորը ներկա-

յացնում է ՀՀ դրամի չափով արբիտրաժային վճարները կատարած լինելու
մասին ապացույց:

Հարգանքով՝

[Հայցվորի և/կամ ներկայացուցչի անունը]

[Հայցվորի և/կամ ներկայացուցչի ստորագրությունը]

[ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ]
ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է

	Փաստաթղթի տեսակը/մանրամասները	Էջերի քանակը
1.	[.]	

60 ՀԱՐՑ

ԱՐԲԻՏՐԱՎԺԻ ՄԱՍԻՆ

(ՁԵՌՆԱՐԿ)

60 QUESTIONS

ABOUT ARBITRATION

(MANUAL)

ISBN 978-9939-1-1823-9



**ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՆՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Երևան, 0069, Արշակունյաց պողոտա 51, 47 տարածք

www.amca.am